3174

2003

2011

20
Հ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ՀԱՅ-ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒՏԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՒՈՅ՝ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ։

53

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ԵՒ ՁՈՒԼԱՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԲԷԿԻ
1900.

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ՀԱՅ-ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒՏԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՒՈՅ՝ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ։

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ԵՒ ՁՈՒԼԱՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԲԷԿԻ.
1900.

ՏՊԱԳՐՈՒԱԾ Է ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒՏԵՐԱԿԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ:

ПЕЧАТАНО ПО РАСПОРЯЖЕНІЮ ЕВАНГ.-ЛЮТЕР. ГЕНЕРАЛЬНОЙ КОНСИСТОРІИ.

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ։

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԳԵՐ։

1. ՂՈՒԿ. 2, 14. *Փառք Աստուծոյ ի բարձունս, և երկրի վերայ խաղաղութիւն, և մարդկանց մէջ հաճութիւն։*

1. Միայն Աստծոյն փառք ի բարձունս,
Գոհութիւն վասն իւր շնորհաց.
Զի այժմ և միշտ ի փորձութիւնս
Կրմընանք անշարժ պահուած.
Արդ մարդկանց մէջ է հաճութիւն,
Մեծ և անվերջ խաղաղութիւն.
Արդ կատարուեց հաշտութիւն։

2. Մենք օրհնում և պաշտում ենք քեզ,
Որ քո փառքըդ յայտնեցիր.
Ով Հա՛յր Աստուած, դու իշխում ես
Ամենի վրայ անխըտիր.
Զօրութիւն քո համատարած,
Ամեն ինչ է ըստ քո կամաց.
Ողորմիր մեզ, Հայր Աստուած։

3. Յիսուս Քրիստոս, դո՛ւ միածին
Որդի հզօր Աստուծոյ.
Որոնող ես կորածներին
Եւ պաշտպան դատին մերոյ.
Գառն Աստուծոյ, Փրկիչ գըթած,
Լըսիր ձայն մեր հառաչանաց,
Ողորմիր, Որդի Աստուած։

4. Ով սուրբ Հոգի, դու մեծ Պարգև,
Մըխիթարիչ բազմաշնորհ.
Պաղատում ենք քո առաջև,
Սատանից պահիր այսօր.
Զի թանգ արեամբ ենք ազատուած,
Գերութիւնից ծախու առնուած.
Ողորմիր մեզ, Հոգի Աստուած:

2. ԱՄԲԱԿ. 2, 20. Տէրը իւր սուրբ տաճարումն է. լռիր Նորա առջև. ով բոլոր երկիր:

1. Աստուած աստ ներկայ է.
Եկէք՝ երկրպագենք,
Եւ երկիւղած առաջն ելնենք.
Աստուած մեր միջումն է.
Թող մեզնում ամէն բան
Լուռ և անձայն խոնարհուէ Նրան.
Նրան պաշտողն,
Նրան կանչողն
Իւր աչքերն խոնարհէ,
Եւ Նրան սիրտը զոհէ:

2. Աստուած աստ ներկայ է.
Նրան պաշտեն Քերովբէք,
Եւ ծառայեն գիշեր, ցերեկ.
Սուրբ, սուրբ, սուրբ է Աստուած.
Հրեշտակք քաղցր ձայնիւ
Երգումեն Նրան փառք և պատիւ.
Տէր, լսի՛ր,
Ընդունիր,

Երբ մենք անարժաններ
Կըբերենք մեր զոհեր.

3. Մենք մերժումենք կամաւ
Ամէն ունայնութիւն
Եւ աշխարհքիս ուրախութիւն.
Դու իշխի՛ր մեր կամքին.
Մեր անձն դո՛ւ փրկեցիր,
Դու ինքդ էլ սեփականիր.
Դո՛ւ միակ,
Սուրբ էակ,
Մեր Տէրն ես և Աստուած,
Արժանի ես փառաց:

4. Ո՛վ հրաշափառ էակ,
Տո՛ւր քեզ պաշտեմ ուղիղ,
Կամաւ ընտրեմ քո սուրբ շաւիղ.
Ա՜խ թէ որպէս հրեշտակք
Քո առջևը կանգնեմ,
Ներկայութիւնդ ես միշտ տեսնեմ,
Միշտ ջանամ
Եւ բաղձամ
Լինել քեզ հաճելի,
Աստուած իմ սիրելի:

5. Հո՛գի, մեզ լիացնող,
Ի քեզ շարժենք և կանք.
Դո՛ւ ամէն բանի հիմքն ու կեանք.
Ծով անյատակ, անեզր,
Հըրաշք հըրաշալեաց,
Թող ընկղմեմ ի մէջ շընորհաց:

Ես քո մէջ,
Դու իմ մէջ,
Ես իսպառ չըքանամ,
Քեզնով ուրախանամ:

6. Ամէն ինչ թափանցող,
Թո՛ղ քո լոյսն երկնային,
Յիսո՛ւս, շըփուի իմ երեսին.
Ինչպէս ծաղիկն ազատ
Իւր կոկոնն է բացում,
Եւ դէպ արեւն անշարժ պահում՝
Թո՛ղ նոյնպէս,
Տէ՛ր, և ես
Քեզնից լոյս ընդունիմ
Եւ ծըլեմ ու աճիմ:

7. Արա՛ ինձ միամիտ,
Պահիր ինձ աշխարհքից,
Որ կեանք վարեմ խաղաղալից.
Տո՛ւր ինձ մի մաքուր սիրտ,
Որ քո պայծառութիւն
Տեսնեմ ես միշտ հոգով արթուն.
Իմ հոգին
Դէպ երկին
Թո՛ղ, ով Տէ՛ր, սըլանայ,
Փառքիդ արժանանայ:

8. Տէ՛ր, իմ մէջ բընակիր,
Թո՛ղ այս երկրում օտար
Ես քեզ համար լինիմ տաճար.
Սուրբ էակ, որ մօտ ես,

Իմ մէջ փառաւորուի՛ր,
Եւ ինձանում սէրըդ վառի՛ր.
Ուր կանգնեմ,
Ուր նըստեմ,
Օգնի՛ր միշտ քեզ նայել
Եւ ինձ խոնարհ պահել:

3. ՍԱՂ. 19, 9. Տիրոջ պատուիրանքները ուղիղ են, ուրախացնումեն սրտերը:

Punsch 31.

1. Տէր, դո՛ւ սրտիս դուռը բացի՛ր,
Իմ սիրտն խօսքովդ առ քեզ քաշի՛ր.
Տո՛ւր որ խօսքըդ մաքուր պահեմ,
Քեզ զաւակ և ժառանգ լինեմ:

2. Քո խօսքն շարժէ խորքը սրտիս,
Քո խօսքն առողջ պահէ հոգիս,
Քո խօսքն շնորհէ սրտիս բերկրանք,
Քո խօսքն ինձ տայ միշտ ըսփոփանք:

3. Փառք և պատիւ Հօրն բարերար,
Նոյնպէս Որդոյն՝ եկեալ յաշխարհ,
Հոգոյն՝ իջեալ ի վերնատուն,
Փառք քեզ, ո՛վ սուրբ երրորդութիւն:

4. ՅՈՎՀ. 15, 4. Կացէք ինձանում և ես ձեզանում:

Punsch 245.

1. Օգնի՛ր ինձ քոնը լինել,
Աստուած հաւատարիմ.
Մի թո՛ղ ինձ քեզնից զատուել.
Խօսքիդ մէջ թո՛ղ վարժուիմ.

Տէ՛ր, մի՛ թո՛ղ ինձ տատանուել,
Արա՛ ինձ հաստատուն,
Եւ վարժեցրո՛ւ ինձ գովել
Յաւիտեան քո անուն։

5. ԹՈՒՈՑ 6, 24. Եհովան օրհնէ քեզ և պահէ քեզ. Եհովան պայծառացնէ իւր երեսը քեզ վերայ, և խաղաղութիւն տայ քեզ։

Punsch 371.

1. Օրհնի՛ր և պահպանի՛ր,
Բարութեամբդ մեզ պահի՛ր.
Տէ՛ր, բարձրացրո՛ւ քո երես,
Տո՛ւր մեզ լոյս առատապէս։

2. Տո՛ւր մեզ այսօր և միշտ
Քո երկնային հանգիստ.
Ո՛հ, թո՛ղ ցոյց տայ քո հոգին,
Ամենայն օր մեզ Փրկչին։

3. Ամէն, ամէն, ամէն,
Ամենքն Փրկչին օրհնեն —
Այժմ և միշտ ու յաւիտեան,
Նա է սկիզբն ու վախճան։

6. ՍԱՂ. 119, 105. Քո խօսքը ճրագ է իմ ոտքերի համար, և լոյս իմ ճանապարհի համար։

P. 169.

1. Սիրելի Տէ՛ր, այստեղ ենք,
Որ քեզ և քո խօսքըդ լսենք.
Տո՛ւր մեր մտքին վեհ ձգտումն
Առ երկնային քաղցըր ուսումն,

Որ մեր սրտերն բոլորովին
Երկրից դառնան Տէր Յիսուսին։

2. Մեր խելքով և գիտութեամբ
Շրջապատուած ենք մթութեամբ՝
Քո հոգւոյդ իմաստութիւն
Թո՛ղ լցնէ մեզ լոյսով փայլուն.
Առանց քեզ ենք անընդունակ
Ընտրել լաւ միտք, լաւ նպատակ.

3. Դո՛ւ ճիշտ պատկեր Աստուծոյ,
Յ՛Աստծոյ ծնեալ, Լոյս ի լուսոյ,
Մեզ ամենիս պատրաստիր,
Ականջ, բերան և սիրտ բացիր,
Յաջողութիւն տո՛ւր, Տէ՛ր գթած,
Լսիր ձայն մեր աղաչանաց։

ԳՈՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ։

7. ՍԱՂ. 150, 6. Ամեն շունչ ունեցողը թող օրհնէ Տիրոջը. Ալէլուիա՛։

P. 141.

1. Ա՜խ թէ ինձ վերևից բիւր լեզու,
Հազարաւոր բերան տրուէր,
Եւ Տիրոջն սրտաբուղխ գովելու՝
Ունենայի փափագ և սէր.
Այն ամենայն բարեաց համար,
Որ անում է ինձ անդադար։

2. Ա՜խ թէ միշտ իմ ձայնը վեր ելնէր
Մինչ կացարանն արեգական,

Եւ արիւնս միշտ եռար ու հրճուէր,
Քանի առնում է իւր շրջան.
Մինչդեռ տեւէ երակիս զարկ՝
Քեզ կըտամ փառք, պատիւ և յարգ։

3. Ո՛վ հոգիս, դու երգիր քաղցրաձայն,
Թո՛ղ չի լռէ երգիդ հընչիւն,
Մասնակցին ինձ աշխարհն ամենայն,
Կանաչ ծառոց մեղմ սօսափիւն.
Փառք տան ինձ հետ շուշան և վարդ,
Լեռներ, դաշտեր կանաչազարդ։

4. Ձայնակից թող լինեն ինձ մարդիկ,
Հրեշտակք երկնից, էակք բոլոր.
Անզօր եմ, լեցրու, Տէ՛ր, իմ կարիք,
Որ ես գովեմ Փրկչիս հզօր.
Եկէք՝ երգենք, եկէք՝ փառք տանք
Նորան, որ մեզ զոհից իւր կեանք։

5. Տէ՛ր, ես քո բարութիւնդ պիտ գովեմ,
Քանի լեզուս շարժել կարէ.
Նոյնպէս զոհ, պատարագ պիտ բերեմ,
Քանի սիրտ իմ ջերմ բաբախէ.
Իսկ թէ շրթունքս անզօր լինեն,
Սիրտըս, հոգիս կը հառաչեն։

6. Արդ, ով Տէ՛ր, ընդունի՛ր երկրիս վրայ
Այս իմ տըկար փառքն ու պատիւ.
Երկընքում իմ անձը կը յուսայ
Երգել ուրախ և ջերմ ըղձիւ.
Այնտեղ կերգեմ, Աստուա՛ծ անեղ,
Քո սըրբոց հետ ես միատեղ։

8. ՍԱՂ. 29, 2. Տուէք Տիրոջ իր անունի փառքը, երկրպագութիւն տուէք։

P. 210.

1. Փառք և պատիւ բարձրեալ Աստծուն
Եւ Հօրը ամեն բարեաց.
Փառքի արժան է քո անուն,
Ո՛վ Աստուած հըրաշալեաց.
Լեցնէ սըրտերն շնորհօքն անբաւ
Եւ փարատէ ողբ, կոծ և ցաւ.
Տուէք փառքը մեր Աստծուն։

2. Քեզ միշտ գովեն զօրքեր երկնից,
Նոյնպէս և ծով ու ցամաք.
Դու ես միայն Տէր գահոյից,
Հանգիստ կայ թեւերիդ տակ.
Զօրութիւնք քո արարչական
Փառք կըտան քեզ միաբերան.
Տուէք փառքը մեր Աստծուն։

3. Եւ դու կամիս, հզօր Աստուած,
Գործք քո ձեռաց խընամել.
Նոցա վերայ ամենայն օր
Գըթառատ սիրով իշխել.
Իւր պետութեան մէջ ամեն տեղ
Տիրում է կարգ, օրէնք անշեղ.
Տուէք փառքը մեր Աստծուն։

4. Վեր նայեցի իմ վըշտիս մէջ,
Եւ Տէրն իմ ձայնը լսեց.
Մեղքերն, մահին նա տուաւ վերջ,
Եւ ինձ էլ մըխիթարեց.

Փառք, փառք անուան քո փրկաւէտ,
Ո՜հ, գոհացէք Տէրից ինձ հետ.
Տուէք փառքը մեր Աստծուն։

5. Երբէք բարի մեր Հովիւը
Իւր հօտը չի մոռանալ.
Համրած է նա նոցա թիւը,
Էլ ի՞նչ պէտք է մեզ ողբալ.
Իւր մայրական ձեռաց յինուէք,
Որ տանին մեզ ամենուրեք.
Տուէք փառքը մեր Աստծուն։

6. Դուք, որ կոչուիք քրիստոնեայք,
Տուէք փառքը մեր Աստծուն.
Ով բարեպաշտ մարդիկ, կանայք,
Տուէք փառքը մեր Աստծուն.
Այլ չ՛աստուածք են սուտ, հնարուած,
Տէրն է Փրկիչ, Տէրն է Աստուած.
Տուէք փառքը մեր Աստծուն։

7. Ուստի եկէք նորա առջեւ
Հնչեցնենք երգ ու նուագ.
Այո, երգենք մենք յարատեւ
Երգ ցնծման արագ, արագ.
Տէրն է գթած եւ բարերար,
Եւ գործքերը սուրբ ու արդար.
Տուէք փառքը մեր Աստծուն։

9. ՅՈՎ. 15, 4. Կացէք ինձանում եւ ես ձեզանում։

1. Փառք եւ պատիւ ու զօրութիւն,
Հօրն եւ Որդոյն ու սուրբ Հոգոյն.

Միասնական երրորդութեան,
Փառք ի բարձունս ի յաւիտեան։

10. ԱԹԵՍ. 5, 18. Սիրաքի 50, 24. Ամեն բանի մէջ գոհացէք, վասն զի սա է Աստուծոյ կամքը ձե վերայ Քրիստոս Յիսուսում։

P. 229.

1. Արդ գովեցէք Աստծուն
Բերանով, սրտով, ձեռքով,
Որ մեզ եւ ամենուն
Մեծ բաներ արաւ սիրով,
Որ մեզ մօր արգանդից
Եւ մատաղ հասակից
Անթիւ բարիք արեց,
Եւ մինչ ց'այսօր պահեց։

2. Ինքն Աստուած այս կեանքում
Նայում է մեզ հաճութեամբ.
Եւ մեր սիրտն է բերկրում
Իւր ազնիւ խաղաղութեամբ.
Օգնում է մեզ շնորհօք
Եւ չի թողնում անօգ.
Թէ աստ, թէ անդ պիտի
Մեր վիշտը փարատի։

3. Փառք, փառք սրտի խորքից
Հօրն եւ միածին Որդոյն,
Եւ նոյնպէս էակից
Մխիթարիչ Սուրբ Հոգոյն,
Բարձրեալ Երրորդութեան
Փառք, պատիւ անսահման,

Որ էր ըսկըզբանէ,
Որ է և պիտ լինէ։

11. ՍԱՂ. 103, 1, 2. Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը և բոլոր իմ ներսը, նորա սուրբ անունը. Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և մի մոռանար նորա բոլոր բարիքները։

P. 96.

1. Օրհնիր Տիրոջը, ամենազօր փառաց արքային,
Ո՛վ փրկեալ իմ անձ, սա է ցանկութիւն իմ ջերմագին.
Խումբ կազմեցէք, սաղմոս, քընար հընչեցնենք,
Թող օրհնութեանց երգեր լսենք։

2. Օրհնիր Տիրոջը, ձևակերպեց քեզ ճարտար ձեռքով,
Առողջութիւն նա տուաւ քեզ, առաջնորդեց սիրով,
Քանիցս անգամ նեղութեանց մէջ քո Աստուած
Իւր թևերն վրադ չէ՞ տարածած։

3. Օրհնիր Տիրոջը, վարում է ամէն ինչ փառաւոր,
Քեզ ապահով տանում է արծուի թևօք զօրաւոր.
Պահում է քեզ՝ ինչպէս քեզ է հաճելի,
Արդեօք չէ այս քեզ ըղձալի։

4. Օրհնիր Տիրոջը, քո վիճակը յայտնապէս օրհնեց,
Եւ երկընքից սիրոյ հեղեղներ վրադ անձրևեց.
Յիշիր՝ թէ ինչպէս քեզ կ՚օգնէ Աստծոյ աջ,
Սիրով կըգայ քեզ ընդ առաջ։

5. Օրհնիր Տիրոջը, ամէն ինչ ինձանում նրան փառք տայ,
Մարդ և շընչաւորք թող երգեն միշտ նորան ովսաննա.
Նա է քո լոյսն, ով իմ անձ, մի մոռանար,
Ամէն, օրհնիր նրան անդադար։

12. ՍԱՂ. 71, 24. Իմ լեզուն էլ ամէն օր կխօսի քո արդարութեան համար։

P. 121.

1. Իմ լեզուն պիտ Աստծուն գովէ,
Եւ երբ իմ ձայնն մահը կտրէ
Եւս առաւել երգեմ պիտի,
Իմ երգին վերջ չպիտ լինի.
Զի երբ ընթացքս աստ կատարեմ,
Վերն յաւիտեան պիտի երգեմ։

2. Ի՜նչ երջանիկ է այն անձը,
Որի յոյսն է մեր Աստուածը.
Նա ըստեղծեց տիեզերքը,
Դարմանում է նա մեր վէրքը.
Զըղջացողին ընդունում է,
Իւր խոստմունքը կատարում է։

3. Տէ՛ր, իմ լեզուն ղեկավարի՛ր,
Քո Հոգով բերանս սըրբի՛ր.
Եւ մի սուրբ սիրտ, ուղիղ հոգի
Ստեղծի՛ր իմ մէջ, Աստուա՛ծ բարի.
Սուտը ջնջի՛ր, Տէ՛ր, իմ լեզուից,
Մաքրի՛ր հոգիս ամէն մեղքից.

13. ՍԱՂ. 59, 17. Ո՛վ իմ Զօրութիւն, քեզ Սաղմոս կերգեմ, ինչու որ, ով Աստուած, դու ես իմ պահապան։

P. 141.

1. Տիրոջը երգեցէք գոհութիւն,
Քանզի նա է Տէր բարերար.
Տիրոջը միշտ տուէք օրհնութիւն,
Նա սիրում է մեզ անդադար.
Լաւ է սրտանց Տիրոջն յուսալ,
Քան թէ մարդկանց վստահանալ:

2. Թող սրբոց սրտերից բարձրանան
Միշտ յաղթական զուարթ ձայներ,
Եւ երգեն՝ թէ բազուկն փրկչական
Կատարում է մեծ հրաշքներ.
Ամէն մարդիկ թո՛ղ քեզ դիմեն
Եւ օրհնութիւն քեզնից խնդրեն։

3. Տո՛ւր մեզ, Տէ՛ր, մի սուրբ սիրտ, որ քեզ գանք,
Եւ քեզ վերայ գցենք մեր վիշտ.
Եւ շիտակ դէպ երկինք ընթանանք,
Որ անդ մնանք քո մօտը միշտ.
Քո փառքը թո՛ղ միշտ մեծանայ
Ամենուրեք երկրիս վերայ:

4. Փառք լինի քո անուան, ո՛վ Աստուած,
Յ՚այսըմ հետէ մինչ յաւիտեան.
Դո՛ւ միայն, դո՛ւ ես մեզ պահպանած,
Դարեկից ես մեր թուլութեան.
Ուրախ երգենք. ալէլուիա.
Եհովա՛յ Տէ՛ր, ալէլուիա։

14. ՍԱՂ. 146, 1. Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձը, Տիրոջը կ՚օրհնեմ իմ կեանքումը։

P. 217.

1. Գովէ՛ր քո Տիրոջ, ո՛հ, գովէ՛ր, անձն իմ,
Մինչ մահ պիտի օրհնեմ Տէրին.
Քանի դեռ այստեղ ժամանակ ունիմ,
Պիտ ինձ հոգի, կեանք տուողին
Փառք և պատիւ տամ սրտաբուղխ
Եւ գոհանամ ուշ և կանուխ,
Ալէլուիա՜, ալէլուիա՜։

2. Իշխանք մարդիկ են՝ ծնուած կընկանից,
Նոքա դարձեալ փոշի լինեն.
Չի մնալ ոչինչ նորանց մտքերից,
Երբոր մահուան ճանկը ընկնեն.
Յայնժամ ո՛չ ոք օգնել կարէ,
Թո՛ղ ամէն մարդ Աստծուն դիմէ.
Ալէլուիա՜, ալէլուիա՜։

3. Երանի նորան, որի օգնութիւն
Է Յակովբայ Տէր Աստուածը,
Որի հաւատքում չըկայ կեղծութիւն,
Եւ Յիսուսն է իւր ընտրածը.
Երանի նրան, որի յոյսը
Թև ու թիկունքն է Յիսուսը.
Ալէլուիա՜, ալէլուիա՜։

4. Լոյս տայ կոյրերին, յոյս է նեղելոց.
Ո՛հ, նորա սէրն է աննման.
Այրիին պաշտպան և հայր է որբոց,
Նորա շնորհքն է բազմազան.

Իսկ զօրութիւնք նենգաւորին
Պիտ չըքանան և խորտակուին.
Ալէլուիա՛, ալէլուիա՛։

5. Իրանն է երկինք և ծով ու ցամաք
Եւ ամենայն արարածներն.
Մարդոց կերակրէ հացով երկնառաք,
Դէպ ջուրն տանէ ծարաւածներն.
Ազատիչ է գերեալ մարդկանց
Եւ պաշտպան է նեղեալ անձանց.
Ալէլուիա՛, ալէլուիա՛։

6. Բարձրացրէք մարդիկ, Աստուծոյ անուն,
Որ հրաշքներ է կատարում.
Ամէն շընչաւորք թո՛ղ միշտ աններկուն
Գովեն Աստուծուն բարձրերում.
Օրհնէք, սուրբեր, միայն Աստծուն,
Հօրն ու Որդուն և Սուրբ Հոգուն.
Ալէլուիա՛, ալէլուիա՛։

15. ՍԱՂ. 149, 2. Թող Իսրայէլը ուրախ լինի իր Ստեղծողովը։

«Es ist ein Born» ի եղանակաւ.

1. Ամենասուրբ Տէր և Աստուած,
Անձս քեզ գովել բաղձայ.
Քանզի դու ես ինձ ըստեղծած,
Քեզնով կեանք ըստացայ։

Տէ՛ր, բիւր պատճառ ունի ծառադ՝
Քեզ միշտ օրհներգելու.
Զի ինձ տուիր շընորհք առատ՝
Փրկչիս ծառայելու։

Կամիմ վառուած Աստծոյ սիրով՝
Տէր Յիսուսին օրհնել.
Քանզի անբիծ, սուրբ արիւնով
Հաճեցաւ ինձ փրկել։

4. Մեղացս համար անձն իւր զոհեց,
Նա ինձ նոր կեանք տուաւ.
Գերութիւնից ինձ ազատեց,
Երկնից ժառանգ արաւ։

5. Ուստի անկեղծ և ջերմ սրտիւ
Երգեմ ալէլուիա՛ն.
Անմահ գառին փառք և պատիւ
Գովեստ է միշտ արժան։

16. ԵՓԵՍ. 5, 19. Խօսելով ձեր մէջ սաղմոսներով և օրհնութիւններով և հոգևոր երգերով. երգեցէք և սաղմոսեցէք ձեր սրտերումը Տիրոջը։

Br. 59.

1. Քեզ, քեզ, Եհովա՛յ, կամիմ երգել,
Զի ո՞ւր է, ո՞վ է քեզ պէս մի Աստուած.
Քո առջև կամիմ աղերսս բերել,
Հոգովդ զօրացրու ինձ, Հա՛յր ողորմած,

Որ ես քեզ երգեմ Յիսուսի անուամբ,
Քո հաճութեան պէս և սրտի բղխմամբ։

2. Քաշիր ինձ, Աբբա՛ Հայր, քո Որդոյն,
Որ Որդին էլ ինձ դէպի քեզ քաշի.
Արա՛ ինձ օթեւան քո Հոգոյն,
Որ հոգւոյս վերայ նա թագաւորի,
Որ խաղաղութիւնդ ճաշակեմ, ըզգամ,
Քեզ ամբողջ սրտով գովեմ ու փառք տամ։

3. Ո՛վ Աստուած, արա՛ ինձ այդ շնորհ,
Եւ անկեղծութեամբ անուանդ կ'օրհնեմ.
Թո՛ղ հընչէ իմ երգը զօրաւոր,
Քեզ ճըշմարտութեամբ ու հոգով պաշտեմ.
Հոգիդ բարձրացնէ սիրտըս դէպի վեր,
Որ քեզ մեծաձայն երգեմ սաղմոսներ։

4. Եւ Հոգիդ ինձ համար միջնորդէ
Եւ բարեխօսէ մեզ հառաչանօք,
Եւ նա ինձ աղօթել սովրեցնէ,
Վըկայէ, որ քո զաւակն եմ իրօք,
Եւ Տէր Յիսուսով եմ քո ժառանգը,
Վասն որոյ լսի՛ր իմ աղաչանքը։

5. Ի՜նչ շնորհք, Տէ՛ր գըթած և բարի,
Որ ինձ տուել ես այս վըկայութիւն,
Եւ դու իմ խընդրածից աւելի
Շընորհումես ինձ քո սիրով անհուն.
Երբ անուամբ Փըրկչին իմ խօսքերն բղխեն՝
Աղօթքս է քեզ մօտ այո՛ և ամէն։

17. ՅՈՎ. 4, 23. Ճշմարիտ երկիր պագողները հոգով և ճշմարտութիւնով կ'երկրպագեն հօրը։

P. 445.

1. Երկրպագեմ սիրոյդ զօրութեան,
Որ Յիսուսով մեզ յայտնուեցաւ.
Խոնարհուեմ սիրոյդ ազդեցութեան,
Որով չնչին ոգս սիրուեցաւ.
Փոխանակ իմ վրայ մըտածելոյ՝
Լող կըտամ ազատ ի ծով սիրոյ։

2. Ի՜նչ քաղցր ես դո՛ւ, Տէ՛ր, ինձ համար,
Ինչպէս հոգով քեզ փափագեմ.
Տո՛ւր ամէն բանում խոնարհաբար
Ես քեզ սրտով հըպատակեմ.
Դո՛ւ ով իմ Փըրկիչ՝ բարի և հեզ,
Դու ինձ ընտրեցիր և ես էլ քեզ։

3. Կըզգամ, որ պարտեմ քեզ ունենալ
Եւ քեզ համար միայն ապրել.
Ո՛չ մարդով, ո՛չ ձիրքովս պարծենալ,
Այլ փառքը քեզ վերաբերել.
Քեզ մօտ կայ հանգիստ, ուրախութիւն,
Քեզանով գըտնեմ ես փըրկութիւն։

4. Ա՜խ թէ, Տէ՛ր Յիսուս, քո սուրբ անուն
Իմ սրտիս մէջ խոր դըրոշմուէր.
Ա՜խ երանի թէ քո սէրն անհուն
Սրտիս, հոգւոյս մէջ թափանցէր.
Ի՜նչ որ խօսեմ և ի՛նչ որ անեմ
Քեզանով ըսկսեմ և վերջացնեմ.

5. Փառք քեզ, ո՛վ Յիսուս, Տէ՛ր մեծափառ,
Քեզնից սիրոյ ակն բղխումէ.
Քեզնից հոսումեն ջուրերն պայծառ,
Որոնցից քո հօտն խմումէ.
Քո անվերջ սիրով ըղմայլումենք,
Եւ քեզ միշտ պաշտել փափագումենք:

ԱՂՕԹՔԻ ԺԱՄԵՐ:

18. *ՅԱԿ. 1, 17. Ամեն բարի տուրք և ամեն կատարեալ պարգև վերևիցն է, լուսոյ Հօրիցը:*

P. 230.

1. Ո՛վ Տէ՛ր, արդա՛ր Աստուած,
Դու ամեն բարեաց Աղբիւր.
Քեզնով են գոյացած
Արարածք հազար և բիւր.
Առողջ մարմին շնորհի՛ր
Եւ մաքուր խղճմտանք,
Իմ հոգին սուրբ պահի՛ր
Եւ իմ ըզգայարանք:

2. Սովրեցրու ինձ ջանալ
Քո սուրբ կամքը կատարել.
Այնպէս գործել, խօսալ,
Որ առջևդ կարեմ կանգնել.
Երբ ցաւեր ինձ վրայ գան,
Եւ ինձ ցած տապալեն,
Եղիր դու իմ պաշտպան,
Որ ես կանգնեմ նորէն:

3. Ա՜խ թէ ամենայն ժամ
Մարդկանց հետ ապրեմ սիրով,
Թշնամի, բարեկամ
Միշտ անխտրիր սիրելով.
Թէ տաս ինձ կեանք երկար,
Եւ մազերս ճերմակին՝
Տէ՛ր, թո՛ղ մեղք և աշխարհ
Չը խոցեն իմ հոգին:

4. Օգնիր, որ իմ խաչը
Ես տանեմ մինչ գերեզմանս.
Չի լաց և հառաչը
Ցընծման փոխուին յաւիտեանս.
Եւ երբ ծագի արեգ
Սուրբ յարութեան, ո՛վ Տէր,
Ո՛հ, ասա ինձ՝ «դո՛ւրս եկ,
Եւ սլացիր ի վեր»:

19. *ՍԱՂ. 18, 1, 2. Սրտանց սիրումեմ քեզ, ով Տէր, իմ զօրութիւնը, Տէ՛ր, իմ վէմ, իմ բերդ և ազատիչ, որին յուսացած եմ. իմ ասպար և իմ փրկութեան եղջիւր:*

P. 356.

1. Սրտանց սիրումեմ քեզ, ո՛վ Տէ՛ր,
Շընորհք արա՛, հեռու մի լե՛ր.
Լըսիր իմ այս աղաչանք.
Երբ քեզ ունիմ, չա՛յր սիրալիր,
Ինձ ի՞նչ փոյթ է երկինք, երկիր.
Աշխարհքս է սուտ և պատրանք.
Եւ իմ սիրտը պատառելիս՝
Իմ ապաւէն դո՛ւ կը լինիս.

Դու իմ բաժին և հոգոյս զարդ,
Ո՛հ, արեամբըդ ազատ եմ արդ.
Ա՜խ, մի թողե՛ր, Տէ՛ր բարերար,
Ազատարար,
Յիսուս Փրկիչ և հաշտարար,
Ինձ եղկելոյս ամօթահար։

2. Ինչ որ ունիմ՝ հոգի, մարմին
Քո պարգևն է Աստուածային.
Ամէն ինչ դու ես շնորհել.
Օրհնի՛ր իմ սիրտ, հոգի և անձ,
Որ ի փառս քո, ի շահ մարդկանց
Ես կարենամ կեանք վարել.
Պահի՛ր ինձ, Տէ՛ր, սուտ ուսմունքից
Եւ խաբեբայ սատանայից.
Ես շատ տըկար և անզօր եմ,
Օգնի՛ր՝ որ ես խաչըս տանեմ,
Ով Տէր Յիսուս,
Օգնիր ինձ դու, միակ իմ յոյս
Անցնել մահուան գետից յանկոյս։

3. Թող իմ հոգին սուրբ հրեշտակ քո
Տանէ երկինք մահից յետոյ
Աբրահամ հօրը ծոցը.
Նորա գոգում մինչ վերջին օր
Հոգիս լինի միշտ բախտաւոր,
Անդ դադրեն լաց ու կոծը։
Վեր կը կենամ յետոյ շիրմէն,
Աչքերըս քեզ պիտի տեսնեն.
Ո՛հ ի՜նչ խոստում և սէր անհուն,
Փառքի արժան է քո անուն.

Հըզօր Աստուած,
Հեզիկ Փըրկիչ, Յիսո՛ւս գըթած,
Քեզ պիտ տեսնեմ ես անկասկած։

ԱՂՕԹՔԻ ԵՐԳԵՐ։

20. *ՍԻՐԱՔ. 50, 26. Սաղ. 100, 5. Տէրը բարի է և նորա ողորմութիւնը յաւիտեան։*

P. 9.

1. Եղիր մեզ մօտ քո շնորհքով,
Ով Տէր Յիսուս Քրիստոս,
Որ միշտ մընանք ապահով
Սատանից չարախօս։

2. Եղի՛ր մեզ մօտ քո խօսքով,
Ո՛վ Աստուած փըրկութեան,
Որ մինչ վերջը պահուելով՝
Կեանք գըտնենք յաւիտեան։

3. Եղիր մեզ մօտ քո սիրով,
Թող մենք շըրջապատուենք
Ճըշմարտութեան քո լոյսով,
Որ էլ չը մոլորուենք։

4. Մընա՛ մեզ մօտ քո փառքով,
Ով դո՛ւ հարուստ իշխան.
Եւ թո՛ղ քո բարիքներով
Մեր սըրտերն լիանան։

5. Մնա՛ մեզ մօտ քո բազկով,
Ով դու մեծ զօրավար,
Որ թշնամին մեզ մեղքով
Չը խաբէ չարաչար։

6. Մնա՛ մեզ մօտ քո Հոգով,
Ով Տէ՛ր իմ Աստուած.
Օգնի՛ր մեզ քո աջ բազկով,
Որ հասնենք տունն փառաց։

21. ՍԱՂ. 141, 2. Իմ աղօթքը թող ընդունելի լինի քո առջև ինչպէս խունկ և իմ ձեռաց բարձրանալը իրիկուայ պատարագի պէս։

P. 271.

1. Ժողովո՛ւրդ աղօթասէր,
Օծի՛ր քեզ սուրբ իւղով.
Ա՜խ թէ Յիսուս ձեր սրտեր
Վառէր Հոգով սուրբով.
Քո բերան
Իւր ընծան
Ամէն օր անդադար
Բերէ Տիրոջ տաճար։

2. Սրտանց անկեղծք, եռանդոտք
Երբ չոքեն իրանց ծունկ,
Դէպի վեր Նոցա աղօթք
Վեր կելնէ որպէս խունկ.
Լե՛ր սրտոտ,
Աստծոյ մօտ
Քո միջնորդն, բարեխօս
Ինքն է՝ Յիսուս Քրիստոս։

3. Չէ կարող աղօթքիդ ձայն,
Ով դու Տիրոջ զաւակ,
Անցնել իզուր, ընդունայն.
Աղօթի՛ր շարունակ.
Ի՜նչ ուրախ,
Առանց ախ
Կը լինենք, երբոր մենք
Միասին աղօթենք։

4. Աղօթէ՛ք, որ վերջին օր
Զուշանայ, շուտ հասնէ,
Փրկչի դէմքը փառաւոր
Ամէն արդար տեսնէ.
Սո՛ւրբ համայն,
Համաձայն
Աղօթիր, հետեւիր,
Եւ միշտ պատրաստ կացիր։

22. Ա. ՊԵՏ. 3, 12. Տիրոջ աչքերը արդարների վերայեն, և նորա ականջները դէպի նորանց աղօթքը։

1. Տէ՛ր, աղօթքի լսի՛ր,
Աղաչանացս անսա.
Ծառայքդ ընդունի՛ր,
Հե՛ղ Հոգիդ մեզ վերայ.
Յիշիր ուխտած քո ուխտերը,
Յիշիր ուխտած քո ուխտերը,
Եւ տո՛ւր Հոգւոյդ պարգեւները։

2. Հայրերը լսում են
Որդկանց ջերմ խընդիրքը,
Եւ սիրով լցնում են
Միշտ նոցա կարիքը.
Ո՜հ, ի՜նչքան սէր մանկանց ցոյց տաս,
Ո՜հ, ի՜նչքան սէր մանկանց ցոյց տաս,
Նոցա խընդիրքն լսել ցանկաս։

3. Հայր ես մեզ երկնային,
Շնորհօք ուղեցրումես.
Եւ բարի քո Հոգին
Մեր մէջ ներշընչումես,
Որ վառուինք և կենդանանանք,
Որ վառուինք և կենդանանանք,
Օրհնենք, գովենք և քեզ փառք տանք։

23. *ՄԱՏԹ. 6, 9. Արդ դուք այսպէս աղօթք արէք.*

G. и W. Lieder—92.

1. Հա՛յր մեր, որ երկընքումն ես՝
Սուրբ լինի քո անուն.
Դու բարձրումն ու փառքումն ես.
Գայ քո արքայութիւն։

2. Եղեցի կամք քո բարի,
Ինչպէս վերն երկընքում՝
Նոյնպէս ի վերայ երկրի
Մարդկանց ուղղոց միջում։

3. Ո՛վ Հայր, տո՛ւր մեզ և՛ այսօր
Մեր օրական հացը,
Որ պաշտենք քեզ ամեն օր,
Ո՛վ դո՛ւ մեր Աստուածը։

4. Քո Որդւոյդ սիրոյն համար
Մեր պարտքերն մեզ ներիր,
Մեր եղբօր մեղքն անդադար
Ներելու մեզ օգնիր։

5. Մի տանիր ի փորձութիւն,
Այլ փրկիր մեզ ի չարէն.
Զի քո է արքայութիւն,
Զօրութիւն, փառք ամէն։

24. *Ա. ՏԻՄ. 6, 17. Յոյս դնեն կենդանի Աստուծոյ վերայ, որ ամեն բան տալիս է մեզ առատապէս վայելելու համար։*

1. Փառք Աստուծոյ վայելուեց.
Կենաց խօսքը մենք լսեցինք,
Տէրը մեզ սովորեցրեց,
Երգ երգեցինք, աղօթեցինք,
Փառաբանուի մեր Տէր Աստուած,
Առատութեամբ մեզ կերակրեաց։

2. Վերջացաւ պաշտամունք մեր,
Իւր օրհնութիւնն Աստուած տուաւ.
Ուրախ գընանք մեր տըներ,
Աստծոյ ճամբումն քայլենք կամաւ.
Թո՛ղ Հոգին մեզ առաջնորդէ,
Եւ ամենքիս նա պատրաստէ։

3. Աստուած օրհնէ մեր ելքը,
Եւ մեր մուտքը նըմանապէս.
Լեցնէ մեր ամէն պէտքը,
Եւ օրհնէ մեր գործը նոյնպէս.
Մի երջանիկ մահով նընջենք,
Եւ երկնային ժառանգ լինենք:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԵՐ:

25. ՍԱՂ. 92, 2, 3. Բարի է գոհանալ Տէրոջը. և սաղմոս ասել քո անունին, ո՛վ Բարձրեալ. և առաւօտանց պատմել քո ողորմութիւնը:

P. 233.

1. Սրտիս խորքից ես կրկին
Փառք տամ քո սուրբ անուան.
Առաւօտեան այս ժամին
Եւ մինչ կեանքիս վախճան.
Ո՛վ Տէր երկնից, երկրի,
Օգնիր ինձ, դէպ ինձ դարձի՛ր,
Որ քեզ գովեմ բերկրալիր
Անուամբ Փրկչին բարի:

2. Քո շնորհքըդ այս գիշեր
Պահել է ինձ չարից.
Դու փրկել ես ինձ, ո՛վ Տէ՛ր,
Ամէն վտանգներից.
Նե՛րիր, Տէ՛ր, կ՚աղաչեմ,
Իմ մեղքերը քո շնորհքով,
Եւ մի թո՛ղ մեղք գործելով՝
Քո հոգիդ վշտացնեմ:

3. Շնորհք տո՛ւր ինձ օգնել,
Ո՛վ Տէ՛ր, նոյնպէս այսօր.
Զի զօրեղ է Սաթայէլ,
Իսկ ես խեղճ և անզօր.
Փորձանք և պատուհաս
Ինձանից հեռու պահի՛ր.
Փրկի՛ր ինձ, ո՜հ, խընայիր
Մահից յանկարծահաս:

4. Ահա հոգի, մարմին, անձ,
Կին, մանկունք, ծառաներ
Եւ ամէն ինչ՝ կեանք և գանձ
Քեզ եմ յանձնում, ո՛վ Տէ՛ր.
Եւ յիշէ՛ր հայրաբար
Ծնողք, ազգ և ազգական,
Քոյր, եղբայր և հարևան.
Տէ՛ր, օգնի՛ր և խընամք տար:

5. Թո՛ղ հրեշտակք խեղճ ծառայիդ
Տանեն ձեռքի վերայ.
Եւ սատանան նենգամիտ
Կորչի և չըքանայ.
Թո՛ղ իմ ամէն գործքերը,
Ո՛վ Փրկիչ, քեզնով օրհնուեն.
Եւ այն գործքերն խափանուեն,
Որ խախտումեն սէրը:

6. Այս բոլորին ասումեմ՝
«Ամէն» սրտիս խորքից.
Քեզ վերայ վստահումեմ,
Իմ կախումն է քեզնից.

Տէ՛ր, թո՛ղ սրտով աշխոյժ
Եւ ուրախ այսօր գործեմ,
Եւ ընդ միշտ մտաբերեմ՝
Թէ դո՛ւ կըտաս ինձ ոյժ։

26. ՍԱՂ. 57, 8, 9. Ես կզարթնեմ կանուխ առաւօտանց, կ՚գոհանամ քեզանից, Տէ՛ր, ժողովրդոց մէջ։

P. 12.

1. Զարթի՛ր, ո՛վ սիրտ, երգիր նըան,
Որ ըստեղծեց ամէն բան.
Նա է բարիք պարգեւող,
Եւ արդարոց պահպանող։

2. Երբ այսօր մութն ու մռայլ
Պատել էր անձն իմ ճընշեալ,
Սատանան թակարդ լարէր,
Բայց պաշտպանեց ինձ իմ Տէր։

3. Ասացիր՝ ննջէ՛ր, որդեա՛կ,
Քեզ կըպահէ իմ հրեշտակ,
Որ թշնամուց չընեղուես,
Մի նոր օր պիտի տեսնես։

4. Տէ՛ր, խօսքըդ կատարուած է,
Արեւը բարձրացած է.
Ո՛հ ի՛նչ սէր, որ ամէն օր
Քո շընորհքն է նորանոր։

5. Տո՛ւր որ, Տէ՛ր, կամքըդ բարի
Ինձ վերայ միշտ կատարուի.

Տա՛ր ինձ այսօր, Եհովա՛յ,
Զօրաւոր բազկիդ վերայ։

6. Տէ՛ր, լե՛ր իմ խորհըրդատուն,
Հեռու պահիր բանսարկուն.
Մինչ իմ մահը, ո՛վ Յիսուս,
Պիտ պաշտեմ քեզ լիայոյս։

7. Տո՛ւր հոգույս սընունդ, պաշար,
Արա՛ սիրտս հոգույդ տաճար.
Տէ՛ր, եղի՛ր ինձ ուղեկից,
Մինչ տուն հասնեմ աշխարհքից։

27. ՍԱՂ. 119, 148, 149: Կանուխ գալիս եմ արշալուսին և աղաղակումեմ՝ ես քո խօսքին յուսացայ. իմ ձայնը լսիր քո ողորմութեանը պէս։

P. 143.

1. Աստուա՛ծ իմ, առաւօտ է կըրկին,
Եւ գիշերուայ ժամերն անցան.
Արթնանան և՛ ինձ հետ միասին
Դառն հոգսերը և՛ այս օրուան.
Դու տաս ինձ քուն հանգըստաւէտ
Եւ նոր շընորհք՝ նոր օրուայ հետ։

2. Դեռ իմ կեանքն տեւում է երկրի վրայ,
Եւ ամէն օր ունիմ հոգսերս.
Օրէցօ՛ր իմ տարիքն շատանայ,
Կըրկնապատկուին և՛ իմ մեղքերս.

Տէ՛ր, գոհութեամբ թո՛ղ հացս ուտեմ,
Եւ քո փառքիդ միշտ նըպաստեմ։

3. Ամէն օր երբ դուրս գամ ես գործի՝
Հաճիր իմ կեանքն ղեկավարել.
Թէ այսօր ինչ պիտի պատահի՝
Ես չեմ կարող այդ գուշակել.
Տէ՛ր, ինձ հոգւովդ առաջնորդի՛ր,
Քո կամքիդ պէս ինձ հետ վարուիր։

4. Ո՛վ սուրբ Հայր, իմ մեղքերս ինձ ների՛ր,
Որ գործումեմ գիշեր, ցերեկ.
Քո շընորհքն ինձ այսօր պարգևի՛ր,
Եւ լըսիր իմ աղօթքն ու երգ,
Զի երբ առջևդ եմ հաճելի,
Փոյթ չէ՝ ինչ էլ ինձ պատահի։

5. Ամէն տեղ եղիր ինձ ձեռընտու,
Բաւական չէ ինձ իմ խելքը.
Եւ օգնիր թըշնամուց ահարկու,
Մի տո՛ւր ինձ կեղծ մարդկանց ձեռքը.
Թո՛ղ ինձ այսօրն լաւ գործածել,
Իմ կարեաց չափ բարիք անել։

6. Պահի՛ր, Տէ՛ր, իմ կեանքը և անձը,
Կին, զաւակունք, ազգականներ,
Եւ օրհնիր երկրային իմ գանձը
Եւ ամէն իմ ձեռացս գործեր.
Թո՛ղ գործերումս լուրջ լինեմ ես,
Հաւատումեմ, որ այս կանես։

28. *ՍԱՂ. 27, 1. Տէրն է իմ լոյսը և իմ փրկութիւնը, ես ումից պիտի վախենամ։*

P. 38.

1. Սըրտիս խորքից փառք քեզ, ո՛վ Տէր,
Որ պահեցիր ինձ այս գիշեր.
Ինձ տըկարիս դու հոգացիր,
Եւ նոր լոյսիդ արժանացրիր.

2. Այդ լոյսի հետ, ո՛վ Տէր, նոյնպէս
Ճառագայթիր ինձ քո երես.
Թող խաւարը անհետանայ,
Եւ ինձ լուսոյ որդի արա։

3. Տէ՛ր, հաճիր ինձ առաջնորդել,
Եւ այսօր էլ չարից պահել.
Օգնի՛ր, որ ես բարիք անեմ,
Քեզ և ընկերս սըրտանց սիրեմ։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԵՐԳԵՐ.

29. *ՄԻՔԻԱ. 7, 7. Ես Տիրոջն եմ սպասում և յուսամ եմ իմ փրկութեան Աստուծուն։*

P. 117.

1. Լուսինը բարձրացել է,
Երկինքը զարդարուել է
Անհամար աստղերով.
Եւ մարդկանց ժամ է արդէն,
Որ գընան քուն վայելեն
Խաղաղ, հանգիստ և անվըրդով։

2. Ի՜նչ սիրուն է լուսընկան,
Լուսնի կէսն է երեւան,
Բայց դարձեալ գեղեցիկ։
Շատ բաներ կան քօղարկուած,
Մեր աչքերից դեռ ծածկուած,
Բայց նորանցով ենք երջանիկ։

3. Մենք մարդկանց հըպարտ որդիք
Գործումենք մեղք եւ չարիք.
Զուրկ ենք գիտութիւնից.
Շինումենք օդում բերդեր,
Եւ հընարում արուեստներ,
Շեղուելով բուն նըպատակից։

4. Տէր, տո՛ւր մեզ քո զօրութիւն,
Որ մերժենք ունայնութիւն
Եւ ցուցամոլ չլինենք.
Սովորեցրո՛ւ, որ մենք խօսքիդ
Տըղայոց պէս միամիտ
Միշտ այո՛ եւ ամէն ասենք։

5. Եւ երբ ուզես մեզ կանչել,
Այս աշխարհքից ազատել
Մի երջանիկ մահուամբ,
Թող բառնան մեզ քո ձեռինք
Եւ տանեն դէպի երկինք,
Ո՛վ Տէր Աստուած, քո հաճութեամբ։

6. Եղբա՛րք, գընանք նընջարան,
Տէրն ինքն է մեր պահապան.

Ի՜նչ զով է մեղմ քամին.
Տո՛ւր մեզ, ո՛վ Տէր, անուշ քուն,
Խընայի՛ր մեր տեղ ու տուն
Եւ մեր հիւանդ ընկերներին։

30. ՍԱՂ. 121, 4. Ահա Իսրայէլի պահապանը
չի ննջել եւ չի քնանալ։

H. T. 422.

1. Ահա մի օր կրկին անցաւ,
Այլ եւս յետ չէ գալու.
Ահա լռիկ գիշերն հասաւ,
Ժամ է մեզ հանգչելու։

2. Բայց յաւիտեան մընայ Տէրը,
Անփոփոխ իւր փառքում.
Մեր գիշերներ եւ օրերը
Գրուած են իւր գըքում։

3. Քեզ եմ յանձնում հոգի, մարմին,
Ո՛վ Աստուած, այս գիշեր.
Եւ առաւօտն լուսածագին
Կ'երգեմ քեզ նոր երգեր։

4. Բայց թէ քեզնից մահուան պատգամ
Այս գիշեր ինձ հասնի,
Տէ՛ր, ես քեզ մօտ հանգչել ցանկամ,
Արա ինձ արժանի։

31. *ՍԱՂ. 4, 8. Խաղաղութեամբ կպառկեմ և իսկոյն կ՚քնանամ, քանզի դու միայն, ով Տէր, բնակեցնումես ինձ ապահովութեամբ։*

P. 141.

1. Փառք Աստուծոյ, ահա իմ կեանքից
Կըրկին մի օր անցաւ, գընաց.
Խաւարը պատած է չորս կողմից,
Բայց իմ անձն է ապահովուած,
Չի օրուան հետ արագավազ
Մօտ եմ երկնից ես հանապազ։

2. Ամէն մի երեկոյ յիշեցնէ,
Որ նոյնպէս իմ կենաց լոյսը
Մի անգամ յանկարծ մայր կը մըտնէ,
Ուրախ է անձս, վառ իմ յոյսը.
Այս կարճ կեանքից արագավազ
Մօտ եմ տանըս ես հանապազ։

3. Թէ վերջին իմ շունչը ես փըչեմ,
Եւ փըլի իմ հողէ վըրան,
Փըրկչիս մօտ ես պատրաստ միշտ ունեմ
Ճերմակ հանդերձք, անապական.
Եւ այս կեանքից արագավազ
Մօտ եմ տանըս ես հանապազ։

4. Գերեզմանն է միայն անկողին,
Ուր առնեմ նինջ հանգըստաբեր.
Երբ այնտեղ ես հանգչեմ լռվին՝
Կը տանէ ինձ երկինք իմ Տէր.
Եւ քայլերով ըշտապ, վըռազ
Մօտենումեմ տուն հանապազ։

5. Եւ այսպէս նընջումեմ միշտ խաղաղ,
Քաջ հովիւն է պահապան իմ.
Փըրկչիս հետ կըկանգնեմ ես անվախ՝
Երբ վըրայ հասնէ մահուան օրն իմ.
Եւ սըլանան օրերս վըռազ,
Երկընքին մօտ եմ հանապազ։

6. Ով ժամեր հանգըստեան, ողջոյն ձեզ,
Ցօղնած աչքերս կամիմ փակել.
Խընդա՛, անձս, այդ հանգիստ կըտայ քեզ,
Քանի վէրացն մէջ ես ծածկուել.
Ժամանակ կայ քեզ հազիւ հազ,
Երկընքին մօտ ես հանապազ։

32. *ՂՈՒԿ. 24, 29. Մեզ մօտ մնա, ինչու որ իրիկուն է, և օրն անցած է։*

P. 342.

1. Ո՛վ Տէր Յիսուս, օրն անցած է,
Արդէն մութը մեզ պատած է,
Կ՚աղաչեմ ինձ մօտ մընա.
Երբ չ՚ունենամ օգնականներ,
Եւ ըսպառնան մեծ վըտանգներ,
Օգնութեան ինքըդ փութա.
Լոյս իմ, Յոյս իմ,
Ապաւէն իմ
Միայն դու ես, Տէ՛ր Յիսուս իմ,
Այլ օգնական ընաւ չ՚ունիմ։

2. Այս աշխարհքի պայծառութիւն,
Փառք, պատիւ և վայելչութիւն
Շատ չանցած՝ կը չքանան.
Դու ես կենաց լոյս արևը,
Քո բարի տուրքն ու պարգևը
Յաւիտեան նոյնը մնան.
Տէր իմ, սէր իմ,
Եւ Փրկիչ իմ
Դու ես միայն, ով Աստուած իմ,
Ուրիշ Փրկիչ բնաւ չունիմ:

3. Քեզ շատ անգամ մոռացած եմ,
Քեզ շատ անգամ, Տէ՛ր, մերժած եմ,
Բայց դու ինձ մի՛ մոռանար.
Ա՜խ, ինձանից չը հեռանաս,
Այլ տըկարիս վերայ խղճաս.
Կա՛ց ինձ մօտ, Տէ՛ր բարերար,
Կեանք իմ, փառք իմ,
Դու՛ միակ իմ
Բարեկամն ես հաւատարիմ.
Մնա՛ ինձ մօտ մինչ վախճան իմ:

33. *ՍԱՂ. 33, 18. Ահա Տիրոջ աչքը նորանից վախեցողների վերայ է, և նորանց վերայ, որ նորա ողորմութեանն են սպասում:*

P. 57.

1. Յոգնած եմ, հանգիստ կուզեմ,
Երկու աչքերս կըփակեմ.
Հա՛յր, աչքերդ Աստուածային
Իմ մահճիս վերայ լինին:

2. Ներե՛ր, Տէ՛ր, այսօր նորէն
Իմ գործքերըն ապօրէն.
Քո շընորհքն և քո արիւն
Տան իմ մեղաց թողութիւն:

3. Թո՛ղ մանկունք և գերդաստան
Թևիդ տակ հանգըստանան.
Ամէն ոք՝ մեծ և փոքրիկ
Քընեն, զարթնեն երջանիկ:

4. Հիւանդ սըրտեր դարմանիր,
Եւ թաց աչունք դու՛ սըրբիր.
Թո՛ղ լուսինը լուռ կանգնէ՝
Եւ երկրին մըտիկ անէ:

34. *ՍԱՂ. 40, 12. Դու, Տէ՛ր, մի հեռացրու ինձանից քո գթութիւնը:*

P. 161.

1. Բարի Յիսո՛ւս, արթուն կա՛ց,
Քանի որ ես քուն եմ եղած.
Ինձ համար քո գիրկըդ բա՛ց.
Եղէ՛ր, հովի՛ւ, ոչխարացդ մօտ,
Եւ դըռան մօտ դի՛ր պահնորդ,
Բարի Յիսո՛ւս, արթուն կա՛ց:

2. Բարի Յիսո՛ւս, լե՛ր ինձ հետ,
Որ քո հոգին ամենագէտ
Պահէ ինձ գիշերն ըզգաստ.
Լե՛ր խաւարումն ճըրագըս դու,
Երբ կանչեմ ինձ օգնելու,
Բարի Յիսո՛ւս, լեր պատրաստ:

3. Բարի Յիսուս, երբ կանգնէ
Մահուան հրեշտակն գլխիս վերայ՝
Թո՛ղ ինձ տանէ դէպ քո ծոց.
Եւ դու՛ ինքըդ աչքերս փակիր,
Ինձ երկնից ժառանգ ընտրիր,
Բարի Յիսուս, յո՛յս մարդոց։

4. Բարի Յիսուս, վեր առ զիս,
Նոյնպէս ամէն իմիններիս,
Երբ այն մեծ օրը ծագէ.
Եւ երբ ինքըդ յայտնուես փառքով,
Ներս տար մեզ երկնից դըռնով,
Սիրուն Յիսուսն իմըս է։

35. *ՍԱՂ. 63, 8. Քո թեւերի հովանաւորութեան տակ կցնծամ։*

P. 117.

1. Հիմայ լուռ են անտառներ,
Մարդ, անասուն և դաշտեր.
Ննջել է և՛ աշխարհ,
Բայց, դու՛ ով անձ, վեր կացի՛ր,
Այն մեծ սիրոյն վրայ խորհիր,
Որ ցոյց տուաւ Տէրն բարերար։

2. Արեգա՛կ, ո՞ւր ես ծածկուած,
Գիշերն է քեզ արտաքսած,
Գիշե՞րն՝ ոսոխ օրուան.
Ահա մի այլ արեգակ,
Յիսուս, իմ պայծառ ճըրագ
Լոյս տայ սըրտիս մէջ յաւիտեան։

3. Ցերեկը արդ անցած է,
Խումբ աստեղաց յայտնուած է
Կապոյտ երկընքի վրայ.
Ես էլ նոյնպէս կը փայլեմ,
Երբ այս ձորից վեր կ'ելնեմ
Դէպի դըռներն ադամանդեայ։

4. Տարածի՛ր քո թեւերը
Ինձ վերայ, ո՛վ իմ Տէրը.
Ծածկի՛ր քո ձագերին.
Թէ դեւք ինձ դէմ չար խորհեն,
Թո՛ղ հրեշտակներն քո երգեն՝
«Թէ մի՛ շարժէք այդ մանուկին»։

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԵՐ։

ԳԱԼՈՒՍՏ։

36. *ՍԱՂ. 24, 7. Ո՛վ դռներ, բարձրացրէք ձեր գլուխները և բարձրացրէք, ո՛վ յաւիտենական դռներ, որ փառաց Թագաւորը մտնէ։*

B. 113.

1. Բացէ՛ք դուռը, դուռը բացէ՛ք,
Արքան կուգայ՝ ողջունեցէ՛ք.
Թագաւոր է թագաւորաց
Եւ Փըրկիչ է ամէն ազգաց.
Կեանք, փըրկութիւն է մեզ տալիս.
Ցընծա՛, խընդա՛, ո՛վ իմ հոգիս,

Օրհնեալ է իմ Աստուած,
Ինքն է ինձ ըստեղծած:

2. Նա արդար է և անձնազոհ,
Բընութիւնով հեզաբարոյ.
Թագ ու պըսակ է սրբութեան
Եւ գաւազան ողորմութեան.
Նա մեր ցաւոց վերջ է տալիս,
Ցընծա՛, խընդա՛, ո՛վ իմ հոգիս,
Օրհնեալ է իմ Աստուած
Եւ իմ Փըրկիչ գըթած:

3. Երանի այն երկիրներին,
Որ արքայ են ընտրել Տէրին,
Այն սիրտըն միշտ է երջանիկ,
Ուր բընակէ Յիսուս հեզիկ.
Արդարութեան արեգակ է,
Մեզ փըրկելու ընդունակ է.
Օրհնեալ է իմ Աստուած,
Միակ Աղբիւր բարեաց:

4. Ե՛կ, ո՛վ Փրկիչ, Քրիստոս Յիսուս,
Քեզ բաց է դուռն սըրտիս, հոգուս.
Ա՜խ, ներս մտի՛ր, Տէ՛ր բարերար.
Արա՛ իմ սիրտն հոգւոյդ տաճար.
Թող վարէ մեզ քո Սուրբ Հոգիդ,
Որ պաշտենք քեզ՝ մեծ արքայիդ.
Քո անուան տամ ըղձիւ
Յաւիտեան փառք պատիւ:

37. *ՄԱՏԹ. 21, 9. Ովսաննայ Որդւոյ Դաւթի. օրհնեալ է Տիրոջ անունով եկողը, Ովսաննայ ի բարձունս:*

P. 161.

1. Ովսաննա՛յ, Դաւթի Որդին,
Որ մուտք է գործում ի Սիօն.
Գահ պատրաստէ՛ք արքային,
Շինէ՛ք կամար, մեծ է այս տօն.
Ոստեր սըփռէ՛ք ճամբի վրայ,
Որ ներս մըտնէ մեծ արքայ:

2. Ովսաննա՛յ, քեզ բիւր ողջոյն
Դիմաւորիր արքային հեզ,
Սիօնի դո՛ւստըր սիրուն:
Մեր սըրտերը իբր ողջակեզ
Բերումենք, Տէ՛ր, քո առջև,
Վեր առ այս չընչին պարգև:

3. Ովսաննա՛յ, փառաց Իշխան,
Ո՛վ երկնային անյաղթ դի՛ւցազ,
Եւ իշխան խաղաղութեան,
Տո՛ւր մեզ շընորհք քո հանապազ.
Բարձր է քո արքայութիւն,
Օրէնքդ է ճըշմարտութիւն:

4. Ովսաննա՛յ, հի՛ւր սիրելի,
Քո առջև ենք հըպատակներ.
Տո՛ւր որ քեզ, հովիւ բարի,
Լինենք անխոնջ ծառայողներ.

Ե՛կ, սրտիս մէջ բնակիր,
Եւ միայնակ անդ իշխիր։

5. Ովսաննայ, Տէր զօրութեանց,
Թո՛ղ քո առջև շնորհք գտնեմ,
Որ առանց երկմտութեանց
Քեզ իմ սիրտը զոհաբերեմ.
Նրանց դու չես ընդունում,
Որ քեզ չեն հընազանդում։

38. ՅԱՅՏ. 22, 20. Ե՛կ, Տէ՛ր Յիսուս։

P. 266.

1. Տէ՛ր, դո՛ւ իմ ապաւէն և իմ յոյս,
Նեղութեանց մէջ ինձ մի թողիր.
Բաց է դուռն իմ սրտիս և հոգոյս,
Տէր գթառատ, ե՛կ, բնակիր.
Դու զարդ ես երկնքի և երկրի,
Աստուած և մարդ՝ սուրբ և հզօր.
Ճառագայթի թո՛ղ քո սուրբ երեսն,
Լուսաւորէ սիրտ իմ այսօր։

2. Ո՛վ Փրկիչ, ե՛կ, լեցրո՛ւ իմ փափագ
Քո գալստեամբ երջանկարար.
Ո՛վ Յիսուս, արա՛ ինձ ընդունակ,
Որ կարենամ սիրայօժար
Ծառայել քեզ այստեղ երկրի վրայ
Հոգոյս բոլոր կարողութեամբ,
Որ անդ էլ՝ երկնքում, Եհովա՛յ,
Քեզ միշտ գովեմ ուրախութեամբ։

39. ԶԱՔ. 9, 9. Մեծապէս ուրախացիր, ո՛վ Սիոնի աղջիկ. ցնծա՛յ, ով Երուսաղէմի աղջիկ. ահա քո թագաւորը գալիս է քեզ մօտ։

P. 245.

1. Ես քեզ ինչպէս ընդունեմ,
Ո՛վ երկրիս փափագը.
Քեզ ինչպէս դիմաւորեմ,
Իմ թագն ու պսակը.
Ո՛վ Յիսուս, Յիսո՛ւս, վառիր
Մի լոյս իմ առաջին,
Որ տեսնեմ արթուն և ժիր
Փառքդ Աստուածային։

2. Սիոնը քեզ սփռումէ
Արմաւենու ոստեր.
Իմ հոգին էլ ցնծումէ՝
Երգելով սաղմոսներ.
Բարձրանումէ իմ սիրտը քեզ
Հոգեբուղխ երգերով.
Ընդունիր, ո՛վ արքայ հեզ,
Պատասխան տո՛ւր սիրով։

3. Նա գալիս է դատելու
Աշխարհքին անաչառ.
Չարերին կործանելու,
Խընդացիր, ո՛վ արդար.
Ե՛կ, ա՛րև արդարութեան,
Ե՛կ, տա՛ր մեզ ամենիս
Դէպ այն տունն երանութեան,
Ուրտեղ դո՛ւ բնակիս։

40. *ՄԱՏԹ. 23, 37. Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, մարգարէները կոտորող. և քեզ մօտ ուղարկուածները քարկոծող:*

1. Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ,
Աստծոյ բընակարան,
Ո՛հ, դառնապէս ես ողբումեմ
Դըրութիւնն քո այժմեան.
Քո զաւակունք արդ ցըրուած են,
Խաչեալ Փրկչին չ՚ունեն.
Երուսաղէմ, Երուսաղէմ,
Վասն քո սուգի մէջ եմ:

2. Երուսաղէմ, Երուսաղէմ,
Չար էին քո գործքեր.
Առանց ցաւի ինչպէս պատմեմ
Այն ցաւալի դէպքեր.
Մարգարէից ըսպանեցիր,
Բանն Աստուած խաչեցիր.
Երուսաղէմ, Երուսաղէմ,
Վասն քո սուգի մէջ եմ:

3. Երուսաղէմ, Երուսաղէմ,
Դարձի՛ր մոլորուած գառին.
Նա ասէ՝ ես ճանապարհն եմ,
Որ տանումէ յերկին:
Ո՛հ, ե՛կ, դարձի՛ր, Նրան հաւատա,
Զի Նա քեզ կեանք կու տայ.
Երուսաղէմ, Երուսաղէմ,
Վասն քո սուգի մէջ եմ:

ԾՆՈՒՆԴ:

41. *ՂՈՒԿ. 2. Տիրոջ հրեշտակը կանգնեց նորանց առջև....... Այսօր ձեզ Փրկիչ ծնաւ:*

P. 38.

1. Յերկնից իջան խումբ հրեշտակաց,
Երևեցան խաշնարածաց,
Եւ ասացին՝ մանուկն չըքնաղ
Ննջումէ անդ մըսուրում խաղաղ:

2. Դաւթի քաղաք Բեթղեհէմում՝
Ինչպէս գըրուած է սուրբ գըքում,
Ցիսուս մանուկն այս անբարբառ
Է ձեր օծեալ Տէրն մեծափառ:

3. Մեծ լինի արդ ձեր ցընծութիւն,
Որ Տէրն առաւ մարմին, արիւն.
Հիմայ ձեզ հետ Տէրն միացաւ,
Ճըշմարտապէս եղբայր եղաւ:

4. Ինչ վընաս պիտ տայ մեղքն ու մահ,
Տէրն ձեզ հետ է, եղէ՛ք վըստահ.
Թո՛ղ կատաղէ հին Թըշնամին,
Պաշտպան է ձեզ Աստծոյ Որդին:

5. Նա երբէք ձեզ չի թողնելու,
Եղէ՛ք միայն ծառայք հըլու.
Թէ փորձանքներ ձեզ պատահեն,
Դարձեալ վընաս ձեզ չի հասցնեն:

6. Վերջապէս դուք պիտի յաղթէք,
Տէր Յիսուսից միշտ գոհացէք.
Արդ նորան էք արինակից,
Ձեզ եղբայր է նա սրբատակից:

42. ՂՈՒԿ. 2, 11. Այսօր ձեզ Փրկիչ ծնաւ:

1. Լուռ գիշեր, սուրբ գիշեր.
Ծով ու ցամաք ննջէր.
Հայր և մայր հըսկէին ջերմ սիրով.
Գանգրահեր մանուկը ապահով
Հանգչումէր մեղմ քունով,
Հանգչումէր մեղմ քունով:

2. Լուռ գիշեր, սուրբ գիշեր.
Տես, դաշտում հովիւներ.
Նախ նորանց աւետիս տըրուեցաւ,
Հրեշտակներն երգեցին այս համբաւ՝
Քրիստոս Փրկիչն ծընաւ,
Քրիստոս Փրկիչն ծընաւ:

3. Լուռ գիշեր, սուրբ գիշեր.
Որդի Աստծոյ, Փրկիչ մեր,
Ո՜հ, ի՜նչպէս ժըպտումես քաղցրութեամբ,
Դու այսօր յայտնուեցար փրկութեամբ,
Կեանք տաս քո ծընընդեամբ,
Կեանք տաս քո ծընընդեամբ:

43. ՍԱՂ. 118, 24. Սա այն օրն է, որ Տէրն արաւ.
Թող ցնծանք և ուրախ լինենք սորանում:

1. Սա այն օրն է, որ Տէրն արաւ,
Մարդկանց համար մեծ տօն դարձաւ.
Թո՛ղ այն ամէնքն այսօր ցընծան,
Որ Քրիստոսով ըստեղծուեցան:

2. Աշխարհքն կարօտ էր Մեսիայի,
Մինչև լրումն ժամանակի.
Եւ ուղարկեց Հայրը վերից
Որդոյն, որ մեզ փրկէ մեղքից:

3. Որպէս զի մեզ նոր կեանք տուէր,
Խոնարհեցրիր դու քեզ, ո՛վ Տէր.
Այո՛, մեզ պէս մարմին առար,
Եւ մեզ համար Փրկիչ եղար:

4. Էմմանուէլ, դու ծընուեցիր
Խաղաղութեան իշխան ընտիր.
Քեզ, որ հայրերն ըսպասէին,
Կամի պաշտել միշտ իմ հոգին:

5. Դու մեծ բարիք և փրկութիւն,
Ընդունեցիր մարմին, արիւն.
Դու մեզ եղբայր, բարեկամ ես,
Դու մեզ Աստծոյ որդիք դարձնես:

6. Երգի՛ր, երկի՛նք, ձայնիւ հըզօր,
Զի սուրբ է այս ծընընդեան օր.
Զարթի՛ր, երկի՛ր, նոյնպէս և դու
Տիրոջ մի նոր երգ երգելու:

44. ՍԱՂ. 68, 5. Երգեցէք Աստուծուն, սաղմոս ասացէք Նորա անունին. Ճանապարհ պատրաստեցէք անապատի միջովը հեծած եկողին.

P. 85.

1. Քեզ ենք երգում, Էմմանուէլ,
Որ կեանք, շնորհք ես մեզ տուել.
Երկնից զարդ ես և Լոյս մարդկանց,
Կոյսից ծընուած, ով Տէր Տէրանց. Ալէլուիա:

2. Մենք երգումենք քո զօրաց հետ
Քո գովասանքն, քո փառքն յաւէտ.
Ո՜հ, ի՜նչ մեծ և ցանկալի հիւր
Այցելեց մեզ շնորհօքն իւր. Ալէլուիա:

3. Ըսկիզբից են քեզ ըսպասած,
Շատ սըրտեր են քեզ փափագած.
Ակընկալած են շատ դարեր
Մեր հայրեր և մարգարէներ. Ալէլուիա:

4. Արդ եկած ես, Տէ՛ր, Սիօնից
Եւ մըրրի մէջ իջած յերկնից.
Փոքր՝ բայց ամէն ինչ մեծ առնես,
Մերկ՝ բայց աշխարհք պայծառացնես. Ալէլուիա:

6. Դու ինքդ աղբիւր ուրախութեան,
Բայց չափ չըկար քո տըխրութեան.
Ազգերին ես մըխիթարիչ,
Բայց ինքդ չ՚ունիս մի ցաւակից. Ալէլուիա:

7. Ես կամիմ, քեզ, մանկի՛կ Յիսուս,
Ընտրել որպէս զարդ իմ հոգոյս.

Սիրումեմ քեզ, աւա՜ղ, ո՛չ շատ.
Շատ սիրելու տուր սէր առատ. Ալէլուիա:

8. Կեանքիս Տէրն ես լիակատար.
Հոգիս յօժար՝ կամքս է տըկար.
Թշուառ սիրտըս, ով Տէր, քեզ տամ,
Դու գըլուխ ես և ես անդամ. Ալէլուիա:

9. Ալէլուիա՜, քեզ աստ կերգեմ,
Մինչև փառաց պալատն մըտնեմ.
Ո՜հ, ի՜նչ ցընծում պիտի լինի,
Երբ քեզ կերգենք անլըռելի. Ալէլուիա:

45. Վեր կա՛ց, լուսաւորուի՛ր, վասնզի լոյսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վերայ:

P. 38.

1. Տեսէք չըքնաղ այս տեսարան,
Սև գիշերն է ջինջ, անըրման.
Մի մեծ լոյս է հանդէս գալիս
Եւ աստղերին փախուստ տալիս:

2. Եւ կայ նոյնպէս մի մեծ Փարոս,
Դա է մեր Տէր Յիսուս Քրիստոս.
Երբ նա եկաւ, մութ էր աշխարհն,
Նա փարատեց մեղքի խաւարն:

3. Նա է Աստծոյ միակ Որդին,
Ծնուեց փրկել մեր աշխարհքին.
Նա դըժողքին, մահին յաղթեց,
Եւ մեզ Աստծոյ հետ հաշտեցրեց:

4. Ուստի ձայնէք հրեշտակաց հետ
Փառք ի բարձունս Աստծուն յաւէտ.
Երկրիս վերայ խաղաղութիւն,
Նա և մարդկանց մէջ հաճութիւն։

46. ՓԻԼ. 4, 4. Ուրախ եղէք Տէրումը ամեն ժամանակ, դարձեալ ասումեմ՝ ուրախ եղէք։

1. Ո՛վ դու բերկրալի, ո՛վ երանելի
Օր ծննդեան շնորհաբեր.
Աշխարհքն էր կորած,
Քրիստոս է ծնուած.
Ուրախ, ուրախ կացէք, դուք ո՛վ սուրբեր։

2. Ո՛վ դու բերկրալի, ո՛վ երանելի
Օր ծննդեան շնորհաբեր,
Քրիստոս յայտնուեցաւ,
Մեր մեղքն քաւուեցաւ.
Ուրախ, ուրախ եղէք, դուք ո՛վ սուրբեր։

47. Բ. ԿՈՐ. 8, 9. Գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացաւ, Նա որ հարուստ էր։

1. Մեր սրտերը պէտք է ցնծան
Այս ժամեր — այս օրեր.
Բոլոր հրեշտակք փառք տան
Նորա անհուն ողորմութեան,
Յիսուս Տէր — Փրկիչ մեր.
Քրիստոս ծնուաւ, փառք նրան։

2. Միթէ կարէր Տէրն մեզ տալ,
Ցոյց տուաւ — սէրն անբաւ.
Ամենից առաւել
Հաճեց Աստուած սատ ուղարկել
Իւր Որդին — Միածին.
Կորածներիս գտնել։

3. Արդ դըրուած է փոքրիկ մսուրում,
Կանչէ մեզ — ինձ և քեզ.
Քաղցրութեամբ է ասում,
Եկէք ինձ մօտ, կեանք կայ ինձնում.
Ձեզ կայ կեանք — ձեզ կայ փառք
Եւ աղբիւր անապատում։

4. Եկէք՝ եղբա՛րք, ուրախ վազենք,
Մեծ, փոքրիկ — մարդ, կնիկ.
Միատեղ նրան ձըգտենք.
Այս զուտ սէրին մենք շատ սիրենք.
Ողորմած — մեր Աստուա՛ծ,
Օրհնեալ փրկչին գովենք։

5. Մեծ փրկութիւն, ո՜հ, տո՛ւր ինձ լոյս,
Եղիր արդ — անձիս զարդ
Տո՛ւր հաւատ, սէր և լոյս
Օգնիր ինձ, զի ես, ո՛վ Յիսուս,
Եմ կարօտ — գալ քեզ մօտ.
Շնորհք տո՛ւր եկելոյս։

48. ՂՈՒԿ. 2, 13. Այն հրեշտակի հետ եղաւ երկրաւոր զօրաց մի բազմութիւն, Որ Աստծոյն օրհնումէին։

Dölker 28.

1. Սուրբ հրեշտակք երգին, փառք մեծին Աստուծոյ,
Նոյնպէս ամէն սրտեր փառք տան գոհութեամբ.
Տէ՛ր, ծագի՛ր մեր սրտի մէջ արեւն լուսոյ,
Եւ տո՛ւր խաղաղութիւն Փրկչի գալստեամբ։

2. Եւ սուրբ հրեշտակք երգեն մարդոց հաճութիւն,
Նոյնպէս ամենայն մարդ գոչէ մեծաձայն.
Թող մի կողմ դընենք ոխն ու ատելութիւն,
Սէրն ու խաղաղութիւն հաստատուն մընան։

3. Փառք մեր Աստուծուն և Որդոյն միածին,
Մի մանուկ ծնուեցաւ, որ մեզ փրկումէ.
Եւ քարոզում թողութիւն մեր մեղքերին,
Իւր հօտին սիրով նա կառավարումէ։

4. Ցընծացէք, մարդիկ, մեր Փրկչի ծընընդով,
Թո՛ղ ամէն սրտեր նրա համար պատրաստուեն.
Օրհնեն և քարոզեն, գովեն երգերով
Յիսուսի մեծ սէրն. ալէլուիա՜, ամէն։

ՏԱՐՈՒԱՑ ՎԵՐՋԸ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ։

49. ՂՈՒԿ. 13, 8. Տէր, այս տարի էլ թող դորան։

P. 199.

1. Տարին ահա անցաւ գընաց,
Առանց այլ և յետ գալու.
Տո՛ւր քո առջևդ, Յիսո՛ւս գըթած,
Մեր ուխտը նորոգելու.
Մենք եղել ենք ուխտադրուժ,
Օգնի՛ր և տուր զօրութիւն, ուժ,
Որպէս մինչ ցարդ օգնել ես։

2. Մինչ ցարդ դու մեզ ճանապարհին
Ղեկ էիր և ղեկավար.
Օրհնիր և այժմ մեր նոր տարին,
Խընամք արա հայրաբար.
Ո՛վ Տէր Յիսուս, քեզանից զատ
Ո՛չ ոք չունենք, ո՛չ մի անհատ,
Դո՛ւ մեզ մինչ ցարդ օգնել ես։

3. Շընորհքըդ է յաւիտեան նոր,
Ամէն օր, ամէն տարի.
Դէպ լուսոյ վայր, դէպ խաւար ձոր,
Վարես մեզ, հովիւ բարի.
Փառք քեզ, որ դո՛ւ ի սէր անուանդ,
Ի սէր խաչիդ և քո արեանդ
Օգնել ես և պիտի օգնես։

50. ԳՈՐԾ. 4, 12. Եւ էլ մի ուրիշ ոչ մէկով փըր-
կութիւն չկայ, որովհետև ուրիշ անուն էլ չկայ
երկնքի ներքև մարդկանց տրուած, որով կարելի
լինի փրկուիլ. բայց միայն Յիսուս անունը։

Ր. 161.

1. Յիսուս է նըշանաբան
Այս նոր տարուայ սէմի վերայ.
Յիսուս անունն միայն
Որպէս դրօշակ Աստուած կուտայ,
Որ մեր ուխտը կատարենք
Եւ իւր ճամբովը քայլենք։

2. Փըրկչի խօսքը և անուն
Պիտի հընչեն սուրբ ժողովքում.
Եւ երբ մըտնենք մենք այն տուն,
Ուր նորա խօսքն է քարոզւում.
Կըտեսնենք իւր անուան փառք,
Լինեն մեր սըրտերն տաճարք։

3. Ամեն հոգսեր, ամեն վիշտ
Քաղցրանումեն իւր սուրբ անուամբ,
Եւ ամեն դառնութիւնք միշտ
Օգուտ են մեզ իւր օրհնութեամբ.
Դիմելով այս անունին՝
Հոգսներըս կըփարատին։

4. Հիմայ կամենք մեր ճամբան
Տէր Յիսուսի անուամբ գընալ.
Երբ ուղեցոյց ունինք նրան՝
Յայնժամ կարենք կանգուն մընալ.

Նորա շնորհաց վառ լոյսով
Կարենք լինել ապահով։

51. ՍԱՂ. 40, 12. Քո ողորմութիւնն և հաւատար-
մութիւնը միշտ թող պաշտպանեն ինձ։

Ր. 12.

1. Արդ թողէք՝ առաջ գընանք,
Տիրոջ օրհնենք և փառք տանք.
Մեր կեանքը մինչև հիմայ
Զօրութիւնով պահած է նա։

2. Մեզ տանումէ Յիսուսը
Մէկ տարուց դէպ միւսը.
Մենք ապրումենք օրէցօր,
Հընից անցնում դէպի նոր։

3. Թո՛ղ ամեն ծեր և մանուկ
Բռնեն, ո՛վ Տէր, քո բազուկ.
Որբերին Դու հայր եղի՛ր,
Մոլորեալըն ոտնիր։

4. Քո շընորհքը, Տէ՛ր գըթոտ,
Նոր է ամեն առաւօտ.
Մարդիկ ինչ անել կարեն,
Թէ քո աչքերն չըհըսկեն։

5. Օգնի՛ր, Տէ՛ր, հիւանդներին,
Ըսփոփիր տըրտմեալներին.
Թո՛ղ հոգիդ մեզ պատրաստի
Եւ մինչ երկինք մեզ վարի։

52. ՂՈՒԿ. 13, 8, 9. Տէր այս տարի էլ թող դորան, ...թերևս պտուղ բերի։

P. 121.

1. Տարուց տարի ժամանակը
Անցնում՝ գընում անհետ.
Թող յիշենք մեր նըպատակը,
Ջանանք լինել պըտղաւէտ.
Երանի թէ ամէն տարի
Պըտուղ տայինք նոր և բարի։

2. Մեր պըտուղներն, ա՜խ, ո՞ւր են, ո՞ւր,
Որ մեր կեանքը պիտի տար.
Տէրն պըտրում, սակայն իզուր,
Ո՜հ, ի՜նչպէս է վըշտահար.
Ա՜խ, սա նորա սըրտին ցաւ է,
Որ պտղի տեղ տերև գըտնէ։

3. Կըտրէք սորան, ասում նա,
Սա չունի ոչ մի պըտուղ.
Ինչո՞ւ երկրին խափանէ դա,
Ժամանակն է թանգ և սուղ.
Բայց Փըրկիչը մեզ խընայեց.
Այս տարի էլ մընայ՝ ասեց։

4. Տո՛ւր զօրութիւն և հիւթ, ով Տէ՛ր,
Որ քեզ համար պըտուղ տանք.
Արա Հոգովդ քո պըտղաբեր
Մեր նիստ ու կացն և մեր կեանք,
Նոյնպէս ամբողջ մեր գերդաստան,
Որ լեցուի քո ըշտեմարան։

ՉԱՐՉԱՐԱՆՔ.

53. ԵՐԵՄ. 17, 14. Ինձ բժշկիր, ով Տէ՛ր, և ես կըժշկուեմ. Փրկիր ինձ, և ես կփրկուեմ, վասնզի իմ պարծանքը դու ես։

P. 288, 290.

1. Տէ՛ր, քեզ ողջոյն հազար անգամ,
Որ ինձ ընդ միշտ սիրած ես.
Քեզ ցաւեցրի, մեծ բարեկամ,
Բայց դու ինքըդ տուժած ես.
Ա՜խ, ինչպէս ես ուրախ եմ,
Երբ ծընկաչոք գալիս եմ
Քո խաչիդ մօտ, ուր մեռնումես,
Եւ ուր իմ անձն ազատումես։

2. Բուժիր ինձ, ո՛վ դարման Հոգոյս,
Ես թոյլ եմ և ցաւակար.
Դու կազատես ինձ եղկելոյս
Եւ անձն իմ բազմաչարչար.
Թ՛ող իմ մեղքն ադամական
Եւ իմ մեղքերն սեպհական։
Ո՛վ մեծ բըժիշկ, քո արիւնը
Փարատէ իմ նեղութիւնը։

3. Քո արիւնոտ վէրքերն գըրիր,
Ո՛վ Տէր, շատ խոր իմ սըրտում,
Որ նոցա վրայ ես ուշադիր
Նայեմ ամբողջ իմ կեանքում.
Իմ միակ իջևանը
Է խաչիդ պատուանդանը.

Ա՜խ, ասա ինձ, Յիսուս իմ Տէր,
«Ես, ես ջնջեմ քո շատ մեղքեր։

54. ԵՍԱՅ. 50, 6. Իմ թիկունքը տուի հարուածող-ներին, և իմ ծնօտը՝ կափողներին. իմ երեսը չըծածկեցի նախատինքից և թուքից։

P. 237.

1. Ո՛վ գլուխ լի վէրքերով
Եւ արեամբ շաղաղուած.
Ո՛վ գլուխ լի փուշերով,
Խոցուած և պըսակուած.
Ո՛վ գլուխ, դու երկընքում
Պատուած էիր փառօք,
Իսկ ինձ համար աշխարհքում
Խոնարհուեցիր ցաւօք։

2. Ո՛վ երես պայծառափայլ,
Աշխարհք փախչէր քեզնից,
Իսկ ինձ համար պըպըեալ
Այժըմ թուք ու մուրից.
Ահա այդպէս փըշըեցիր
Այն հին օձի գըլուխ.
Փառք քեզ, Տէր, որ յաղթեցիր,
Այո՛, փառք սըրտաբուղխ։

3. Փառք քեզ, Տէ՛ր, որ հին իժը
Վէրք ունի մահացու.
Դու կըրեցիր պատիժը՝
Ինձ յաւերժ փըրկելու.
Ի՞նչ խօսքով, Աղբի՛ւր բարեաց,
Գովեմ քեզ երկրիս վրան.
Քո սէր և գութ անմոռաց
Սըրտումս պահուած մընան։

4. Ես կամիմ քո մօտ մընալ,
Մի անարգիր խեղճիս,
Ես քեզնից չեմ հեռանալ,
Կ'աղաչեմ գըրկիր զիս.
Երբ գլուխդ ծըռած տեսնեմ
Մահիդ վերջին ժամին,
Սըրտանց ես քեզ կըգըրկեմ
Իմ թեւերիս միջին։

5. Երբ այս երկրից հեռանամ,
Քեզ ինձ ցոյց տուր ինքըդ.
Երբ մեռնեմ ես մի անգամ՝
Տար ինձ քո երկինքըդ.
Երբ տագնապն իմ շատանայ՝
Ցաւք լինին բազմաթիւ՝
Ա՜խ, շուտ թո՛ղ այդ վերանայ
Քո տանջանաց շնորհիւ։

6. Վերջում ե՛կ, ո՛վ իմ Տէրը,
Մահուան ցաւիս տո՛ւր վերջ.
Թող տեսնեմ քո պատկերը
Խաչիդ նեղութեան մէջ.
Յայնժամ կամիմ քեզ նայել,
Հաւատալով վըստահ,
Եւ քեզ իմ կուրծքին սեղմել,
Քաղցր է այսպէս մի մահ։

55. ԵՍ. 53, 7. Ինչպէս մի ոչխար, որ մորթուելու է տարւում, և ինչպէս մի մունջ մաքի իւր խուզողների առջև, այնպէս իւր բերանը չբացաւ։

P. 221.

1. Գառն Աստծոյ, անմեղ, արդար,
Խաչափայտի վերայ զենուած.
Միշտ համբերող գտնուեցար,
Թէպէտ էիր արհամարհուած.
Բարձար մեղս մեր ամենուս,
Ապա թէ ոչ էինք անյոյս.
Ողորմիր մեզ, Տէ՛ր մեր Յիսուս։
(Երեք անգամ կրկնել միևնոյն երգը)։

56. ՄԱՏ. 26, 38. Հոգիս մեռնելու չափ տրտմած է, այստեղ մնացէք, և ինձ հետ արթուն կացէք։

P. 161.

1. Գեթսեմանի պարտէզն մտէք,
Ո՛վ դուք չարից հալածուածներ.
Ձեր Տիրոջ կռիւն տեսէք
Այն ահաւոր խաւար գիշեր.
Իւր խաչից յետ մի քաշուիք,
Որ աղօթել սովորէք։

2. Գընացէք մինչ այն ատեան,
Ուր որ փառաց Տէրն անարգուի.
Իւր վշտին ի՞նչ կայ նման,
Ո՜հ, ցաւերով է սիրտը լի.
Ա՜խ, ցաւից յետ մի քաշուիր,
Խաչըդ առ և հետևիր։

3. Թող Գողգոթայ վեր ելնեն
Մեղքից տանջուած թշուառ մարդիկ.
Աստուծոյ Որդոյն նայեն,
Եւ տեսնեն մեծ հրաշալիք.
«Կատարուած է» նա գոչէ,
Թող ամեն մարդ նրան դիմէ։

4. Դէպ գերեզման թող փութանք,
Ուր թաղուեցաւ նորա մարմին.
Անդ դատարկ է՝ ո՞ւր գընանք,
Ո՞վ վեր առաւ անդից Տէրին.
Տէրն յարեաւ, կենդանացաւ,
Մեզ ևս նոյն խոստմունքն տուաւ։

57. Ա. ՊԵՏ. 2, 24. Քրիստոս մեր մեղքերն իր մարմնումը խաչափայտի վերայ բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարութեան համար ապրենք։

P. 37.

1. Երբ այն խաչի վերայ նայիմ,
Ուր որ մեռաւ փառաց Տէրն իմ՝
Շահըս վընաս ես համարիմ,
Հըպարտութիւնս ես անարգեմ։

2. Չը պարծենանք ուրիշ բանով,
Այլ միայն մեր Փըրկչի մահով.
Նորա մահն է վասն մեր փըրկանք,
Երանութիւն և անվերջ կեանք։

3. Տե՛ս, իւր գըլխից, ձեռքից, ոտքից,
Արիւնշաղաղ իւր կողմուածքից

Միասին սէր և սրբութիւն
Երևումն մեր աչքերուն։

4. Այսպէս Տիրոջ անհուն սիրոյն
Արժան է տալ կեանքըս ողջոյն.
Ո՛վ իմ անձըս, ցընծա՛, բերկրիր,
Միշտ, հանապազ Տիրոջ օրհնիր։

58. ՂՈՒԿ. 23, 44. Եւ ժամը վեցի դէմ էր և բոլոր երկրի վերայ խաւար եղաւ մինչև իննը ժամը։

P. 117.

1. Ո՜հ, կէս օրին՝ մութ գիշե՞ր.
Երկինքը խաւար պատեց.
Պատռեցան կարծր քարեր,
Ի՞նչ են այս նշաններ մեծ.
Ո՛վ մանկունք, այն պատճառաւ,
Որ Տէրն ի Գողգոթայ մեռաւ։

2. Թափուեց նորա թանգ արիւն
Ձեռներից, ոտքից, կողից.
Կորուեց շնչառութիւն,
Մեռաւ ծանր հոգսերից.
Ո՛վ մանկունք, այն պատճառաւ,
Որ Տէրն ի Գողգոթայ մեռաւ։

3. Իւր երկնային լոյս աթոռ
Փոխեց գերեզմանի հետ.
Ահաբեկ՝ վըշտից խոր՝
Ընդունեց մահուան աղէտ.
Ո՛վ մանկունք, այն պատճառաւ,
Որ Տէրն ի Գողգոթայ մեռաւ։

4. Դուք եղաք դաժան և չար,
Արժան նրա սուրբ բարկութեան.
Նա փրկելու իջաւ վայր,
Բերեց լոյսն ողորմութեան.
Ով մանկունք, այն պատճառաւ,
Որ Տէրն ի Գողգոթայ մեռաւ։

5. Եկէ՛ք, մանկո՛ւնք, բերկրալեր
Ձեռք բարձրացրէ՛ք աղօթքով՝
Ո՛վ Տէր, դու մեզ ներիր
Զօրաւոր բազուկներով.
Ո՛վ մանկունք, այն պատճառաւ,
Որ Տէրն ի Գողգոթայ մեռաւ։

59. ՀՌՈՎՄ. 8, 35. Ապա ո՞վ կբաժանէ մեզ Քրիստոսի սէրից..... ոչ մէկ բան կարող է մեզ բաժանել Աստծոյ սէրից, որ Տէր Յիսուս Քրիստոսումն է։

P. 290.

1. Խաչի վրայինն է իմ սէրը,
Իմ սէրն է Քրիստոս Յիսուս.
Հեռու ինձնից չար գևերը
Եւ մեղքը հոգեկորոյս.
Ձեր սէրը չէ ի վերուստ,
Սակայն մահ է և կորուստ.
Խաչի վրայինն է իմ սէրը,
Հաւատում եմ, ո՛վ իմ Տէրը։

2. Խաչի վրայինն է իմ սէրը,
Ո՛չ նեղութիւն, ո՛չ կսկիծ,
Ո՛չ սով և ո՛չ այլ ցաւերը
Զե՛ն զատել ինձ իմ Փրկչից,
Վայ ինձ՝ թէ խաչն անարգեմ
Եւ մեղանչեմ արեան դէմ.
Խաչի վրայինն է իմ սէրը,
Հաւատում եմ, ով իմ Տէրը։

3. Խաչի վրայինն է իմ սէրը,
Ե՛կ, ով մահ, իմ բարեկամ.
Երբ փլտին իմ անդամները,
Յիսուսին հետ միանամ.
Այնտեղ կը տեսնեմ Գառին
Եւ իմ Հոգոյս Փեսային.
Խաչի վրայինն է իմ սէրը,
Հաւատում եմ, ով իմ Տէրը։

60. Ա. ՊԵՏ. 1, 18. Փրկուեցաք Քրիստոսի պատուական արիւնովը ինչպէս մի անբիծ և անարատ Գառի։

1. Իմ Յիսուսը արիւն թափեց,
Զոհուեց կեանքն թագաւորիս.
Եւ իւր հոգին նա աւանդեց
Վասն իմ յանցաւորիս.
Գառն՝ Աստուծոյ սիրելին.
Գառն՝ Գողգոթայ սարին.
Գառն՝ զոհուած մահին.
Հօր մօտ ինքն մեր Տէր
Բարեխօսէ վասն մեր։

2. Վասն յանցանաց, որ գործեցի,
Հառաչեց խաչի վերայ.
Ո՜հ, ի՜նչ շնորհք ընդունեցի,
Անպատմելի է դա.
Գառն՝ Աստուծոյ.....

3. Պիտի արեւն երեսն ծածկէր,
Եւ նրա լոյսը թագ կենար.
Երբոր մեռաւ ինքը մեր Տէր
Մեղաւորաց համար.
Գառն՝ Աստուծոյ....

4. Ո՜հ, մեծ ամօթ եմ ես քաշում,
Խաչըն ի վեր նայելուց.
Սիրտս է հալւում ու հառաչում,
Յաղթւումեմ այդ սիրուց.
Գառն՝ Աստուծոյ....

5. Բայց արտասուքս մի վճար չեն,
Քո մեծ սիրոյդ, Տէր իմ,
Սիրտս տալիս եմ քեզ այս օրէն,
Ուրիշ մի բան չ՚ունիմ.
Գառն՝ Աստուծոյ....

61. ՅՈՎ. 1, 29. Ահա Աստուծոյ Գառն, որ վեր է առնում աշխարհքի մեղքը։

P. 328.

1. Մի Գառնուկ, որ լուռ կըրումէ
Աշխարհքիս մեղաց բեռը.
Այո՛, հեզիկ նա տանումէ
Մեղաւորաց մեղքերը.

Տե՛ս, տանումեն ըսպանդանոց,
Կըրումէ վիշտ, տանջանք և խոց,
Ջունի ոչ մի ըսփոփանք.
Նա յանձն առաւ ծառը լինելու,
Եւ պատրաստ էր խաչ կըրելու.
Կամաւ կըրեց այս տանջանք:

2. Այս Գառնուկն է մեծ բարեկամ
Եւ Փըրկիչը իմ հոգույս.
Աստծուց ընտրուեց նա մի անգամ
Քաւիչ լինել եղկելույս.
—«Գը՛նա և տես, ո՛վ իմ Որդիս,
Իմ ապըստամբ որդիներիս.
Թէ և նրանք մեղանչելով՝
Պիտ կըրէին պատիժ, աղէտ.
Բայց հաշտեցրո՛ւ նոցա ինձ հետ,
Քո արիւնըդ թափելով»:

3. Այո՛, ո՛վ Հայր, այո՛, սըրտանց
Կը կատարեմ բոլորը.
Ես քո կամքըդ չեմ անիլ զանց,
Ինձ թանգ են քո խօսքերը.
Քեզ համար, Սէ՛ր անպատմելի,
Անկարելին է կարելի.
Սէրն Միածնոյն ցած բերաւ.
Ո՛վ սէր, ո՛վ սէր, դո՛ւ զօրեղ ես,
Դու մահիցն էլ զօրաւոր ես.
Քեզնով Վէմը ճեղքուեցաւ:

4. Իմ մըտքից քեզ չըպիտ հանեմ
Կեանքիս ամեն օրերում.
Սիրոյ բազկով քեզ կը գըրկեմ,
Ինչպէս դու ես ինձ գըրկում.
Դո՛ւ ես լոյս և ճըրագ սըրտիս:
Սըրտիս երակը կանգնելիս՝
Դո՛ւ ինքդ իմ սիրտը եղիր,
Արդ իմ պարծանք, իմ սիրական,
Ես քո գերիդ եմ սեպհական,
Ինձ քո սիրովդ կապկապի՛ր:

5. Մահից չունիմ ոչ մի սարսափ,
Արեամբ եմ ես կենդանի.
Երբ նեղէ ինձ արեւի տապ,
Դու լինես ինձ հովանի.
Երբ նեղութեանց ալիքներէն
Քշուի նաւակն իմ դէս ու դէն,
Որպէս խարիսխ քեզ ունիմ.
Տէ՛ր, պիտ գովեմ քո քաղցըր սէր,
Եւ միշտ լինեմ քեզ անձնուէր,
Եւ բարութեանդ վըստահիմ:

6. Երբոր մըտնեմ ես վերջապէս
Ինձ խոստացուած մեծ հանգիստ,
Արիւնն լինի պիտ այն բեհէզ,
Որի մէջ կը ծածկուեմ միշտ.
Եւ կունենամ իմ գըլխիս թագ,
Կ'օրհնեմ, կ'երգեմ ես շարունակ

Հօրըս աթոռի առջև.
Եւ, ո՜հ, քեզ մօտ, Սէ՛ր անաղարտ,
Ինչպէս մի հարս գեղեցկազարդ
Պիտի կանգնեմ յարատև:

62. ՂՈՒԿ. 23, 22. Ապա ի՞նչ չար բան գործեց սա, ոչինչ մեռնելու յանցանք չըգտայ սորանում:

P. 48.

1. Սիրական Յիսուս, ի՞նչ յանցանք ունեցար,
Որ չար աշխարհքից այդպէս խիստ դատուեցար.
Ի՞նչ էր մեղքըդ, ա՜խ, ընդդէմ ո՞ր օրինաց
Ես դու մեղանչած:

2. Ո՜հ, դու ծեծւում և փուշով պըսակւում ես,
Ո՜հ, ծաղրւում և ամբոխից ապտակւում ես.
Ա՜խ, ինչո՞ւ են լեղի և քացախ մեկնել,
Քեզ սուրբիդ խաչել:

3. Ի՞նչ է պատճառն այդ դառը չարչարանաց,
Ա՜խ, պատիժ կըրեցիր վասն իմ յանցանաց.
Ես եմ, ո՛վ Տէր Յիսուս, բուն մեղանչողը,
Իսկ դո՛ւ պատժւողը:

4. Բայց այս պատիժն է յոյժը տարօրինակ,
Որ հովիւն կըրէ իւր ոչխարաց տեղակ.
Ազնիւ տանուտէր կամաւ վըճարէ արդ
Իւր ծառայից պարտ:

5. Ոտից ցըգլուխ պատած էր մեղք և չարիք,
Զըկար ինձ վրայ և ինձնում ո՛չ մի բարիք.
Ես պիտ դըժողքում յաւիտեան լինէի,
Պատիժ կըրէի:

6. Ո՛վ դո՛ւ մեծ Սէր, ո՛վ Սէր անհուն, անսահման,
Որ ենթարկեցիր քեզ դառնադէտ մահուան.
Ես կեանք վարէի անհոգ, զուարճալի,
Իսկ դու խաչուեցիր:

7. Ո՛վ մեծ Թագաւոր, մեծ՝ ամեն դարերում,
Վարժեցրո՛ւ, որ սէրըդ պատմեմ աշխարհքում.
Ո՛չ ոք չէ կարող բերել դահիդ առջև
Քեզ արժան պարգև:

8. Իմ տըկար միտքը, ո՛վ Տէր, ո՞ւր կը հասնէ,
Եւ ողորմութիւնդ ի՞նչի հետ բաղդատէ.
Քո սիրոյդ փոխարէն ի՞նչ հատուցանեմ
Եւ ի՞նչ վըճարեմ:

9. Սակայն, Տէ՛ր, քեզ սա է հաճելի մի զոհ,
Որ զըսպեմ չար կըրքերս, լինեմ ողջախոհ.
Եւ խաչիդ նայեմ, որ մի գուցէ նորից
Ապրեմ մեղսալից:

10. Տէ՛ր Յիսուս, աթոռիդ շուրջը կանգնելով,
Յաւիտեան փառաւոր պըսակ կըրելով՝
Պիտ ամեն սըրբոց հետ քեզ անկեղծ սըրտիւ
Տամ փառք և պատիւ:

63. *ԵՍԱՅ. 53, 5. Նա մեր մեղքերի համար վիրաւորուեցաւ և մեր անօրէնութիւնների համար հարուածուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը նորա վերայ եղաւ։*

P. 288, 290.

1. Ո՛վ Տէր Յիսուս, քո խոր վէրքեր,
Քո դառը մահ և տանջանք
Տալիս են ինձ ուրախ օրեր
Եւ վշտիս մէջ մխիթարանք,
Երբ չար փորձանքն ինձ նեղէ,
Թող տագնապդ իմ միտքն ընկնէ.
Եւ մեղաց հետ անել կատակ՝
Կ'արգիլէ ինձ փըշեայ պըսակ։

2. Տէ՛ր, մեղքը ինձ ցաւացնելիս՝
Վէրքերդ տալիս է ինձ ոյժ.
Իմ սիրտն վէրացդ մէջ թաղուելիս՝
Գըտնումէ հանգիստ անուշ.
Եւ քո սիրոյ քաղցրութիւն
Քաղցրացնէ իմ դառնութիւն.
Դու ինձ համար կեանք շահեցիր,
Երբ քո կեանքը դու զոհեցիր.

3. Քեզ վերայ իմ ես յոյս կապում,
Ապաստան ես թանգագին.
Մահըն էլ ինձ չէ ըսպանում,
Մահովդ յաղթեցիր մահին.
Երբ քեզնում մաս ունենամ՝
Այն ժամանակ կըցընծամ.
Քո շընորհքը տալիս է յոյս,
Սուրբ յարութիւն և կենաց լոյս։

4. Երբ իմ կախումն է քեզանից,
Ով աղբիւր բարութեամբ լի,
Կ'անցնեմ մահուան ճըգնաժամից,
Ինձ մի ցաւ չէ՛ ըզգալի.
Քեզնում կայ տեղ թագըստեան,
Հանգիստ և ե՛լք փըրկութեան.
Ով որ վէրացդ մէջ է ծածկուել,
Նա կարող է միայն յաղթել։

64. *ԵՍԱՅ. 53, 6. Մենք ամենքս ոչխարների պէս մոլորուեցանք, իւրաքանչիւրն իւր ճանապարհին դարձաւ, և Տէրը նորա վերայ դրաւ մեր մեղքը։*

P. 360.

1. Ո՛վ Տէր Յիսուս կեանքն իմ կեանքիս,
Ով Յիսո՛ւս, մահիս մահը.
Դու զոհուեցար փըրկելու զիս,
Տանելով խաչի ահը.
Ո՞հ, դու անչափ խոնարհուեցիր,
Եւ ինձ մահից ազատեցիր.
Հազար, հազար անգամ քեզ
Փառք լինի, ո՛վ Յիսուս հեզ։

2. Աշխարհքը քեզ ծաղր է արել,
Ցոյց տուել արհամարանք.
Նա քեզ փուշով է պըսակել,
Բայց ինչո՞ւ այսչափ տանջանք.
Այո՛, որ ինձ փառաց թագ տաս,
Եւ խորտակես մեղաց շըղթաս.
Հազար, հազար անգամ քեզ
Փառք լինի, ո՛վ Յիսուս հեզ։

3. Ո՛վ Տէր, շատ խոր խոնարհուած ես
Հըպարտութեանս փոխարէն,
Դու իմ մահը քաղցրացրած ես՝
Փրկելով իմ մեղքերէն.
Քո անարգանք և ամօթը
Զարդարումեն ինձ քո մօտը.
Հազար, հազար անգամ քեզ
Փառք լինի, ո՛վ Յիսուս հեզ։

4. Արդ գոհութիւն բոլոր սրտանց
Վասըն ցաւոցդ ամենայն.
Վասըն վիրացդ և նեղութեանց
Վասըն խաչիդ և մահուան.
Վասըն քո մեծ չարչարանաց,
Վասըն սիրոյդ, մարդ և Աստուած.
Այո՛, քաղցր խօսքիդ համար
Քեզ պիտ գովեմ անդադար։

65. ԿՈՂ. 1, 14. Որի ձեռովն ունինք փրկութիւն նորա արիւնովը, մեղաց թողութիւնը։

P. 37.

1. Մենք գովումենք քեզ, Տէր Յիսուս,
Որ մեզ համար կամաւ մեռար.
Արդ քո արեամբ մենք լիայոյս
Կարենք մաքրուել, լինել արդար։

2. Եւ խնդրումենք, Աստուա՛ծ և մարդ,
՚Ի սէր հընգեակ քո սուրբ վիրաց
Փրկէ՛ր մեզ, զի ենք մեղապարտ,
Եւ վերջն ընդունիր գըրկաբաց։

3. Տէ՛ր, պահիր մեզ մեղքի չարից,
Եւ քո բազուկն մեզ կարկառիր.
Թո՛ղ խոյս չըտանք մենք մեր խաչից,
Գընանք ճամբով Աստուածընտիր։

4. Եւ թող միշտ քեզ ապաւինած՝
Հոգով աշխոյժ ու քաջ լինենք.
Մեզ հետ եղիր, ո՛վ Տէր Աստուած,
Որ խաչից յետ՝ պըսակ կըրենք։

ԹԱՂՈՒՄ.

66. ՄԱՐ. 15, 46. Եւ Յովսէփը կըտաւ առաւ, կտաւով պատեց և նորան մի գերեզմանի մէջ դրաւ, որ փորուած էր քարից։

P. 37.

1. Ո՛վ Տէ՛ր Յիսուս, որ հանգչեցիր
Գերեզմանում անդորրաւէ,
Հանգիստ քեզնում մեզ պարգևիր,
Դարձրո՛ւ մեր կեանք քեզ հաճելի։

2. Տէ՛ր, ամրացրո՛ւ մեր տըկար յոյս,
Դու որ արեամբ մեզ փրկել ես.
Թո՛ղ մենք տեսնենք երկնային լոյս.
Եւ քո հօրը պայծառ երես։

3. Պիտի արդիւնք տայ պատուական
Հատն ցորենոյ, ազնիւ քո սերմ.
Տո՛ւր որ, ո՛վ Տէր, մինչ գերեզման
Քեզ փափագեմ ես ջերմաջերմ։

4. Փառք և պատիւ, ո՜վ Աստծոյ Գառն,
Որ կրեցիր խաչի տանջանք.
Շնորհի՛ր, որ քո մահը դառն
Մի մուտք լինի մեզ դէպի կեանք:

67. *ՅՈՎ. 19, 30. Եւ երբոր Յիսուս քացախն առաւ՝ ասաց, կատարուած է և գլուխը խոնարհեցրեց և հոգին աւանդեց:*

P. 143.

1. Կատարուած է, նա հրաժեշտ տուաւ,
Տես աչքերն է արդէն փակուած.
Խաղաղութեան իշխանը մեռաւ,
Կենաց արեն մայր է մտած.
Գիշերն նորան պաշարած է.
Ո՜հ, ի՜նչ մեծ խօսք, կատարուած է:

2. Կատարուած է. ասել է Քրիստոս.
Սիրաբորբոք սիրտը պատռեց.
Մարմնացեալ Բանը մնաց անխօս.
Քարը կենաց Վէմին ծածկեց.
Մեծ զօրաւորն արդ յոգնած է.
Ո՜հ, ի՜նչ մեծ խօսք, կատարուած է:

3. Կատարուած է. էլ իմ մեղքերը
Չեն կարող ինձ դատապարտել.
Վերից լսում եմ այս խօսքերը,
Արեան բողոքն տեղ է հասել.
Դաշն հաշտութեան արդ կապուած է,
Ո՜հ, ի՜նչ մեծ խօսք, կատարուած է:

4. Կատարուած է. ա՜խ, ի՜նչ մեծ փափագ
Ունիմ դէպի քո գերեզման.
Քեզ շրջապատել կամին հրեշտակք,
Արա՛ սիրտըս քեզ օթևան.
Այնտեղ քեզ տեղ պատրաստուած է,
Ո՜հ, ի՜նչ մեծ խօսք, կատարուած է:

ԶԱՏԻԿ.

68. *Բ. ՏԻՄ. 2, 8, Յիշիր Յիսուս Քրիստոսին, մեռելների միջից յարութիւն առածին:*

1. Քրիստոս է յարեալ նահատակութիւնից,
Մեզ պիտոյ է արդ խնդալ, նա է մխիթարիչ.
Տէր, ողորմիր:

2. Եթէ նա չը յառնէր, աշխարհքն իսկ կը կորնչէր,
Յետ նորա սուրբ յարութեան, գովենք Յիսուս
Քրիստոս Մեսիան.
Տէր, ողորմիր:

Ալէլուիա՜, ալէլուիա՜, ալէլուիա՜.
Մեզ պիտոյ է արդ խնդալ, նա է մխիթարիչ.
Տէր, ողորմիր:

69. *Ա. ԿՈՐ. 15, 20. Քրիստոս յարութիւն է առել մեռելներից ինքը ննջածների առաջինեկը եղաւ:*

1. Հոգի՛ս, արթնացի՛ր,
Մութ գիշերն անցաւ.
Մեծ ձայնով գոչիր,
Քրիստոսը յարեաւ.

Գերեզման բացուեցաւ,
Քրիստոսը յարեաւ.
Անգութ մահն յաղթուեցաւ,
Քրիստոսը յարեաւ։

2. Նրա յարութիւնն է
Սըրբուած և օրհնուած.
Յաղթութիւնն նրանն է,
Ոսոխն է յաղթուած.
Ո՞ւր է յաղթութիւնդ, մա՛հ,
Այսօր յաղթուեցար.
Դըժոխք, ո՞ւր է քո ա՛հ.
Այսօր վերջացար։

3. Թէ և կը մեռնենք,
Կ՚առնենք յարութիւն.
Մարմնով կը լինենք
Նորոգուած, փայլուն.
Քո յարութիւնդ թող տայ
Մեզ ամուր հաւատ,
Կըրկին գալստեանդ վրայ
Հաւատանք հաստատ։

70. Ա. ԿՈՐ. 15, 57. Բայց շնորհակալութիւն լինի Աստուծուն, որ տուաւ մեզ յաղթութիւնը մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը։

P. 310.

1. Քրիստոս մահուամբ էր կապուած՝
Զոհուելով մեղաց համար.
Այժմ յարութիւն է առած,
Որ շնորհք տայ մեզ կենարար.

Ուստի թող երգենք, ցնծանք,
Աստծուն գովենք և գոհանանք
Եւ երգենք նրան. ալէլուիա՜, ալէլուիա՜։

2. Մեղքն մեզ կաշկանդակել էր,
Եւ չի կար ոչ մի անմեղ.
Ո՛չ ոք չ՚կար, որ խորտակէր
Մահուան կապանքը ահեղ.
Բայց Քրիստոս Աստծոյ Որդին
Եկաւ, յաղթեց մեղքին, մահին,
Մահն անզօր է. մահը յաղթուեց. ալէլուիա՜։

3. Կռիւ էր տարօրինակ,
Մահն ու կեանքը կռուէին.
Կեանքը տարաւ յաղթանակ,
Կըլանեց կեանքը մահին.
Սա է պատգամ սուրբ գըրոց,
Մահը չունի էլ իւր խայթոց.
Մահը եղած է խայտառակ. ալէլուիա՜։

4. Ճըշմարիտ զատկական Գառն,
Դա Տէրն է, Յիսուս Քրիստոս.
Նա կործանեց մահուամբ դառն
Մեղքն ու մահ և տարտարոս.
Դուռն սըրտիս արեան նըշան
Ունի ընդդէմ խայթիչ մահուան.
Ազատ եմ ես սատակիչէն. ալէլուիա՜։

5. Թող տօնենք այսօր, եղբա՛յր,
Վայելենք ճաշ փառաւոր.
Կանչել է Աստուած մեր Հայր,
Մաքրենք մեզնից հին խըմոր։

Քրիստոս ինքն է կերակուր,
Հոգւոյս սընունդ Աստուածատուր.
Միայն հաւատքով կարենք ապրել. ալէլուիա՜։

71. ՍԱՂ. 118, 24. Սա այն օրն է, որ Տէրն արաւ, Թող ցնծանք և ուրախ լինենք նորանում։

P. 85.

1. Արդ յայտնուած է օրն փառաւոր,
Մեր բերկրանքը չ'ունի սահման.
Յաղթանակեց Քրիստոս այսօր
Իւր թշնամեաց խմբին դաժան. ալէլուիա՜։

2. Մեղքին, մահին և դըժողքին
Եւ թշնամուն մեր ոխերից
Յաղթեց Փրկիչն մեր լիովին.
Նա, որ այսօր յարեաւ մահից. ալէլուիա՜։

3. Մահը պիտ իւր զոհը յետ տար.
Կեանքն է իշխում, զի նա յաղթեց.
Մահը մընաց ամօթահար.
Քրիստոս կեանքը ի յայտ բերեց. ալէլուիա՜։

4. Արև, երկիր, ողջ բընութիւն
Եւ ինչ առաջ կըրումէր ցաւ,
Արդ վայելեն մեծ բերկրութիւն,
Աշխարհքիս իշխանն վայր ընկաւ. ալէլուիա՜։

5. Երգենք ուրախ արդ մեծայոյս.
Ալէլուիա՜, երգ բերկրութեան.
Փառք քեզ, հա՛յր, որ Քրիստոս Յիսուս
Յարեաւ վասն մեր արդարութեան. ալէլուիա՜։

72. ՓԻԼ. 4, 4. Ուրախ եղէք Տէրոջումը, դարձեալ ասումեմ՝ ուրախ եղէք։

1. Ո՛վ դու պանծալի, ով երանելի
Օր զատկական աւետաբեր.
Աշխարհք գերի էր,
Յարեաւ Փրկիչ մեր.
Ուրախ, ուրախ կացէք, եղբայրներ։

2. Ո՛վ դու պանծալի, ո՛վ երանելի
Օր զատկական աւետաբեր.
Մահը յաղթուած է,
Կեանքը յայտնուած է.
Ուրախ, ուրախ կացէք, եղբայրներ։

3. Ո՛վ դու պանծալի, ո՛վ երանելի
Օր զատկական աւետաբեր.
Նա կամի, որ մենք
Նրա համար ապրենք.
Ուրախ, ուրախ կացէք, եղբայրներ։

73. ԿՈՂ. 3, 1. Արդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ապա խնդրեցէք վերինները, որ տեղ Քրիստոս է նստում։

P. 208.

1. Զարթիր, սիրտ իմ, գիշերն է անց,
Արևն է արդէն ծագած.
Քաջալերուի՛ր, վեր կա՛ց, ո՛վ անձ,
Ե՛լ քո Փրկչին ընդ առաջ.
Նա դուռն մահուան փըշրեց այսօր,
Իւր բազուկովը զօրաւոր
Ի նըպաստ ողջ մարդկութեան։

2. Վէր կաց մեղքի գերեզմանից,
Եւ նոր կեանք ըսկսիր վարել.
Քո հաւատքի ընթացքն այժմից
Ջանա՛ ճըշտիւ կատարել.
Զըգտի՛ր երկինք, անդ է Տէրը,
Եւ որոնիր վերինները,
Որպէս Որդի յարութեան։

3. Անցեալները թող մոռացուին,
Զըգտիր քո նըպատակին.
Քո սիրտն ու միտքն ուղղուած լինին
Փըրկչիդ պայծառ երեսին.
Արհամարհիր այս աշխարհը.
Սիրի՛ր բարին, ատի՛ր չարը,
Որ վերջն Փըրկչին հետ լինես։

4. Թէ հոգսերի ծանրը քարըն,
Ճըռչէ քեզ դէպ գերեզման.
Յայնժամ Յիսուս զօրավարըն
Դէն թաւալէ պիտ նորան.
Մի լինի՛ր տըրտում և տըխուր,
Ցաւդ տար Նըրան, մի հոգա՛ իզուր.
Կենդանի է. Նա յարեաւ։

5. Եւ Յուդայի այդ առիւծը
Տարած է մեծ յաղթութիւն.
Նա վէր առաւ մեր ծանր լուծը,
Արեամբն ունինք փըրկութիւն.
Մեզ համար բաց է յաւիտեան
Դուռն կենաց և ողորմութեան,
Թշնամին պիտի յաղթուի։

6. Ա՜խ, իմ Յիսուս, Դու, որ յարեար
Մահուան ցուրտ գերեզմանից,
Ազատիր Քո հօտին տըկար
Խաւարից և մութ բանտից,
Որ մուտ գործենք մենք միատեղ
Վերին տունը պայծառազեղ,
Եւ անդ երգենք քո երգը։

7. Պիտի գովուիս միշտ այս կեանքում
Աստուծոյ որդկանց ձեռքով.
Եւ հանդերձեալ կենաց փառքում
Յաղթողների բերանով.
Քո արեամբն են յաղթել նոքա,
Եղի՛ր մեզ հետ, ո՛վ Եհովայ,
Որ նոյնպէս և մենք յաղթենք։

74. Բ. ԿՈՐ. 2, 14. Շնորհակալութիւն Աստուծոյ, որ ամեն ժամանակ մեզ յաղթող է անում Քրիստոսում։

1. Մենք գովումենք քեզ, ո՛վ Քրիստոս,
Որ մահիցը այսօր յարեար.
Մահն յաղթեցիր, մեծ բարեխօս,
Անմահութիւնն ի յայտ բերար. ալէլուիա։

2. Ա՜խ, խընդրումենք ի սէր արեան
Հաճիր մեր մեղքն մեզ ներելու.
Օգնիր ըստ քո մեծ բարութեան,
Որ լինենք քեզ ծառայք հըլու. ալէլուիա։

3. Բարձրեալ Աստծուն, հօրն երկնաւոր
Եւ միածին նորա Որդուն,
Նոյնպէս հոգոյն սուրբ և հզօր
Լինի պատիւ և փառք անհուն. ալէլուիա՜։

75. ՀՌՈՎՄ. 8, 11. Եւ եթէ Յիսուսին մեռելներից յարուցանողի հոգին ձեզանում բնակած է, ապա Քրիստոսին մեռելներից յարուցանողը ձեր մահկանացու մարմիններն էլ կը կենդանացնէ իւր հոգովը, որ ձեզանում բնակած է։ (Հ. Գ.) Դուք մարմնով չէք, այլ հոգով։

P. 161.

1. Ապրում է Յիսուս փառքում,
Ո՞ւր է, ով մահ, քո զարհուրանք.
Ես կեանք ունիմ նորանում,
Նորա արիւնն է իմ փրկանք.
Մահից յետ կայ յարութիւն,
Սա է իմ վստահութիւն։

2. Ապրում է Յիսուս յերկին,
Եւ տիրում է տիեզերաց.
Ո՛հ, նորա հետ միասին
Պիտի իշխեմ ես անկասկած.
Նրա ուխտն է ճշմարտութիւն,
Սա է իմ վստահութիւն։

3. Ապրում է Յիսուս սիրով,
Ապաշխարող և խեղճ մարդկանց
Ընդունում է շնորհքով,
Եւ պարգևում երկնային գանձ.

Զըրի է նրա փրկութիւն,
Սա է իմ վստահութիւն։

4. Ապրում է Յիսուս ի լոյս,
Նա իմըս է և ես նորան.
Ես նրանով եմ լիայոյս,
Որ չեմ ընկնիլ մեղքի գարան.
Տըկարին տայ զօրութիւն,
Սա է իմ վստահութիւն։

5. Ապրում է Յիսուս բարի,
Տէրից խըլել ինձ չէ կարող
Ո՛չ իշխանը խաւարի,
Ո՛չ զարհուրանք, ո՛չ ահ ու դող.
Նա ինքն է իմ օգնութիւն,
Սա է իմ վստահութիւն։

6. Ապրում է Յիսուս իմ Տէր,
Մահով կեանքի մէջ կը մըտնեմ
Այդ գընումեմ դէպի վեր,
Եւ իւր շնորհքով տեղ կը հասնեմ,
Գովումեմ նորա անուն,
Սա է իմ վստահութիւն։

76. ԵՍԱՅ. 9, 3. Նորանք ուրախանումեն քո առջև՝ հունձի ժամանակի ուրախութեան պէս։

P. 141.

1. Ալէլուիա՜, զի Քրիստոս յարեաւ,
Գերեզմանը բաց թողնելով.
Աշակերտաց շուտ երևեցաւ,
Որ խընդան իւր յարութիւնով.

Ամէնքը Յիսուսին տեսին
Եւ մեծապէս ուրախացին։

2. Ալէլուիա՜, զի Քրիստոս յարեաւ,
Եւ վերջ տուաւ դառը մահուան.
Իրաններին Նա պատուէր տուաւ,
Որ քարոզեն Աւետարան,
Եւ հաղորդեն ամեն ազգի
Այս պատգամը երանելի։

3. Ալէլուիա՜, զի Քրիստոս յարեաւ,
Օրհնեալ լինի սուրբ յարութիւն.
Զօրութեամբ դէպ երկինք համբարձաւ,
Որ ուղարկէ մեզ Սուրբ Հոգուն.
Նա է իշխան արդարութեան,
Կեանք անվախճան և անսահման։

4. Ալէլուիա՜, զի Քրիստոս յարեաւ,
Մարմին առաւ փառաւորեալ.
Նա ինքը նոյնպէս մեզ խոստացաւ,
Մեռելներից յարութիւն տալ.
Պատրաստումէ մեզ համար տեղ,
Փառք տանք այստեղ և փառք այնտեղ։

5. Ալէլուիա՜, զի Քրիստոս յարեաւ,
Փառաւորեալ Աստուածորդին.
Մխիթարիչն մեզ տալ խոստացաւ,
Օրհնեալ է անուն Քրիստոսին.
Պատրաստումէ մեզ երկրիս վրայ
Երկնից համար. Ալէլուիա՜։

77. ՅՈԲ. 19, 25. Ես գիտեմ, որ Փրկիչս կենդանի է։

P. 355.

1. Ալէլուիա՜, ով երգիչներ,
Երգէք փառքի, գոհութեան երգեր.
Ի՜նչ մեծ, ի՜նչ սուրբ է այս իւր օր.
Հըսկան քակեց մահուան կապանք,
Յարեաւ փառօք և մեզ տուաւ կեանք,
Գերեզմանից ելաւ այսօր.
Իրանն է զօրութիւնն,
Կատարեց փրկութիւնն.
Ալէլուիա՜.
Նա կատարեց
Եւ մեզ փրկեց
Մահից և ցուրտ գերեզմանից։

2. Մեծ զօրութեամբ Հըսկան կռուեց,
Սատանայի պետութիւնն փշրեց,
Մեզ ազատեց մահուան ձորից.
Մենք Աստուծուց ընկած մարդիկ,
Հօր հետ հաշտուելով՝ եղանք որդիք
Եւ Յիսուսին ժառանգակից.
Շուտով մենք կըքընենք,
Քրիստոսով կը նընջենք.
Հանգեալ ի Տէր,
Այս կարճ գիշեր
Մենք իւր հարսեր
Պիտի լսենք փեսայի ձայն։

3. Թէ հողը մեր փոշուն ծածկէ,
Բայց քեզնով պիտ յարութիւն առնէ.
Քեզնով, ով ըստեղծող հողին,
Անվերջ կեանք կըտաս իմ փոշուն,
Նոյնպէս և փառք ու պայծառութիւն.
Իմ փոշին է քեզ թանգագին,
Տէր, յաւիտեան քոնն ենք,
Քո փառքից մաս ունենք.
Ալէլուիա.
Դատաստան, մահ
Չը տան մեզ ահ,
Չի մեր միջնորդը ապրում:

4. Օր կենաց և ուրախութեան,
Երբ Արեգակը արդարութեան
Մեր գերեզմանաց վրայ ծագէ.
Ո՜հ, մեր հողին ի՜նչ պիտ ըզգայ,
Երբ մեղքն ու խաւարն անհետանայ,
Եւ երկնից լոյսն մեր շուրջն փայլէ:
Թող ձեռքդ Աստուածային
Հասցնէ մեզ այն օրին:
Մեր ամենին
Մահուան ձորով,
Տէր, քո ձեռքով
Հասցրու երկնից սուրբ հանգըստեան:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ:

78. ԵԲՐ. 8, 1. Մենք այնպիսի Քահանայապետ ունինք, որ մեծափառութեան աջ կողմը նստեց երկնքումը:

P. 85.

1. Գովումենք քեզ, Տէր բարերար,
Որ դու երկինք վեր համբարձար.
Ով մեծ Աստուած, Էմմանուէլ,
Մեզ զօրացրու՝ քեզ միշտ գովել. Ալէլուիա:

2. Եղբայր ես մեզ և երկնից զարդ,
Ով ճըշմարիտ Աստուած և մարդ.
Դու համբարձար Հօրը աջ կողմ,
Քեզ ծառայեն տարերք և հողմ. Ալէլուիա:

3. Մերն է երկինք արդ քեզանով,
Տէր, տար մեզ անդ քո սուրբ Հոգով.
Թող իմանան ազգ և ազինք,
Ուրտեղ դու ես, անդ է երկինք. Ալէլուիա:

4. Սատանային, մեղքին, մահին
Յաղթեցիր դու Աստծոյ Որդին.
Ո՞վ կանգնէ քեզ դէմ հակառակ,
Ո՞վ կողոպտէ քո յաղթանակ. Ալէլուիա:

5. Դու ձեռք բերի՛ր փրկութիւնը,
Եւ գերեցիր գերութիւնը.
Հիմայ մարդկանց մեծ պարգևներ
Տալու պատրաստ ես դո՛ւ, ով Տէր. Ալէլուիա:

6. Ամէն, ամէն, քեզ փառք հազար,
Ով Տէր Յիսուս, որ համբարձար.
Ուսո՛ խօսքովդ ըղձուշանալ
Սատանայից նենգ, ոխակալ. Ալէլուիա՛:

79. ՅՈՎ. 12, 32. Եւ երբոր ես բարձրանամ երկրիցը, ամենքին կը քաշեմ ինձ մօտ:

P. 108.

1. Քաշիր, որ մենք
Արագ քայլենք
Սրտի ամեն փափագով.
Որտեղ դու արդ,
Աստուած և մարդ
Բընակած ես մեծ փառքով:

2. Քաշիր, որ մենք
Ի վեր ելնենք
Սանդուխքներով դէպ երկինք.
Թէ ոչ մենք շուտ
Այս աւազուտ
Երկրում իսպառ կը կորչենք:

3. Քաշիր, որ մենք
Քեզ հետևենք
Դէպ հայրենիք, ով Աստուած,
Ուր ազմկալից
Այս աշխարհքից
Պիտի լինենք ազատուած:

4. Քաշիր, որ մենք
Շարունակենք

Դիմել դէպ տունն երկնային.
Եւ արա մեզ,
Տէ՛ր, նըման քեզ
Եւ նըման ընտրեալ հօտին:

80. ՂՈՒԿ. 24, 51. Նա նորանց օրհնելիս. ջոկւեց նորանցից և վերանում էր երկինքը:

1. Քրիստոս համբարձաւ
Առ հայր մեր երկնային.
Տըկարիս տալ խոստացաւ
Մըխիթարիչ հոգին.
Փառք մեր Փըրկչին:
Ո՜հ, մեծ էր այս ընծան,
Որ Տէրը տուաւ մեզ.
Ո՜հ, ի՞նչ տանք դորա փոխան.
Օգնիր, որ միշտ գովենք քեզ,
Ով Յիսուս հեզ.
Ալէլուիա՛, ալէլուիա՛, ալէլուիա՛.
Մենք ուրախ ենք նորանով,
Որ օրհնեց մեզ սիրով.
Օրհնեալ է նա:

ՅԻՍՈՒՍ ԱՆՈՒՆ

81. ՅՈՎ. 15, 4. Կացէք ինձանում և ես ձեզանում:

P. 294.

1. Քեզ մօտ, Յիսուս, կամիմ լինել,
Եւ քո ծառայ միշտ մընալ.
Ի՞նչ է կարող ինձ արտաքսել,
Ծամբովդ ուղուեմ գընալ.

Դու ես, ո՛վ Տէր, կեանքն իմ կեանքի,
Հոգւոյս ոյժ, կարողութիւն.
Իբր հիւթալից հոսանքն որթի,
Որ տայ ճիւղին զօրութիւն։

2. Արդեօք ի՞նչ կայ սորանից լաւ,
Որ եղկելոյս ամէն ժամ
Պատրաստում ես շնորհք անբաւ
Եւ բարիքներ քաղցրահամ.
Էլ ո՞ւր կարեմ ես ապահով
Լինել, ով Տէր, ով Աստուած.
Երկինք, երկիր իւր զօրքերով
Միայն քո ձեռքն են յանձնուած։

3. Այսպիսի Տէր ո՞ւր կըգտնեմ,
Ինձ փրկեց և կըփրկէ.
Մեղքից, մահից ես ազատ եմ,
Երբ արիւնը վրաս սրսկէ.
Արդեօ՞ք չ՚արժէ հըպատակել
Նրան, որ կեանք ինձ պարգեւեց.
Եւ սիրոյ ուխտ նրա հետ կապել,
Որ ինձ մահից ազատեց։

4. Յիսո՛ւս, քեզ մօտ մընալ կամիմ
Լուսոյ և խաւարի մէջ.
Ահա քեզ տամ, ո՛վ Տէր, սիրտն իմ
Եւ խաչիդ նայեմ անվերջ.
Քո մի ակնարկն է ինձ օրէնք,
Ծառայ եմ կամակատար.
Եւ մեռնելու պատրաստ կ՚լինենք
Թէ ապրենք միշտ քեզ համար։

5. Այս երկրի վրայ եղի՛ր ինձ մօտ,
Երբ իմ օրը մայր մըտնի,
Երբ իրիկունն մութ և աղօտ
Եւ գիշերը վրայ հասնի.
Երբ աչքերիս խաւար պատէ,
Յայնժամ ինձ լոյս պարգեւիր,
Որ իմ հոգին դէպ վեր թըռչէ
Դէպ հայրենիք բերկրալիր։

82. ՂՈՒԿԱՍ. 1, 31. Նորա անունը Յիսուս կկանչես։

P. 245.

1. Այսպէս մի անուն չըկայ,
Ոհ, չըկայ քաղցրագոյն
Քան այն, որ հրեշտակն կուտայ
Փրկչին՝ «Յիսուս» անուն։
. . . .
Ախ ի՜նչպէս հոգիս կցանկայ
Տեսնել մեր հօր տունը.
Քաղցրագոյն անուն չըկայ,
Քան Յիսուս անունը։

2. Հրեշտակն ասաց տիրամօր,
Նորան «Յիսուս» կանչես.
Պիտ փրկէ ազգերն բոլոր,
Ո՜հ, փրկուած եմ և ես։ և այլն.—

3. Խաչին վերայ գրեցին
Այս անունն պատուական.
Բոլոր մարդիկ նայեցին,
Տեսան սէրն աններման։ և այլն.—

4. Այժմ Հօրը մօտ նստած,
Ինքն է մեր բարեխօս.
Ուստի սիրենք ողորմած
Տէրն մեր Յիսուս Քրիստոս: և այլն.—

83. Ա. ՅՈՎՀ. 4, 19. Մենք սիրենք նորան, որովհետև առաջ նա սիրեց մեզ:

Р. 175.

1. Սէր, որ դու ինձ Աստուածութեանդ
Պատկերի պէս ստեղծեցիր.
Սէ՛ր, որ դու ինձ ըստ քաղցրութեանդ
Անկումից վեր կանգնեցրիր.
Սէ՛ր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

2. Սէ՛ր, որ դու ինձ դեռ չըստեղծած,
Ընտրեցիր քո շընորհքով.
Սէ՛ր, որ եղար մարդ և Աստուած,
Նոյն իսկ մեզ պէս ծընուելով.
Սէ՛ր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

3. Սէ՛ր, որ վասն իմ չարչարուեցար,
Մեռար իւր ժամանակին.
Սէ՛ր, որ վասն իմ վաստակեցար
Փըրկութիւն, պըսակ անգին.
Սէ՛ր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

4. Սէ՛ր, որ քան զմահ ես զօրաւոր,
Եւ ես կեանք, ճըշմարտութիւն.
Սէ՛ր, որ մահուամբ քո փառաւոր
Պատրաստեցիր փըրկութիւն.
Սէ՛ր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

5. Սէ՛ր, որ դու ինձ վրայ ես դըրել
Քո քաղցըր և թեթև լուծ.
Սէ՛ր, որ դու իմ սիրտն ես շահել,
Փըրկելով ինձ թըշնամուց.
Սէր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

6. Սէ՛ր, որ սիրես ինձ յաւիտեան,
Ինձ համար բարեխօսես.
Սէ՛ր, որ վասն իմ պահպանութեան,
Սիրայօժար հոգ տանես.
Սէ՛ր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

7. Այդ սէրն պիտի յարուցանէ
Ինձ մահուան գերեզմանից.
Այդ սէրը ինձ կ՚արժանացնէ
Իրան լինել փառակից.
Սէ՛ր, ես ինձ քեզ նուիրեմ,
Որ յաւիտեան քոնն լինեմ:

84. *Բ. ՏԻՄ. 2, 8. Յիշիր Յիսուս Քրիստոսին:*

1. Ո՞ւր է Յիսուս, իմ փափագը,
Իմ միակ բարեկամը.
Արդեօք ո՞ւր է նա գընացել,
Ո՞ւր կարեմ նորան գըտնել:

2. Ո՜հ, անձն իմ է տըխուր, տըրտում,
Մեղքն է ինձ այս պատճառում.
Ո՞ւր է Յիսուս, որուն սիրեմ,
Գիշեր, ցերեկ որոնեմ:

3. Ցաւից ճընշեալ սիրտըս գոչէ,
Յիսուս Տէրս արդեօք ո՞ւր է.
Գըտնէ հոգին իմ բազմաշխատ
Միշտ նրա մօտ հանգիստ առատ:

4. Փարատումէ ահ ու ցաւըն,
Մերժումէ մեղքն ու մահըն.
Իմ ցաւատանջ սըրտիս համար
Դեղ ունիս, Տէր բարերար:

85. *ՍԱՂ. 113, 2. Տիրոջ անունը օրհնեալ լինի յայսըմ հետէ մինչ յաւիտեան:*

1. Ի՜նչ ախորժ է Քրիստոս անուն
Հաւատացեալ մարդի հոգուն.
Ամէն հոգսեր ամոքում է,
Սրտիս խաւարն փարատումէ:
Ո՞վ է նըման խաչեալ Յիսուսին,
Վան իմ, վան քո զոհուեց մահին,
Մեռաւ փրկել յանցաւորին:

2. Դարման է նա փշրեալ հոգոց,
Եւ ըսփոփանք տառապելոց.
Սովեալ անձանց է մանանայ,
Վաստակելոց իւր հանգիստն տայ: և այլն.—

3. Ինքնապաստան սիրտն իմ տըկար,
Քեզ չէ օրհնում սիրայօժար.
Բայց երբ վերին երկինքն հասնեմ,
Արժան կերպով քեզ կը գովեմ: և այլն.—

4. Մեր ազօթքն էլ խառն է մեղքով,
Բայց մաքրումես քո արիւնով.
Դու մեր ձայնը միշտ լըսումես,
Եւ մեզ սիրով որդի կոչումես: և այլն:

86. *ԵՐԳ ԵՐԳՈՑ 3, 4. Գըտայ իմ հոգու սիրածին, նորան բռնեցի և բաց չըթողեցի:*

P. 161.

1. Իմ Յիսուսն բաց չեմ թողնել,
Նա ինձ համար անձն իւր տուաւ.
Պարտաւոր եմ միշտ գովել
Նորա սէրը մեծահամբաւ.
Նա կեանքիս լոյս է տուել,
Իմ Յիսուսն բաց չեմ թողնել:

2. Իմ Յիսուսն բաց չեմ թողնել,
Քանզի նա է կեանք իմ կենաց.
Նորան կամիմ վըստահել,
Նա է միայն Քաւիչ մեղաց,
Նա կարող է ինձ փրկել.
Իմ Յիսուսն բաց չեմ թողնել:

3. Ինձ փոյթ չէ երկինք, երկիր,
Հոգիս դորանց չէ փափագում.
Նա է իմ Տէրն թագակիր,
Նա է Հօր հետ ինձ հաշտեցնում,
Ինձ կորստից է փըրկել.
Իմ Յիսուսն բաց չեմ թողնել:

4. Ես Փըրկչից չեմ հեռանալ,
Նորա շաւղով պիտի գընամ.
Տէրն է իմ խընամակալ,
Կենաց ջուրից պիտ լիանամ:
Կամիս ինձ հետ այս ասել.
«Իմ Յիսուսն բաց չեմ թողնել»:

5. Իմ Յիսուսն բաց չեմ թողնել.
Մի թողնի՛ր ինձ, ով Յիսուս իմ.
Չարից հաճի՛ր ինձ փըրկել,
Որ քո վերայ ես հաստատուեմ,
Եւ կարենամ միշտ ասել.
Իմ Յիսուսն բաց չեմ թողնել:

87. ՅՈՎ. 12, 26. Եթէ մէկը ծառայ է ինձ, թող նա իմ ետևից գայ:

P. 157.

1. Յիսուս, առաջ գնա
Կենաց ճամբի վրայ.
Եւ չենք ուզում մենք ուշանալ,
Այլ կամենք քո յետևից գալ.
Տար մեզ քո ձեռքով
Դէպ տուն ապահով:

2. Ուղին է անհարթ,
Արա մեզ զուարթ,
Որ ծանր օրերում քեզ յուսանք,
Եւ բեռի տակ չը տըրտընջանք.
Մենք նեղութեամբ միայն
Կը հասնենք Քանան:

3. Թէ ճընշեն ցաւեր,
Ով Տէր, մեր սըրտեր
Եւ թըշնամին գարան լարէ,
Թող հոգիդ մեզ առաջնորդէ.
Դարձրու մեր միտքը
Դէպի երկինքը:

4. Ուղղի՛ր մեր գընացք
Եւ կեանքի ընթացք,
Ո՛վ Տէր, ճամբան չէ հարթ և հեշտ,
Տուր մեզ, ինչ որ է անհրաժեշտ.
Բա՛ց մեր առաջին
Քո դուռն երկնային:

88. ԵՍԱՅ. 26, 8. Ով Տէր, Քո անուան և քո յիշատակին էր ցանկանում մեր հոգին. — 33, 17. Քո աչքերը տեսնելու են թագաւորին իւր գեղեցկութեան մէջ:

Dölk. 110.

1. Գեղեցիկդ Յիսուս,
Երկնից և երկրի յոյս,

Որդի Աստծոյ և կուսին Մարիամ,
Քեզ կամիմ ես սիրել,
Քեզ կամիմ ես պաշտել,
Ով հոգւոյս զարդ և բարեկամ:

2. Սիրուն են հանդեր,
Սիրուն են հովիտներ
Գարնան գեղեցիկ ժամանակում.
Յիսուսն է պերճագոյն,
Յիսուսն է քաղցրագոյն.
Նա բերկրացնէ սիրտ մեր տրտում:

3. Պայծառ է արև,
Լոյս տայ լուսին նաև.
Փայլումեն և՛ աստեղք բիւրաւոր.
Վէհագոյն է Յիսուսն,
Պարզագոյն է Յիսուսն.
Գեղագոյն քան հրեշտակք բոլոր:

4. Երբ ես կըմեռնեմ,
Ա՜խ, թող որ չը կորչեմ.
Թող միշտ, ո՛վ Տէր, ես քոնը լինիմ.
Երբ սիրտըն իմ ցաւէ,
Թող յայնժամ քեզ կոչէ՝
Յիսուս, Յիսուս, Յիսուս, Տէ՛ր իմ:

89. ԵՐԳ. 2, 4. Նորա դրօշն ինձ վերայ սէր է:

P. 383.

1. Քեզ կամիմ սիրել բոլոր ուժով,
Քեզ կամիմ սիրել իմ գործքով.

Քեզ կամիմ սիրել, զա՛րդ իմ հոգւոյն,
Մեծ փափագով և աններկուն.
Քեզ կամիմ սիրել, ո՛վ իմ գանձ,
Ով Տէր, բոլոր սըրտանց:

2. Քեզ կամիմ սիրել, կեա՛նք իմ կենաց,
Եւ բա՛րեկամ բարեկամաց.
Քեզ կամի սիրել, ո՛վ մեծ արքայ,
Ամէն ինչ որ ինձանում կայ.
Քեզ կամիմ սիրել, Գա՛ռն Աստծոյ,
Իբր փեսայ իմ Հոգւոյ:

3. Ա՜խ, ի՜նչքան ուշ քեզ ճանաչեցի...
Քեզ թողած՝ ես ինձ սիրեցի.
Զղջումեմ, Տէր, դու ինձ ողորմիր
Եւ իմ ամէն մեղքերս ներիր.
Տուր ինձ քո Սուրբ Հոգւոյ շընորհ
Մինչև իմ մահուան օր:

4. Գոհութիւն քեզ, Արեգակն արդար,
Ճառագայթովդ եմ վառվառ.
Գոհութիւն քեզ, ով Փրկիչ գըթած,
Որ իմ կապանքն ես արձակած.
Գոհութիւն քեզ, ո՛վ Յիսուս հեզ,
Որ ինձ միշտ օրհնումես:

5. Քեզ կամիմ սիրել, ո՛վ իմ պըսակ,
Քեզ եմ սիրում, ով սուրբ էակ.
Քեզ կամիմ իմ կեանքը նուիրել,
Քեզ նեղութեանց մէջ ծառայել.
Քեզ կամիմ սիրել, պայծառ լոյս,
Քեզ, ո՛վ Տէր իմ Յիսուս:

90. *ՍԱՂ. 119, 10. Իմ բոլոր սրտովը խնդրեցի քեզ։*

1. Կայ բարեկամ յերկինս ի վեր,
Յիսուս Քրիստոս է իւր անուն.
Այս աշխարհքիս բարեկամներ
Շուտով կ'անցնին, չեն հաստատուն.
Ուստի անհոգ թող չը լինեմ,
Ինձ բարեկամ Յիսուս առնեմ։

2. Աշխարհքն բոլոր փառքովն կ'անցնի,
Յիսուս միայն է հաստատ վէմ.
Երբ մարդը ինձ խապառ թողնի,
Յիսուս պատրաստ ինձ մօտ գըտնեմ.
Ուստի անհոգ.....

3. Յիսուս վասն իմ անձն իւր զոհեց,
Որ ես երկնից հաղորդանամ.
Իմ տեղակ իւր արիւն հեղեց,
Որ իրանով արդարանամ.
Ուստի անհոգ.....

4. Բարեկամիս սէրն աննըման
Օրէ ցօր զիս առաջ տանէ.
Յիսուս իմն է և ես իւրեան,
Մինչ մահն իմ շունչն ինձնից առնէ.
Քեզ հետ պիտի միանամ ես
Երկընքումը քո խօսքիդ պէս։

91. *ԵՍԱՅ. 61, 10. Ես ուրախութեամբ պիտի ուրախանամ Տէրովը, պիտի խնդայ իմ անձը իմ Աստուծովը։*

P. 324.

1. Յիսուս իմ բերկրութիւն,
Տաս սընունդ իմ հոգուն.
Ա՜խ, քեզ եմ դիմում,
Ի՜նչ երկար, ա՜խ, երկար.
Իմ սիրտն է վըշտահար,
Քեզ է կարօտում.
Աստծոյ Գառն, Տէր մեծափառ,
Քեզանից զատ ո՞րին սիրեմ,
Դու իմն ես, ես քոնն եմ։

2. Ինչո՞ւ սիրեմ գանձեր,
Յիսուս ինքն է իմ Տէր.
Նա է իմ բաղձանք.
Ոչինչ են փառք, պատիւ
Եւ փորձութիւնք անթիւ,
Յիսուսն է իմ կեանք.
Ա՜խ և ահ, ամօթ և մահ
Չըպիտ, ի՜նչքան էլ ինձ տանջէք,
Յիսուսից բաժանէք։

3. Ոչինչ է տըխրութիւն,
Զի իմ ուրախութիւն
Յիսուսն է ինձ հետ.
Նրանք, որ Աստծուն սիրեն,
Ի՜նչքան էլ վիշտ կըրեն,
Է միշտ օգտաւէտ.

Այս ձորից, ցաւ ու վշտից
Ազատի՛ր ինձ և տա՛ր իմ տուն,
Յիսո՛ւս իմ բերկրութիւն։

92. ՂՈՒԿ. 10, 42. Բայց մէկ բան է պէտք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ վեր չի առնուիլ նորանից։

P. 314.

1. Միայն մէկ բան է հարկաւոր,
Տէր, թող սորան հաւատամ.
Այլ բան ինչքան էլ փառաւոր,
Անումէ ինձ թոյլ, տարտամ.
Աշխարհքում իմ սիրտը թափումէ ամեն ճիգ,
Բայց աւաղ, չէ գտնում ցնծութիւն մի փոքրիկ.
Տէրն է ինձ բաւական, ինձ չե՛ն գրաւում
Այն բաները, որ կան այս չար աշխարհքում։

2. Հոգիս, ուզո՞ւմես այդ գտնել,
Մի խնդրիր արարածից.
Երկրայինը պէտք է թողնել
Եւ թռչել բնութիւնից.
Ո՜հ, դիմիր Յիսուսին, որ Աստուած է և մարդ,
Նա ինքը կատարեալ է, անմեղ և անպարտ.
Նորա մօտ, նորա մօտ կայ բարի բաժին,
Իմ մէկն ու ամենը, փրկութիւնն անգին։

3. Ինչպէս Մարիամ վայելում էր,
Ոտացը տակ նըստելով.
Նորա սիրտը բռընկում էր,
Հեզիկ ձայնը լսելով.

Այսպէս թող, Յիսուս, ես միայն քեզ փափագեմ,
Քեզ սիրեմ, քեզ պաշտեմ և քո մէջ ներսուզուեմ.
Քո խօսքը, Տէր Յիսուս, է կեանք և հոգի,
Շատերն էլ քեզ թողնեն, ես չ՚թողնեմ պիտի։

4. Իմաստութիւն, արդարութիւն,
Տէր, Դու եղար ինձ համար.
Իմ սրբութիւն, իմ փրկութիւն,
Տէր, Դո՛ւ միայն, Դո՛ւ եղար.
Քընիր ինձ և սուտը ինձանից դուրս հանիր,
Օգնիր ինձ և դէպ քո տունը առաջնորդիր,
Ինչ որ ունիմ, Տէ՛ր, թող զոհեմ ամեն օր,
Որ գտնեմ Յիսուսին, սա է հարկաւոր։

93. ԵՐԵՄ. 31, 3. Յաւիտենական սիրով սիրել եմ քեզ. դորա համար քաշեցի քեզ ողորմութիւնով։

P. 157.

1. Ով փեսայ հոգույս,
Գառն Աստծոյ Յիսուս,
Գոհութիւն քեզ սիրոյդ համար,
Որով յաղթեմ մեղք և աշխարհ.
Դու իմ միակ յոյս,
Գառն Աստծոյ Յիսուս։

2. Ով լոյս հաւատքիս,
Ուղեցոյց ճամբիս.
Օծիր իւղով ուրախութեան
Քո ծառայիդ, որ յաւիտեան
Քեզ սիրէ հոգիս,
Ով լոյս հաւատքիս։

3. Դու մարդ և Աստուած,
Թող քո սիրոյ կայծ
Միշտ վառ մնայ սրտիս խորքում,
Տէ՛ր, միայն քեզ եմ փափագում.
Դո՛ւ ես ինձ փրկած,
Դո՛ւ մարդ և Աստուած:

4. Աստ նախատինքով,
Անդ փառքով, պատւով.
Աստ հաւատքով, յուսով կ'ապրեմ,
Այնտեղ պիտի սեպհականեմ,
Յիսուս, քո շնորհքով
Մնամ ապահով:

5. Յիսուս, ինձ օգնիր,
Որ ես քաջ և ժիր
Քեզ պէս յաղթեմ ամենայն ինչ,
Չարին արա, Տէր, բնաջինջ.
Փառքով պսակիր.
Յիսո՛ւս, ինձ օգնիր:

94. ՄԱՏԹ. 16, 26. Ի՞նչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարքն ստանայ և իւր անձը կորցնէ:

P. 161.

1. Ո՛վ մարդ, ինչո՞ւ տանջւում ես,
Այս երկրային փուչ բաներով,
Քանզի հող ու մոխրի պէս,
Նոքա փոշի դառնան շուտով.
Փնտռիր Փրկչին և Նրա լոյս,
Ուրիշի վրայ մի դի՛ր յոյս:

2. Ժողվիր քո ցրուած միտքը,
Դէպի Աստուած միշտ սլացիր,
Ուղղիր սիրտդ դէպ երկինքը
Եւ շնորհաց մէջ թափանցիր: և այլն.—

3. Դու չես գիտում շատ անգամ,
Ինչով սիրտդ մխիթարես.
Կենաց ջրով քաղցրահամ
Մխիթարուել դու կարող ես: և այլն.—

4. Գնա՛ ճամբադ միամիտ
Եւ մի շեղուիր նպատակից.
Աստուած քեզ՝ խեղճ հիւանդիդ,
Կբժշկէ քո ցաւերից: և այլն.—

5. Չես գիտում, այս աշխարհքը
Գտնւում է միշտ չարումը.
Չար է նորա արարքը,
Ցեղյեղում է քո ծագումը: և այլն.—

6. Աստծոյ շնչով գոյացար,
Նորա Հոգուց ես դու ծնուած.
Փրկչի արեամբ գնուեցար,
Եւ նա ինքն է քեզ որդեգրած: և այլն.—

7. Դու միշտ քո Աստծուն յուսա՛,
Նպատակիդ հասնես պիտի.
Քո հոգին պիտ լինայ
Աստծոյ սիրովն անհատնելի: և այլն.—

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ։

95. *Գ. ԱՌԱՔ. 2, 4. Եւ ամենքը սուրբ Հոգով լցուեցան և սկսեցին ուրիշ լեզուներով խօսել։*

P. 321.

1. *Ե՛կ, սուրբ Հոգի, ո՛վ Հզօր Աստուած,*
Լեցրո՛ւ սըրբոց սիրտն ու միտքը.
Պարգևներով քո սուրբ շնորհաց
Թող հարըստանան քո որդիքը.
Արծարծիր նրանց սիրոյդ կայծով.
Նրանք ժողուած են ամէն տեղից,
Եւ ըսպասում են, որ քո շնորհքով
Անես նրանց ժառանգներ երկնից.
Ալէլուիա՛, ալէլուիա՛։

2. *Ո՛վ սրբազան լոյս երկնային,*
Յորդորիր մեզ կենաց բանիւ.
Թող ուղիղ ճանաչենք մեր Տէրին,
Եւ նրան Աբբա Հա՛յր կանչենք սրտիւ.
Պահիր մոլար ուսմունքներէն,
Որ չո՛րոնենք Յիսուսից զատ,
Ջոկ վարդապետ ուրիշ տեղերէն,
Այլ նորանում մընանք միշտ հաստատ.
Ալէլուիա՛, ալէլուիա՛։

3. *Ով Դու Փրկիչ շնորհատու,*
Օգնի՛ր, և տուր մըխիթարանք,
Որ զօրանանք սիրով կենսատու,
Որ ոչ մի բանով քեզ չուրանանք.

Տէր, զօրութեամբ մեզ պատրաստիր,
Զօրութիւն տուր, երբ տըկար ենք,
Որ թողնենք ամէն մեղքեր նանիր,
Մահով, կեանքով դէպի քեզ ձըգտենք.
Ալէլուիա՛, ալէլուիա՛։

96. *ՀՌՈՎՄ. 8, 15. Որդեգրութեան Հոգին առէք. որով աղաղակումենք՝ Աբբա Հա՛յր։*

P. 290.

1. *Ազնիւ Հոգի հըրաշափառ,*
Էակից Հօր և Որդոյ,
Լեր մեզ լապտեր, լոյս մըշտավառ
Եւ տո՛ւր կեանքի պարգև քո.
Տո՛ւր ճըշմարիտ ուղղութիւն
Եւ սրտի նորոգութիւն,
Որ Տէրն անէ իմ սիրտն իրան
Մի մաքրազարդ բընակարան։

2. *Ով սուրբ Հոգի իմաստալից,*
Տուր գիտութեան քո պարգև.
Կանգնիր իմ կողմն, լեր սըրտակից,
Լոյս տուր ինձ խաչի ներքև,
Որ այդ լուսով առկայծեալ՝
Կարենամ ըզգաստ մընալ,
Մինչ յետ այժմեան տըրտմութեանց
Հասնեմ ես տունն երանութեանց։

3. Դու ես Աստծոյ զօրեղ մատը,
Հե՛ղ մեզ վրայ քո փառագայթք.
Դու պաշտպանես մեր սուրբ դատը
Եւ խափանես որոգայթք.
Երբ իմ ներսն մուտ ես գործում,
Իմ սիրտն ես մաքրում, սրբում,
Եւ աշխարհքումն այս մեղսալի
Աստուծոյ հետ լինում եմ մի:

4. Ով սուրբ Հոգի ըսփոփանաց,
Նեղութեան մէջ լե՛ր օգնող,
Երբ բարեկամք են հեռացած,
Մի՛ անիր ինձ աչքաթող.
Ո՜հ, սիրտն իմ պահիր մաքուր,
Ինձ քեզ հետ կապիր ամուր,
Որ ցաւերից տառապելիս՝
Քեզ մօտ հանգիստ առնէ հոգիս:

5. Ով սուրբ Հոգի զուարթարար,
Թող փափագս քո մէջ գտնեմ.
Բաբախում է կուրծքս անդադար,
Երբ սէրըդ ճաշակումեմ.
Այս աշխարհքի ցանկութիւնք
Տան մեր սրտին դառնութիւնք.
Ուրախութիւն երջանկաւէտ
Մենք ունինք քեզ մօտ և քեզ հետ:

6. Ով սուրբ Հոգի, որ աղօթքի
Վարժեցնումես սուրբերին.
Դու բացումես դուռն երկնքի
Եւ շաղում ցողն երկնային.

Ուսո՛ւ ինձ Աստծուն դիմել
Եւ «Աբբա Հայր» նրան կանչել,
Տուր աղօթեմ ես ջերմեռանդ,
Ամուր պահեմ խօսքն երկնաւանդ:

7. Ով սուրբ Հոգի, մեծ առաջնորդ,
Ուղղիր մեր սիրտ դէպի վեր.
Կործանուի մեր հակառակորդ,
Որ նիւթումէ դարաններ.
Սուրբ Հոգի, լեր բարեհաճ,
Տուր որ տանենք մենք մեր խաչ,
Հասնենք երկինք այս աշխարհքէն,
Այս խօսքերին տաս՝ ամէն:

97. ՅՈՎ. 20, 23. Առէք սուրբ Հոգին:

P. 38.

1. Ով սուրբ Հոգի, լոյս երկնային,
Դու իմ հոգիս լուսաւորիր.
Ցրուիր խաւարն գիշերային,
Եւ ցերեկուան պարզ լոյս ծագիր:

2. Ով սուրբ Հոգի, հզօր Աստուած,
Իմ սիրտս մաքրիր քո զօրութեամբ.
Եւ իմ սրտից կուռքերն մեղաց,
Դուրս վռնդիր իշխանութեամբ:

3. Ով սուրբ Հոգի, մխիթարիչ,
Մխիթարիր տրտում հոգիս.
Դու իմ բժիշկ, իմ Ազատիչ,
Վերջ տուր շուտով իմ ցաւերիս:

4. Ով սուրբ Հոգի ամենազօր,
Արա իմ սիրտն քեզ օթեւան.
Վեր առ ինձնից կուռքերս բոլոր,
Եւ անդ իշխիր Դու յաւիտեան:

98. ԵՓԵՍ. 3, 16. *Իւր փառքի հարստութեան պէս տայ ձեզ, որ զօրութեամբ հաստատուիք, իր Հոգու ձեռքովը ներսի մարդումը:*

P. 174.

1. Ե՛կ, ո՜հ, ե՛կ, ով Հոգի կենաց,
Ով Աստուած սուրբ, անարատ,
Ողորմութեան դուռը մեզ բաց,
Տուր զօրութիւն մեզ առատ.
Եւ կըլենի լոյս և փայլ
Մեր սրտերի մէջ մռայլ:

2. Մեր սրտերի և մտաց մէջ
Ներշնչիր լոյս, գիտութիւն,
Որ մենք վառուած սիրովդ անշէջ,
Որոնենք քո հաճութիւն.
Տուր աճենք իմաստութեամբ,
Որ չ՚խաբուենք մոլորութեամբ:

3. Վըկայութիւն տո՛ւր մեր սրտում,
Որ մենք Աստծոյ որդիք ենք.
Յիսուս անունն պահենք մտքում,
Երբ մենք Հօրը կ՚աղօթենք.
Եւ կըլըսի մեր հառաչ
Աստծոյ աթոռի առաջ:

4. Եւ թէ երբեմն վըշտից նեղուած՝
Խոր հառաչներ արձակեմ,
Յայնժամ բազուկդ ինձ տարածած՝
Օգնի՛ր, ով Տէր, կաղաչեմ.
Տուր մեզ զըրահ յաղթական,
Եւ սուրբ հանգիստ հոգեկան:

5. Տուր պինդ պահենք մեր հաւատը,
Տէ՛ր, եղի՛ր մեզ հովանի.
Քեզնով փըրկուի յուսահատը,
Ո՜հ, արա մեզ արժանի,
Ժառանգութիւն ըստանանք
Եւ յաւիտեան քեզ փառք տանք:

99. ՀՌՈՎՄ. 5, 5. *Աստուծոյ սէրը փռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգոյ ձեռովը:*

1. Ո՛վ Տէր Յիսուս, Դու խոստացար,
Որ սուրբ Հոգիդ ուղարկես,
Ճըշմարտութեան լոյսը պայծառ
Մեզ անդադար հաղորդես:

2. Արդ կ՚աղաչեմ արտասուաթոր,
Շընորհիր ինձ սուրբ Հոգիդ.
Թող խոնարհուեմ քո մօտ շատ խոր
Եւ հետեւեմ քեզ Փըրկիչդ:

3. Ո՛վ Տէր, դո՛ւ ինքդ ի վերնատան
Առաքելոց շնորհեցիր
Քո սուրբ Հոգին, լոյս գերբնական,
Երկնային պարգեւ ընտիր:

4. Հոգիդ ինձ ևս թող զօրացնէ,
Որ քո սուրբ օրէնքդ պահեմ.
Միտքըս բանայ, սրտիս ազդէ,
Որ ես միշտ քեզ ծառայեմ։

5. Ո՛վ սուրբ Հոգի, ի՞նչ արժանիք
Ունիմ տաճարդ լինելու.
Արա ինձ քո խօսքիդ գործիք
Քո լոյսը տարածելու։

100. *ՍԱՂ. 143, 10. Քո բարի Հոգին թող առաջնորդէ ինձ դէպի ուղիղ երկիր։*

P. 38.

1. Ո՛վ սուրբ Հոգի, Տէ՛ր ողորմած,
Որ դէպ մարդըն ես միշտ գըթած,
Քեզ եմ կանչում բոլոր սրտով,
Այցելէ՛ր ինձ և ինձ մօտ կա՛ց։

2. Ցաւ է սրտիս, որ շընորհքէդ,
Տէր, զըրկուած է անձն իմ տըգէտ.
Դևոց առիթ է սա տուել
Հալածել ինձ, մըրցել ինձ հետ։

3. Տէր, կ՚աղաչեմ ինձ յիշեցուր
Խոստմունքներըդ քո քաղցրալուր,
Որով կարեմ յաղթել չարին
Եւ չը լինել նրան անձնատուր։

4. Ո՛վ սուրբ Հոգի, ո՜հ, ե՛կ շուտով,
Շըրջապատուած եմ մեղքերով.
Ինձ նեղելիս ամէն կողմից
Շրջապատիր քո շընորհքով։

5. Ինձ մի թողիր անմըխիթար,
Որ չարի ձեռքն չընկնեմ աւար.
Հաստատիր ինձ քո զօրութեամբ,
Որ պատրաստուեմ երկնից համար։

ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ։

101. *ԵՓԵՍ. 4, 5, 6. Մէկ Տէր, մէկ հաւատ, մէկ մկրտութիւն, մէկ Աստուած և ամենքի Հայր։*

1. Եկ, Հզօր Թագաւոր,
Եկ զօրութեամբ այսօր.
Լեր նեցուկ մեզ.
Հայրըդ անմահութեան,
Յաղթո՛ղդ ամենեսեան,
Եկ, տուր մեզ հըրաման
Ծառայել քեզ։

2. Եկ, Փըրկիչ և Տէր մեր,
Մի թող թըշնամիներ
Հալածեն մեզ.
Սուրբ աջ քո, ո՛վ Փըրկիչ,
Լինի մեր ազատիչ,
Մեր անձանց պահպանիչ,
Ա՜խ, լըսիր մեզ։

3. Եկ, ո՛վ մըխիթարող,
Մեր կեանքն առաջնորդող,

Նորոգիր մեզ.
Մեր սրտի դուռն Թագի՛ր,
Զօրութեամբ քո բացի՛ր
Եւ այնտեղ բնակուի՛ր
Եւ իշխիր մեզ։

4. Ո՛վ սուրբ Երրորդութիւն,
Փառք, պատիւ, զօրութիւն
Յաւիտեան քեզ.
Թող մեն գանք քո լոյսում,
Քեզ տեսնենք երկինքում
Եւ յաւիտեաններում
Բարձրացնենք քեզ։

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ։

ԱՍՏԾՈՅ ԽՕՍՔԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ։

102. *ՍԱՂ. 46. Զօրութեանց Տէրը մեզ հետ է, Յակոբի Տէրը մեզ համար ապաստան է։*

P. 316.

1. Ամուր բերդ է մեր Տէր Աստուած,
Մի ընտիր զէնք և ասպար.
Փարատումէ ցաւ և կասկած,
Որ մեզ վրայ գան անդադար.
Մեզ դէմ հին ոսոխ
Ունի քէն ու ոխ.
Չար է, ահարկու,
Զինուած է կռուելու,
Չըկայ նըմանն աշխարհքում։

2. Մեր զօրութիւնն չէ բաւական,
Մենք շատ շուտ կարենք կորչել.
Մեր տեղը կայ մարդն իսկական,
Որ Աստուած ինքն է ընտրել.
Գիտես՝ ով է նա,
Տէր Յիսուսն է դա,
Նա է Տէրն զօրաց,
Չըկայ ուրիշ Աստուած,
Նա կը յաղթէ թըշնամուն։

3. Եթէ աշխարհքն լի դեւերով
Ջանայ մեզ կըլանելու,
Մենք չենք բըռնուիլ ահ ու դողով,
Այլ յոյս ունինք յաղթելու.
Իշխանն աշխարհքի
Ինչքան կատաղի՝
Մեզ չի վընասիլ,
Ոչ էլ յաղթահարիլ.
Մի խօսք նրան կըտապալէ։

4. Աստծոյ խօսքը պիտի մընայ,
Թող դիմադրեն չարերը.
Նա ինքն է միշտ մեզ մօտ ներկայ
Տալու իւր պարգեւները.
Թէ խըլեն կամին
Կեանք, գոյք, որդի, կին,
Փոյթ չէ թող տանեն,
Ոչ մի օգուտ չունեն.
Մեզ կը մընայ երկինքը։

103. *ՅԱՅՏ. 3, 11. Ահա գալիս եմ շուտով. բռնիր այն, որ ունիս, որ ոչ ով չառնէ քո պսակը։*

P. 323.

1. Յառաջ գնա՛, յառաջ գնա՛,
Սիօ՛ն, յառաջ գնա լուսով.
Պատրաստ պահիր քո լապտերը,
Փընտռիր ջուրն կենաց շուտով.
Մի թողիր քո նախկին սէրը,
Մըտիր նեղ դըռնովը միշտ վըստահ,
Յառաջ գնա՛, յառաջ գնա՛։

2. Համբերի՛ր, համբերի՛ր.
Սիօ՛ն, դու տա՛ր անտըրտունջ
Ծաղր ու ծանակ, ցաւ ու տանջանք.
Ամուր կա՛ց մինչ վերջին շունչ.
Տես, քեզ համար կան փառք ու կեանք,
Սիօ՛ն, օձի խայթը ըզգա՞ցիր,
Համբերի՛ր, համբերի՛ր։

3. Մի գընա՛, մի գընա՛,
Սիօ՛ն, հեռացիր մեղքից,
Մի լե՛ր հըպարտ և մեծամիտ,
Մի՛ խաբուիր գոյք ու գահից.
Դրոշմ գազանին մի առ ճակ՚տից,
Սիօ՛ն, ինչ էլ աշխարհն խոստանայ՝
Մի գընա՛, մի գընա՛։

4. Փորձիր ճիշտ, փորձիր ճիշտ,
Սիօ՛ն, փորձիր ճիշտ սիրտըդ.
Երկկողմանի դու չըլինես,
Աշխարհքին չըտաս միտքըդ,
Քեզ ուղեցոյց աստղը կ՚ընտրես.
Սիօ՛ն, սուտն ու ճիշտը փորձիր միշտ,
Փորձիր ճիշտ, փորձիր ճիշտ։

5. Խոր անցիր, խոր անցիր,
Սիօ՛ն, խոր անցիր ի Տէր.
Հոգով, կեանքով լեր ժիր ու քաջ,
Այլոց պէս մեռած մի լե՛ր,
Լեր ուրթի վրայ մի ճիւղ կանաչ.
Սիօ՛ն, դըրսի ձեւով մի կեղծիր,
Խոր անցիր, խոր անցիր։

6. Ո՜հ, փայլիր, ո՜հ, փայլիր,
Սիօ՛ն, ո՜հ, փայլ տուր զօրեղ.
Թող վառուի սէրն եղբայրական,
Եւ տայ պըտուղք գունագեղ.
Լեր փեսայիդ հարսն անըրման,
Քեզ՝ բացուած դըռնով լոյս արձակիր,
Լաւ փայլիր, լաւ փայլիր։

7. Դիմացիր, դիմացիր,
Սիօ՛ն, եղիր հաստատուն.
Եռանդ պահիր, գաղջ մի՛ լինիր,
Պինդ պահիր գոհարդ փայլուն.
Քո անցեալը արդ մոռացիր.
Սիօ՛ն, վերջին կռուում համբերիր,
Դիմացիր, դիմացիր։

104. *ՍԱՂ. 119, 50. Իմ նեղութիւնումը քո խօսքն է իմ մխիթարութիւնը։*

P. 28 և 37.

1. Ա՜խ, կա՛ց մեզ մօտ, ո՛վ Տէր Յիսուս,
Քանզի երեկոյ է արդէն.
Քո քաղցըր խօսքն և պայծառ լոյս
Մեզ մօտ երբէք թո՛ղ չըսպառեն։

2. Այս յետին չար ժամանակում,
Արա մեզ, Տէ՛ր, հաստատ, ամուր,
Որ քո խորհուրդք և խօսքն մեզնում,
Մինչև վերջը պահենք մաքուր։

3. Տէ՛ր, պահիր քո եկեղեցին,
Մենք շատ ծոյլ ենք, սառն և անհոգ.
Տուր զօրութիւն քո սուրբ խօսքին,
Որ ձայնդ լըսէ ամենայն ոք։

4. Պահիր խօսքովդ մեզ սատանից,
Տուր քո հօտիդ սէր, միութիւն.
Ազատիր սուտ աղանդներից
Եւ մարդկանցից ինքնիմաստուն։

5. Գործն ու պատիւն քոնն է, ո՛վ Տէր,
Մենք ոչինչ էլ, չենք վաստակած.
Ուրեմն օգնիր, Տէր մարդասէր,
Մենք քեզ վերայ ենք յոյս կապած։

105. *Բ. ՏԻՄ. 3, 16. Ամեն գիրք Աստուածաշունչ են, և օգտակար վարդապետութեան և յանդիմանութեան և ուղղելու և արդարութեան խրատելու համար։*

1. Մենք չենք թողնել սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ մատեան,
Քանզի մանկանց է առաջնորդ
Եւ ծերոց գաւազան.
Ծըրագ է Նա, լոյս փառաւոր,
Լապտեր է մեր ճամբին.
Ցոյց է տալիս փառք երկնաւոր
Եւ մեր տունն երկնային։ Մենք չենք և այլն.—

2. Մենք չենք թողնել սուրբ Գիրքը,
Միմիայն նորանից
Սովորում ենք երկնից ճամբան,
Փախչելով դըժոխքից.
Նորա մէջ կարդում ենք՝ թէ ով
Վայր իջաւ երկնքէն,
Եւ ով արիւնն իւր թափելով՝
Կազատէ մեզ մեղքէն։ և այլն.—

3. Մենք չենք թողնել սուրբ Գիրքը,
Այլ քարոզենք պիտի,
Որ արձագանք տայ ազգաց մէջ,
Յանկոյս ծովուն լըսուի.
Եւ փրկութեան ձայնը լըսեն
Մարդիկ ամեն երկրի,
Ընդունեն, հաւատան, պատմեն
Անհուն սէրն Յիսուսի։ և այլն.—

106. *ՍԱՂ. 133, 1. Տե՛ս, ի՜նչքան բարի է, որ եղբարք իրար հետ մէկ տեղ բնակուեն։*

1. Ով Տէր, ո՜րքան բարի է,
Որչա՜փ շատ ցանկալի է,
Որ եղբայրք ի միասին
Եւ միաբան բընակին։

2. Այս նըման է այն ցօղին,
Իջեալ գագաթն Հերմոնին,
Եւ այն շաղին որ վայր գայ
Սիօնի լերան վերայ։

3. Տէրն կամի ներկայ լինել
Եւ օրհնութիւնք անդ շնորհել.
Եւ նոցա կեանք անվախճան
Պիտի տայ, որ հաւատան։

107. *ՍԱՂ. 112, 1. Երանելի է այն մարդը, որ Տէրիցը վախենում է, և Նորա պատուիրանքներին շատ հաւան է կենում։*

P. 245.

1. Երանեալ է այն անձը,
Որ սիրումէ Փրկչին.
Սատանան այդ մարդկանցը
Չէ սարսում բընաւին.
Երբ Յիսուս ինքն է ներկայ,
Ամէն ինչ է բարի.
Ով հիմնէ Նորա վերայ,
Կ'վայելէ լի ու լի։

2. Օգնիր, Յիսուս, որ սիրեմ
Քո խօսքն երջանկաւէտ
Եւ միշտ նոցա մէջ վարժուեմ,
Օգնիր, մեծ վարդապետ.
Թող մենք հոգւոյդ օգնութեամբ
Քո խօսքն հաստատ պահենք,
Խաչն տանենք համբերութեամբ
Եւ շատ պըտուղ բերենք։

108. *ՅՈՎ. 8, 31. Եթէ դուք իմ խօսքի մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք։*

P. 294.

1. Տէ՛ր, քո խօսքը, այդ ազնիւ սերմ
Ինձ համար գանձ է անգին.
Սիրում եմ այն սըրտանց և ջերմ
Առաւել քան զուտ ոսկին.
Թէ չը լինի խօսքդ հիմնաքար,
Չէ կարող հաւատս կանգնել.
Ինձ ի՞նչ փոյթ է աւար աշխարհ,
Խօսքիդ պէս կամիմ ապրել։

2. Ալէլուիա՜, այո՛, ամէն,
Դարձիր ինձ քո քաղցր նայուած,
Որ քո անուամբ ըսպառազէն
Խօսքումդ լինեմ հաստատուած.
Թող ջանասէր ծառայ լինեմ
Քո առաջին նաև ես
Եւ քո ոտաց տակը նըստեմ
Եւ լսեմ Մարիամի պէս։

109. ՍԱՂ. 119, 43. Քո ճշմարտութեան խօսքը ամենեւին մի հեռացնիր իմ բերանիցը, ինչու որ Քո իրաւունքին եմ յուսացած։

P. 174.

1. Թանգագին խօսք Աստծոյ բերնից,
Որ ես աղբիւր օրհնութեան,
Քեզ ունիմ ես ըսկըզբանից,
Որպէս հիմք իմ փրկութեան.
Քեզնից վառ լոյս է փայլում
Եւ ինձ Տիրոջ սէրն յայտնում։

2. Երանութեանդ նախաճաշակն
Ես ուզումեմ վայելել,
Քեզանում է աղբիւրի ակն,
Ուր կամիմ ծարաւս առնել.
Տէր, մանանայ ինձ շնորհիր,
Կենաց ջրով ոռոգիր։

3. Դու ես դըրախտն երկրիս վերայ,
Սընունդ տուր իմ հաւատքին.
Ինձ իմաստուն, խոհեմ արա,
Լուսաւորիր իմ Հոգին.
Օգնիր, Տէր, որ զարգանամ
Եւ լոյսով պտուղներ տամ։

4. Շնորհաց Հոգի, որ ինձ խօսքով
Աստծոյ սիրտը նըկարես,
Բա՛ց ինձ երկնից դուռը սիրով,
Որ ուղիղ հասկանամ ես՝
Թէ իւր խօսքումն ի՞նչ գանձեր
Պարգեւում է ինձ իմ Տէր։

5. Տուր այս սերմին բարեբեր հող,
Որ առատ պտուղ բերեմ.
Պարգեւիր ինձ քո լուսոյ շող,
Որ լուսիդ մէջ լոյս տեսնեմ.
Անդորրութիւն տուր հոգոյս,
Փարատի՛ր իմ տարակոյս։

6. Թող ամեն իմ ճանապարհներն
Քո քաշած գըծով գընան.
Թող քո մատով գրուած խօսքերն
Սըրտիս մէջ արմատանան.
Դու լուծես դըժուար հանգոյց,
Ո՜հ, եղի՛ր իմ ուղեցոյց։

7. Թող իմ կեանքում ունենամ միշտ
Քո խօսքն իբրեւ հայելիս.
Խաչից յետոյ դըտնեմ հանգիստ,
Չարից պահիր իմ հոգիս.
Թող հաւատքում պինդ կանգնեմ,
Մինչ քո երեսը տեսնեմ։

110. ՍԱՂ. 102, 13. Դու վեր կկենաս, Սիօնին կողորմիս. քանզի ժամանակ է նորան ողորմելու։

P. 290.

1. Սիօնն ցաւից գանգատում է,
Սիօն քաղաքն մեծաշէն,
Որին Տէրը ջերմ սիրումէ
Եւ պահում աներմունքէն.

Ա՜խ, սա՛, ինչո՞ւ Աստուած
Ինձ այս ցաւումն է թողած.
Ինչո՞ւ թողնում է, որ ճընշուեմ
Եւ այսպէս իմ փառքից ընկնեմ։

2. Աստուած, որ ինձ խոստացած է
Ամենայն ժամ պաշտպանել,
Իզուր մինչ ցարդ աշխատած է
Ցաւիս մէջ ինձ որոնել.
Ա՜խ, յաճախ բարկանումես
Եւ ինձ խըստիւ պատժումես.
Չե՞ս կարող արդեօք ինձ խըղճալ,
Ինչպէս առաջ իմ վրայ գըթա՞լ։

3. «Սիօն, ով դու շատ սիրելի»,
Նրան ասաց Աստծոյ բերան,
«Թէև ցաւը արդ քեզ նեղի,
Եւ անձըդ, հոգիդ ողբան.
Բայց թողե՛ր այդ ահ ու դող,
Մի մայր ի՞նչպէս է կարող
Ատել իւր միամօր որդին,
Անտես անել իւր խեղճ որբին»։

4. Թէ գըտնես է՛լ այս աշխարըքում
Մի այնպիսի անգութ մայր,
Որ իւր որդուն սէր չէ ցուցնում,
Ես ինքս եմ քեզ մայր և հայր.
Իմ սէրն է յաւերժական.
Սիօն, դո՛ւ իմ սիրական,
Դու ինձ սըրտանց նուիրուած ես,
Դու ինձ համար անմոռաց ես։

5. Ստանից չը կախարդուես,
Թըշնամիդ է ոխերիմ.
Գըրքումս անունդ գըրել եմ ես,
Ձեռքումս քեզ դըրոշմած ունիմ.
Այլապէս ի՞նչպէս կարեմ,
Չէ՞ որ պէտք է քեզ յիշեմ,
Քո պարիսպներդ եմ շինելու
Եւ քեզ սիրով այցելելու։

6. Քեզ վերայ են միշտ իմ աչքեր,
Քո տեղը իմ գոգումն է,
Որպէս մանկիկ մի կաթնակեր,
Որ մօր կուրծքին կըպչումէ.
Քեզ և ինձ ո՛չ ժամանակ,
Ո՛չ մարդը և ո՛չ հրեշտակ
Զատել կարող չեն միմեանցից,
Մի հեռացիր դու ինձանից։

ՄԻՍԻՕՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ։

111. ԵՍ. 65, 18. Դուք պիտի ուրախանաք և բերկ-
րուիք յաւիտեանս յաւիտենից նորանով, որ
ես ստեղծելու եմ։

1. Թող Սիօնի որդիքը
Ուրախութեամբ ցընծան.
Պիտի անցնեն չարիքը,
Բարի օրեր կուգան։

Ահա վերջի օրերը
Ամեն լերանց վերայ
Սիօն՝ Տիրոջը լեռը,
Պիտի խիստ բարձրանայ:

2. Ազգաց մեծ բազմութիւնը
Նորան դիմեն պիտի.
«Գընանք Տիրոջը տունը»,
Պիտի իրար ասուի.
Թո՛ղ ելնենք Տիրոջ սարը՝
Տեսնել Տիրոջն իրան.
Տէրըն իւր ճանապարհը
Ցոյց կըտայ մարդկութեան:

3. Եւ մարդիկ իրանց սուրերն
Խոփեր պիտի շինեն,
Եւ նիզակներն ու տէգերն
Յօտոցներու փոխեն.
Ոխով եղբայր դէմ եղբայր
Պիտի չը յարձակվին.
Պատերազմի չար հընարք
Բընաւ չը սովորին:

4. Ո՜հ թէ մեր աչքն այս յոյսը
Շուտ կատարուած տեսնէ,
Եւ Սիօնի վառ լոյսը
Աշխարհքն լուսաւորէ,
Յայժամ Տիրոջ տաճարում
Ցընծմամբ կ'երկըրպագենք.
Մեզ չի Թողնիլ խաւարում,
Այլ լուսումն կը քայլենք:

112. ՅՈՎ. 10, 16. Եւ մէկ հօտ և մէկ հովիւ կը լինեն:

P. 161.

1. Մի հօտ և մի հովուապետ,
Ի՞նչ կը լինիս, դու ով երկիր,
Երբ յայտնուի Տէրն սըրտագէտ,
Բայց դու, փոքր հօտ, ուրախացիր.
Պատրաստ կաց, և եղիր լոյս.
Իւր խոստման պէս՝ կ'գայ Յիսուս:

2. Պահապան, օրն կ'ուշա՞նայ,
Դաշտ և հովիտ են կանաչոտ.
Տիրոջ փառքը ազգաց վրայ
Տարածուելու կէտին է մօտ.
Կոյր ուխտաւորք խընդրեն լոյս.
Իւր խոստման պէս՝ կ'գայ Յիսուս:

3. Ե՛կ, ո՜հ, ե՛կ, Հովի՛ւ բարի,
Որ գիշերը օրուան փոխուէ.
Ըստուար մի մասն քո հօտի
Մոլորամիտ քեզնից փախչէ.
Փոքրի՛կ հօտ, մի՛ կորցնիր յոյս,
Իւր խոստմունքն պահէ Յիսուս:

4. Գերեզմանք ըսպասումեն,
Օ՜ն, շարժուեցէ՛ք չոր ոսկորներ.
Այն մեծ օրում կ'գայ վերէն
Ուխտի հրեշտակն առաքեր.
Տէրն կ'ասէ՝ «եղիցի՛ լոյս»,
Իւր խոստմունքն պահէ Յիսուս:

5. Ով դու մեծ օր, օ՜ր փառաց.
Քրիստոս լինի պիտ արեգակ.
Երկրիս վրայ համատարած
Երգեր լսուին պիտ շարունակ.
Պատրաստ կա՛ց և եղի՛ր լոյս,
Իւր խոստմունքն պահէ Յիսուս։

113. *ՂՈՒԿ. 14, 17. Եկէ՛ք, որովհետև արդէն ամենը պատրաստ է։*

P. 266.

1. Գովում եմ ես քեզ բոլոր սրտով,
Որ աշխարհքում որոշեցիր
Մի եկեղեցի ընտրել Հոգով,
Եւ փառքդ մարդկանց մէջ յայտնեցիր.
Տէր, դու կամել ես ընտրեալներից
Մի սուրբ ժողովք, սրբոց համայն,
Սրբելով նոցա արատներից
Որդւոյդ արեամբ անապական։

2. Հրաւիրում ես նոյնպէս այս օր,
Որ մարդ իւր ցաւն քեզ մօտ բերի.
Մարդոց դէմ ես միշտ կանգատաւոր,
Որ քո տունը մինչ ց՚արդ չէ լի.
Դու ուղարկումես փողոցները
Կանչել ամեն պատահողին.
Անխտիր կաղերն ու կոյրերը
Հրաւիրել քո խընջոյքին։

3. Ազգերից կանչել ես, դո՛ւ ով Տէր,
Հիմնել ես սրբոց ժողովքը,
Որ եկեղեցումդ օրհնեն քո սէր,
Հաւատան, պահեն քո խօսքը.
Եւ դու Քրիստոսին ես սահմանած
Որպէս գլուխ եկեղեցոյ.
Արժանացրո՛ւ մեզ պսակին փառաց
Եւ երկնային հանգըստեան քո։

4. Քեզնից որոշուած հիմքն է հաստատ,
Դորա վերայ կամինք շինել.
Օգնիր մեզ յաղթել շնորհքովդ առատ,
Աշխարհքն ջանայ մեզ վընասել.
Եւ ամեն կընճիռ, ամեն մի բիծ,
Որ քո հարսին տըգեղացնեն,
Թո՛ղ քո մեծ սիրովդ՝ սուրբ և անբիծ
Յաւիտեանըս ծածկուած լինեն։

114. *ՄԱՏԹ. 9, 37, 38. Հունձքը շատ է. բայց մշակները քիչ. արդ աղաչեցէ՛ք հունձքի Տիրոջն, որ մըշակներ հանէ իւր հունձքի մէջ։*

P. 152.

1. Զարթի՛ր, հոգի, նախնի վըկայից,
Որոնք հըսկեն պարիսպներն Սիոնի.
Եւ չընդհատեն երբէ՛ք ձայն տալից
Այլ ընթանան դէպ ասպարէզն կռուի.
Այս ձայնն աշխարհքում արձագանք գըտնէ,
Եւ բազմութիւնք ազգաց առ Տէրն կանչէ։

2. Ո՜հ թէ այս հուրն շուտով բռընկէր
Եւ ամենայն տեղ տարածուէր ազատ.
Տէ՛ր, հունձքը հընձելու տուր ձեռքեր.
Թող քո ծառայք գործում լինեն հաստատ.
Ով հունձքի Տէրը, եղի՛ր նըպաստիչ,
Հունձքը մեծ է, բայց մըշակները քիչ:

3. Այս աղօթքն, Տէ՛ր, Որդիդ մեզ ուսոյց,
Տուր քո զօրութիւն աւետարանչաց.
Քո խօսքն լինի նոցա ուղեցոյց,
Եւ դէպի քեզ վազէ հոսանքն ազգաց.
Քո արքայութիւնն, ով Տէր, տարածիր
Եւ չարի զօրութիւնն ինքդ կործանիր:

4. Ա՜խ թէ օգնութիւնն Սիօնից գար,
Ինչպէս հոգիդ և խօսքդ վըկայումեն.
Գերութիւնից ժողովուրդդ դառնար,
Թըշնամիք քո հօտն խիստ հալածումեն.
Մօտ է իրիկունն, ճեղքի՛ր երկինքըդ,
Ազատելու մեզ ցած իջի՛ր ինքըդ:

5. Քո պատգամք թող ազատ տարածուին,
Մի տեղ չը մընայ առանց քո լոյսի.
Թող ազգերն դըռներով քո մըտնեն,
Զարթնացրու և ազգըն Իսրայէլի.
Տո՛ւր լաւ մըշակներ և ոչ թէ վարձկանք,
Դըպրոցք և տաճարք լինեն բուրաստանք:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՈՆՖԻՐՄԱՑԻԱ:

115. ԳԱՂ. 3, 27. Ամենքդ, որ Քրիստոսումը մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք:

1. Ո՛վ Տէր Աստուած, հա՛յր գըթութեան,
Ա՛ռ սիրոյդ բազուկներով
Քեզ նուիրուած այս երեխան
Եւ օրհնի՛ր ձըրի շնորհքով:

2. Մեր նախահօր դառն արմատից
Մեղքով միայն ծնուեցանք,
Օտարացանք Աստուածանից,
Բարկութեան որդիք եղանք:

3. Բայց Դու սիրով և գըթութեամբ
Մարդկութեան վրայ խըղճացար.
Կատարեցիր անգին արեամբ
Այն ուխտը, որ խոստացար:

4. Այս երեխան մենք բերումենք
Հօտիդ մէջ, Տէր, ընդունի՛ր.
Ջըրով սորան մըկըրտել ենք,
Դու էլ հոգովդ մըկըրտի՛ր:

5. Տէ՛ր, տա՛ր ուղիղ ճամբի վերայ,
Ըստեղծի՛ր նոր սիրտ նորա մէջ.
Նորան խոստման որդի արա՛,
Առաջնորդի՛ր մինչև վերջ:

116. ՄԱՐԿՈՍ. 16, 16. *Ով որ հաւատաց և մկրտուեցաւ, նա կփրկուի։*

P. 161.

1. Յաւիտեան, հա՛յր, քեզ համար
Փրկչին արեամբ ես գնուել եմ.
Եւ նոյնպէս, Տէ՛ր բարերար,
Որդւոյդ մահուամն մկրտուել եմ.
Սորա համար ուրախ եմ,
Որ յաւիտեան ես քոնն եմ։

2. Ի՜նչ Փրկչական մեծ օրհնանք,
Որ տիրաւանդ մկրտութեամբ՝
Տէրն հայրս է, ես իւր ժառանգ
Եւ զաւակն եմ որդեգրութեամբ.
Նա է ինձ մեղքից փրկել,
Նորան կամիմ ես զոհուել։

3. Մեղաւոր բնութիւնից
Կարօղ եմ ես ըստեղծուել նոր
Եւ լինել քեզ նմանակից,
Սա մի հրաշք է անսովոր.
Սուրբ, սուրբ լինել ես կամիմ,
Յիսուսի հոգին է իմ։

4. Լսիր ինձ, ո՛վ Եհովայ,
Թանգ արեամբ եմ ծախու առնուած,
Հրաժարուի՛ր, դու սատանայ,
Երրորդութեամբ եմ ես կնքուած.
Հա՛յր, Ո՛րդի և սո՛ւրբ հոգի,
Դարձո՛ ինձ երանելի։

117. ՂՈՒԿ. 18, 17. *Ով որ չընդունի Աստուծոյ թագաւորութիւնը ինչպէս երեխայ, նա չի մտնիլ նորա մէջ։*

P. 277.

1. Յիսո՛ւս, դու ես մեզ գընած
Հեղմամբ քո սուրբ արեան.
Մենք քո մահումդ ենք մկրտուած,
Խընդրում ենք միաբան,
Այս մանուկը մեր ձեռքից
Ընդունի՛ր քո գոգում
Եւ լուա՛ մեղքից, մահից
Քո սուրբ աւազանում։

2. Ծընողք և կնքաւորներ
Խընդրումեն միասին.
Թող աճէ շնորհքովդ, ո՛վ Տէր,
Մանուկն այս նորածին.
Հանդիսաւոր այս ժամիս
Թող մեր ուխտն նորոգենք.
Տո՛ւր հոգիդ մեզ ամենիս,
Որ քո երկինքն մտնենք։

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ։

118. ՄԱՏԹ. 5, 6. *Երանի նորանց, որ սոված և ծարաւ են արդարութեան, վասն զի նորանք կ'կշտանան։*

P. 305.

1. Զարդարիր քեզ, անձ սիրելի,
Թո՛ղ խաւար բանտն այս մեղսալի.

Նա արեգակ է լուսավառ,
Եղի՛ր և՛ դու ճըրագ պայծառ.
Տէրն, որ շնորհ.քով փրկած է մեզ,
Հրաւիրումէ ընթրիքի քեզ.
Նա իշխումէ երկընքի մէջ,
Բայց կենումէ և՛ սըրտիդ մէջ:

2. Ո՜հ, ըշտապի՛ր դիմաւորել,
Իբր եղջերու առաջ վազել.
Ե՛լ ընդ առաջ քո Փեսային
Եւ ակա՛նջ դի՛ր քաղցըր խօսքին.
Ո՜հ, չես ուզում սիրտըդ բանալ,
Նորա տեսքով ցընծալ, խայտալ.
Ասա՛, քեզ եմ, Տէ՛ր, կարօտում
Եւ քեզ թողնել չեմ ցանկանում:

3. Լուսաւորի՛ր, Տէ՛ր, իմ միտքը,
Որ փափագեմ քո բարիքը.
Աղաչումեմ արտասուալից,
Տո՛ւր վայելեմ քո սեղանից.
Ի՜նչքան անգամ ծարաւած եմ,
Որ ըմպելին այս ճաշակեմ.
Տէ՛ր, թո՛ղ քեզ հետ կապուեմ սիրով
Եւ ըսպասեմ քեզ կարօտով:

4. Ո՛վ Տէր Յիսուս, կենացս Արև,
Ուրախութիւն իմ մըշտատև,
Դու փարատի՛ր խաւարն մեղաց,
Եղի՛ր իմ լոյսն, Փըրկիչ գըթած,
Թող անարժան, թեթևամիտ
Չը մօտենամ սուրբ սեղանիդ,

Որ չը լինեմ ես պարտական
Քո սուրբ մարմնոյ և սուրբ արեան:

5. Ո՛վ ճըշմարիտ կենաց հացը,
Յիսուս Քրիստոս իմ Աստուածը,
Քո սուրբ մարմին և սուրբ արիւն
Են իմ հոգւոյս կեանք, օրհնութիւն.
Թող արժանի ես հիւր լինեմ
Եւ քաղցրութիւնդ ես ճաշակեմ,
Որ այժմ քեզ հետ միանալով
Հասնեմ տունըս ես ապահով:

119. ՄԱՏԹ. 5, 6. Երանի նորանց, որ սոված և ծարաւ են արդարութեան, վասն զի նրանք կ՚կշտանան։

P. 31.

1. Տէրն է պատրաստել մեզ համար սեղան՝
Մեզ իւր հետ միացնելու.
Կանչումէ իւր մօտ ամբողջ մարդկութեան՝
Երկնային սընունդ տալու.
Եւ Նա շնորհում է մեզ իւր սուրբ մարմին,
Չի մեզ սովատանջ և թշուառ տեսաւ.
Նա տուաւ իւր կեանքն անգին
Եւ մեզ համար զոհ եղաւ:

2. Հիմայ կանչումէ՛ք, Նա ըսպասումէ,
Ուրախութեամբ մօտ եկէ՛ք.
Ձեր Փըրկիչն է, որ ձեզ հետ խօսումէ՝
«Առէ՛ք մարմինս և կերէ՛ք».

Ո՜հ, անկեղծ սրտով, խորին զղջումով
Այս սուրբ սեղանին եկէք՝ մօտենանք.
Ամէն գործ բաց թողնելով՝
Միայն Փրկչին հաւատանք։

3. Աղաչում ենք, ով Տէ՛ր, եղի՛ր ներկայ,
Թող ըզգանք ներկայութիւնդ,
Եւ օրհնիր քո սուրբ սեղանը հիմայ,
Թող գտնենք քո փրկութիւնդ.
Խօսքիդ համեմատ քեզ ենք աղաչում,
Այսօր սուրբ Հոգիդ դո՛ւ մեզ պարգևիր.
Մենք այստեղ քեզ ենք յիշում,
Ո՛վ Տէր, դու էլ մեզ յիշիր։

120. *ՅԱՅՏ. 19, 9. Երանելի են գառի հարսանիքի ընթրիքին կանչուածները։*

P. 355.

1. Տէր, ինքդ հաճիր մեզ պատրաստել,
Ընթրիքիդ մասնակից մեզ անել.
Լե՛ր ներկայ մեր մէջ, ով Աստուած,
Տուր մենք քեզնից կեանք ըստանանք,
Հաւատքով դէպի քեզ մօտենանք.
Փրկիր մեզ մահից, Տէր գթած.
Մենք քոնն ենք, ով Յիսուս,
Յաւիտեան լոյսոյս,
Ամէն, ամէն.
Փառք քեզ, որ մենք
Սրտով ամենք
Քեզ մօտ պիտի ընթրիք տօնենք։

2. Ճաշակեցէ՛ք հիմայ Տէրին,
Տիրաբաշխ այս հացըն երկնային.
Շնորհքն Յիսուսի ընդ ձեր հոգւոյն,
Եկէ՛ք՝ խըմել այս բաժակը,
Որ վառուի ձեր մէջ սուրբ կրակը.
Խընդրէ՛ք Աստծոյ արքայութիւն,
Թո՛ղ ձեր անձը մընայ
Հաւատարիմ մինչ մահ.
Ամէն, ամէն.
Ճամբան է նեղ,
Ուխտն ահեղ.
Քիչերն ընթրիք տօնեն այնտեղ։

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ։

121. *ԶԱՔ. 1, 3. Դէպի ինձ դարձէ՛ք, ասում է զօրաց Տէրը, և ես էլ դէպի ձեզ կ'դառնամ։*

P. 257.

1. Դարձի՛ր կըրկին, դարձի՛ր կըրկին,
Դու որ կորըստեան դիմես.
Զըղջմամբ չոքի՛ր ծունկերդ գետին
Տիրոջ առջև ինչպես ես.
Ինչպէս դու կաս, այնպէս էլ ե՛կ,
Լըսիր ձայնն, ո՛վ սըրտաբեկ.
Եւ կընդունուիս դու սիրալիր,
Դարձի՛ր կըրկին, ո՛հ դարձի՛ր.

2. Դարձի՛ր կըրկին, ո՛վ մոլորեալ,
Դէպ ողորմածն քո Աստուած.
Նրանով կարես արդարանալ,
Նա դարման տայ քո վիրաց.
Խաչափայտին գընա՛ շատ մօտ,
Դարձիր կըրկին, լե՛ր սըրտոտ,
Թէ ողորմածն քեզ կըպատժէ.
Սիրտը սիրով կ՚բաբախէ:

3. Դարձիր կըրկին առ Նա, ո՛վ խեղճ,
Դարձիր մահից դէպի կեանք.
Դարձի՛ր, ո՛վ մարդ անդարձ, անզեղջ.
Թող չար կեանքում չըկենանք.
Ա՜խ, Տէ՛ր, տուր ինձ դարձի հոգի,
Դառնամ նորէն քո որդի.
Տուր հաւատքիս հիւթ և սընունդ,
Տուր ներումն և նոր ծընունդ:

122. ՍԱՂ. 51, 1. Ողորմիր ինձ, Աստուած, քո ողորմութեան պէս, և քո մեծ ողորմութեան պէս ջնջիր իմ անօրէնութիւնները:

1. Միայն քեզ եմ, Յիսուս Փըրկիչ,
Յուսացել այս երկրի վրայ.
Դու ինքդ ես իմ մըխիթարիչ,
Ըսփոփանք այլ տեղ չըկայ.
Ըսկըզբից մէկն դեռ չէր ծնուած
Եւ ոչինչ դեռ չէր ըստեղծուած,
Երբ Տէրն ընտրեց ինձ աշխարհքից.
Տէ՛ր, քեզանից
Խընդրում եմ, փրկիր ինձ մեղքից:

2. Իմ մեղքերը մեծ են և շատ,
Զըղջում եմ բոլոր սըրտով.
Ողորմիր ինձ, արա ազատ
Քո մահուան զօրութիւնով.
Երբ ընդունես ինձ և օգնես՝
Մեղքի բեռնից ինձ ազատես՝
Ո՞վ է որ ինձ դատապարտէ.
Զի ինձ մաքրէ
Քո արիւնը. սա հըրաշք է:

3. Ողորմութեամբ, Տէ՛ր, հաստատի՛ր
Իմ մէջ հաւատք ճըշմարիտ.
Քաղցրութեամբ և սիրով նայի՛ր,
Որ լինեմ հաստատամիտ.
Ամենից աւել սիրեմ քեզ
Եւ ընկերիս իմ անձի պէս.
Երբ վրայ հասնի ժամն իմ մահուան,
Լե՛ր օգնական,
Թող կործանուի չար սատանան:

4. Փառք ի բարձունս Հօրն Աստուծոյ,
Որ մեզ բարիք է շնորհում.
Եւ միածին Նորա Որդւոյ,
Որ մեզ միշտ է պահպանում,
Եւ մխիթարիչ սուրբ Հոգւոյն,
Որը ցոյց տայ մեզ օգնութիւն.
Օրհնութիւն սուրբ Երրորդութեան,
Որ յաւիտեան
Ընտրեալներին է պահապան:

123. *ՍԱՂ. 51. Ողորմիր ինձ, Աստուած, քո ողորմութեան պէս։*

1. Աստուած ողորմած, դու ինձ ողորմեա՛,
Անհուն գթութեամբ իմ մեղքերն քաւեա՛.
Ամեն յանցանքից լուա զիս, մաքրիր,
Իմ շատ մեղքերից, ով Տէր, ինձ սրբիր։

2. Քանզի յանցանքներս ինձ լաւ յայտնի են,
Մեղքերս միշտ աչքիս առջև կանգնած են.
Միմիայն քեզ դէմ ես մեղանչեցի
Եւ մեծ չարութիւն առջեւդ գործեցի։

3. Եթէ ինձ պատժես, արդարադատ ես,
Եւ դատաստանովդ միշտ անարատ ես.
Քանզի յանցանքով մօրից յղացայ,
Իմ մօր արգանդից մեղաց մէջ ծնայ։

4. Մաքրիր մըշտիկով, որ ես սըրբանամ,
Ձիւնից աւելի ըսպիտականամ.
Ամեն մեղքերից ազատիր խեղճիս,
Մըխիթարութեամբդ ուրախ արա՛ զիս։

5. Ըստեղծի՛ր իմ մէջ սուրբ սիրտ, ո՛վ Աստուած,
Եւ շընորհի՛ր ինձ հոգի նորոգուած.
Բընաւ մի՛ գըցիր ինձ քո երեսից,
Եւ քո սուրբ Հոգին մի՛ հանիր ինձնից։

6. Քանզի, ո՛վ Տէր, չե՛ս կամենում զոհեր
Եւ չե՛ս պահանջում շատ ողջակէզներ.
Կոտրած հոգին է քո հաւանած զոհ,
Խոնարհ սրտի սէրն է միայն քեզ հաճոյ։

124. *Ա. ՏԻՄ. 1, 15. Ճշմարիտ է այն խօսքը և ամեն ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորներին փրկելու, որոնց առաջինը ես եմ։*

P. 38.

1. Ով անձն իմ, շուտ ապաշխարի՛ր,
Մեղքի լուծը քեզնից գըցի՛ր,
Քանզի մահն է մեղքի պաշար,
Ինչո՞ւ մեռնես անապաշխար։

2. Քո կախումն է Տէր Յիսուսից,
Յոյսըդ կըտրիր դու քեզանից.
Փըրկչով կարես լինել արդար,
Ինչո՞ւ մեռնես անապաշխար։

3. Պատրաստ եղիր ամենայն ժամ,
Մեղքերդ յիշիր ամեն անգամ.
Միջոց ունիս, լե՛ր բարերար,
Ինչո՞ւ մեռնես անապաշխար։

4. Ո՛վ սուրբ Հոգի, օգնի՛ր խեղճիս,
Մահուան համար պատրաստի՛ր զիս.
Սըրբացուցիչ, որ քեզ ունիմ,
Ես անպատրաստ ինչո՞ւ մեռնիմ։

5. Ով Հայր, Որդի և սուրբ Հոգի,
Երրորդութիւն ըսքանչելի,
Ճակատիս քո կընիքն ունիմ,
Ես անպատրաստ ինչո՞ւ մեռնիմ։

125. *ԺՈՂ. 1, 2. Ունայնութիւն ունայնութեանց, բոլորը ունայն է։*

1. Աշխարհ ամենայն
Սուտ է և ունայն.
Տէր Յիսուս Քրիստոս
է ճշմարտախօս.
Աշխարհքը շուտ կ'անցնէ
Իւր վայելչութեամբ.
Իսկ Տէրն կ'թագաւորէ
Անանց զօրութեամբ։

2. Քակիր իմ կապանք,
Ներիր իմ յանցանք,
Պսակիր ինձ կենօք
Երկնային շնորհօք.
Երբ քաշեմ հառաչանք,
Մեղքերից ճնշուած,
Լըսի՛ր իմ աղաչանք
Իմ սրտից ելած։

3. Հոգիս, արթնացիր,
Երկայն մի թըմրիր.
Մարմնոյ ցանկութիւն
Համարիր դառն թոյն.
Տէր Յիսուսի սիրով
Վառուիր, բորբոքի՛ր,
Հաւատքով, շնորհքով
Սիրտ քո հաստատիր։

4. Այստեղ ամեն ինչ
Լինի բընաջինջ.
Բայց տուէ, ով Տէր,
Յաւիտեան քո սէր.
Հաճիր ինձ պահպանել
Որպէս բիբական.
Զի Դու ես ինձ փըրկել
Արեամբ պատուական։

126. *ՍԱՂ. 51, 4. Միմիայն Քեզ դէմ մեղանչեցի, և չարը Քո աչաց առջև գործեցի։*

P. 368.

1. Միայն քեզ դէմ, Տէր, քեզ դէմ եմ մեղանչած
Եւ չարիք իմ առջևդ գործել.
Տեսնումես իմ մեղքն վրաս անէծք է դարձած,
Հաճիր, ով Տէր, ցաւիս նայել։

2. Իմ հառաչանքն, Աստուած, քեզնից չէ ծածուկ,
Կուտակւում են հոգսեր վերաս.
Ով Տէր, մինչև ե՞րբ թափեմ ես արտասուք,
Մինչև ե՞րբ պիտ հեռու մընաս։

3. Տէ՛ր, մի դատի՛ր ինձ շատ մեղքերիս համար,
Մի լի՛ր ինձնից վըրէժառու.
Կ'աղաչեմ, Տէր, ցոյց տուր քո երեսդ պայծառ.
Երկայնամիտ Աստուած ես Դու։

4. Ողորմած Տէ՛ր, լցրու ինձ ուրախութեամբ,
Քո սուրբ օրէնքն թող ես պահեմ.
Լըսիր ինձ, Հայր, կաղաչեմ՝ Որդոյդ անուամբ,
Դու ես իմ Տէրն՝ ես ծառադ եմ։

5. Տէ՛ր, իմ պաշտպա՛ն, ինձ օգնելու ըշտապի՛ր,
Եւ տա՛ր ինձ հարթ ճամբի վերայ.
Նա լսում է, Տէրն լսում է իմ խնդիրը,
Նա իւր շնորհքն ձրի կուտայ:

127. ՂՈՒԿ. 15, 2. Սա ընդունում է մեղաւորներին և նորանց հետ ուտում:

P. 161.

1. Յիսուս քեզ ընդունում է,
Ո՛վ մեղաւոր, լսիր այս խօսք.
Ամեն մարդոց կանչում է.
Թող գան ազգեր և հեթանոսք,
Նա է, որ ազատում է,
Յիսուս, քեզ ընդունում է:

2. Մենք շնորհքի չենք արժանի.
Բայց իւր խօսքում Նա երդուած է.
Փրկուել կարէ, ով լինի,
Շնորհաց դուռը արդ բացուած է,
Մեղաւոր, քեզ ասում է՝
Յիսուս, քեզ ընդունում է:

3. Տրտմեալ իմ անձն գալիս է,
Եւ իւր մեղքերն խոստովանում.
Բարի Փրկիչս տալիս է
Կեանք, շնորհք և մեղքիս ներում.
Այս խօսքն ինձ ըսփոփում է,
Յիսու ս մարդկանց փրկում է:

4. Յիսուս քեզ ընդունում է,
Ով մեղաւոր, վեր կաց և եկ.
Նա փրկեց ինձ, կանչում է.
Քեզ, ո՛վ յոգնած, ո՛վ ահաբեկ.
Յիսուս քեզ ընդունում է,
Յիսուս քեզ ընդունում է:

ՀԱՒԱՏՔ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ:

128. ԵՍԱՅ. 61, 10. Նա ինձ հագցրեց փրկութեան հանդերձներով, արդարութեան պատմուճանը գցեց ինձ վերայ:

P. 31.

1. Փրկչի արիւն և սրբութիւն
Իմ զարդն է և ըզգեստ փայլուն,
Ես կարող եմ կանգնել դրանցով,
Երբ ներս մտնեմ երկնից դռնով:

2. Հաւատում եմ Փրկչին օրհնեալ,
Ուստի էլ չեմ դատապարտեալ.
Փառք քեզ, Տէ՛ր, որ կարող եմ ես
Հաւատալ և սրբուել մեղքէս:

3. Աստծոյ Գառը՝ սուրբ և անբիծ,
Որ կախուեցաւ խաչափայտից.
Նա զոհուեցաւ վասն իմ մեղաց,
Նա իմ Տէրն է և իմ Աստուած:

4. Ի՜նչքան որ ես այստեղ ապրեմ,
Այս միտքն անխախտ պիտի պահեմ.
Իւր շնորհքը ի մէջ արեան,
Պիտի պատմեմ ես յաւիտեան։

5. Փառք քեզ, Յիսուս, Տէր բարերար,
Որ մեզ նման Դու մարդացար.
Ինձ և ամբողջ այս աշխարհքին
Ինքդ եղար փրկանքի գին։

6. Արքայ փառաց, Յիսուս Քրիստոս,
Աստծոյ որդին, մեծ բարեխօս.
Տիեզերքին դու ողորմի՛ր,
Քեզ յուսացող մարդկանց օրհնիր։

129. *ԵՍԱՅ. 26, 4. Յաւիտեան Տիրոջը յուսացէք, վասն զի Տէր Եհովան յաւիտենական Վէմ է։*

P. 245.

1. Գիտեմ՝ ումն եմ հաւատում,
Գիտեմ՝ որն է ամուր.
Ինչո՞ւ պաշտենք աշխարհքում
Հող ու մոխրին իզուր.
Գիտեմ ինչ է մնայուն,
Ա՜խ, աշխարհքն է ունայն.
Նա է միայն իմաստուն,
Որ լսումէ Փրկչի ձայնին։

2. Գիտեմ իմ վարդապետը,
Որ երկինքը կառոյց.
Նա է մեծ սրտագէտը.
Խօսքն է իմ ուղեցոյց.

Նորա առջև Քերովբէք
Երգեն ալէլուիա՜.
Նորան չեմ թողնիլ երբէք,
Զի գիտեմ՝ ով է Նա։

3. Նա, արեամբ ներկուած մարդը,
Որ ինձ համար մեռաւ.
Նա հոգոյս միակ զարդը,
Որ զօրութեամբ յարեաւ.
Նա իմ շատ մեղքերս քաւեց,
Տուաւ ինձ իւր հոգին.
Նա իմ գլուխս պսակեց
Եւ սեղմեց իւր կուրծքին։

4. Գիտեմ՝ ումն եմ հաւատում,
Գիտեմ՝ որն է ամուր,
Եւ փոշու պէս չի կորչում
Աշխարհքի հետ իզուր.
Դա մնայ՝ երբ ծերանամ.
Զոհ չի գնալ մահուան.
Տէր Յիսուս, երբ երկինք գամ,
Կ՚օրհնեմ քեզ յաւիտեան։

130. *ՅՈՎ. 1, 16. Նորա լիութիւնիցը մենք ամենքըս առինք շնորհք շնորհքի տեղ։*

1. Շնորհք ընդ մեզ ամենեսեան,
Շնորհք փարատէ մեր վախ.
Շնորհք է, որ իւր գալստեան
Ըսպասում ենք ուրախ։

2. Մեզ այս նեղ ճանապարհում,
Չի յաջողուիլ մի բան,
Թէ չը մընանք իւր շնորհքում,
Մինչ մեր կեանքի վախճան։

3. Շնորհաց վրայ դընենք մեր յոյս,
Զի ով Նորան յուսայ,
Չի հանգչիլ նրա կեանքի լոյս,
Յաւիտեան կ'ապրի Նա։

4. Շնորհքն օգնումէր մեր հայրանց՝
Նեղութեանց մէջ յաղթել.
Նա օգնումէ այն անձանց,
Որ նմա կամին դիմել։

5. Երբ մեծանան մեր ցաւեր,
Դիմենք շնորհաց Գահին.
Ամենազօր Փըրկիչ Տէր,
Միտ դի՛ր մեր աղօթքին։

6. Ա՜խ, թող քեզ հաճոյ լինի,
Մեր տըկար աղօթքը.
Քո սուրբ շնորհքն թող մեզ օգնի,
Մինչ ժառանգենք փառքը։

131. ՀՌՈՎՄ. 3, 22. Աստուծոյ արդարութիւնը Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն է։

P. 37.

1. Ո՛վ Տէր, ինձ նոր սիրտ շընորհիր,
Որ անպայման առ քեզ դառնամ.
Դու նոր ծընունդ ինձ պարգեւիր,
Հոգով, սըրտով քեզ հաւատամ։

2. Մեծ օրհնութիւն է սա իրաւ,
Երբ սուրբ Հոգիդ ինձ շընորհես.
Երջանկութիւն է սա անբաւ,
Երբ քո շնորհօք ինձ նորոգես։

3. Յայնժամ հոգիս ազատ մընայ
Ամէն տեսակ վըտանգներից.
Մարմին, աշխարհ և սատանայ
Պիտի յաղթուին միշտ ինձանից։

4. Մեղքն Ադամայ նախաստեղծին
Մեզ բարկութեան որդիք արեց.
Հոգենորոգ շնորհօք Փըրկչին
Դուռն դըրախտի վասն մեր բացուեց։

5. Շնորհիր ինձ, Տէր, ծնուել նորէն
Եւ ժառանգ գոլ արքայութեան.
Թող քո Հոգով մեղքերս սըրբուեն,
Քեզ հետ հոգիս, սիրտս միանան։

132. ՀՌՈՎՄ. 5, 19. Ինչպէս որ մէկ մարդու անհնազանդութիւնովը շատերը մեղաւորներ եղան, այնպէս էլ մէկի հնազանդութիւնով արդարներ կլինին։

1. Ի՜նչ տըխուր էր իմ վիճակ,
Երբ Տէրը ինձ տեսաւ.
Հոգոյս դարմանը միակ
Աստուած ինքն ինձ տուաւ.

Գըտաւ ինձ մահուան շատ մօտ,
Խաւարից ինձ հանեց,
Որ պատմեմ քեզ, ո՛վ վախկոտ,
Ինչպէս ինձ բըժըշկեց։

2. Շատ բըժիշկներ եմ տեսած,
Որ ինձ շատ դեղ տուին.
Բայց շատ եմ վատթարացած,
Բընաւ օգուտ չ՛արին.
Մէկը ասաց՝ ցաւ չ՛ունիս,
Քաջ կա՛ց, շուտ կազատուես.
Իսկ այլք՝ անշուշտ կըկորչիս
Եւ յաւիտեան կ՛մեռնես։

3. Սակայն այն մեծ բըժիշկըս
Անհամեմատ սիրով
Շուտ ընդունեց խընդիրքըս,
Ինձ շատ ողորմելով.
Բաց արաւ իմ վէրքերը,
Ցոյց տալով իմ յանցանք.
Մերկացրեց իմ մեղքերը,
Շնորհքով փըրկեց իմ կեանք։

4. Երբ հաւատքով տեսնում ենք
Յիսուս Փըրկիչն խաչեալ,
Մահից, մեղքից ըզգում ենք
Շուտով մեզ ազատեալ.
Մեզ կանչումէ բըժիշկը,
Դժուար պայման չըկայ.
Ձըրիապէս ձեր վիշտը
Նրանով կըվերջանայ։

133. *ՍԱՂ. 119, 156. Տէր, Քո ողորմութիւնը շատ է։*

1. Փըրկիչն յայտնեց ողորմութիւն
Ինձ մեղաւոր արարածիս.
Եւ ցոյց տուաւ իւր սէրն անհուն,
Որ դըժոխքից փըրկէ հոգիս.
Անսահման է իմ ցընծութիւն,
Գովում եմ քեզ, ողորմութիւն։

2. Եւ ես որդի մեծ բարկութեան
Տէր Յիսուսից շընորհք գըտի.
Ինքը քանդեց պատն բաժանման,
Եւ ինձ արաւ Տիրոջ հետ մի.
Ո՞վ կատարեց այս գըթութիւն,
Ողորմութիւն, ողորմութիւն։

3. Տէ՛ր, քո ծառայք պիտի պատմեն
Ողորմութիւնդ ամեն մարդու.
Այն օրը քեզ պիտի գովեն
Հաւատացեալք ամեն դարու.
Տըրտմեալք գըտնեն ուրախութիւն,
Երբ տեսնեն քո ողորմութիւն։

4. Պանդըխտութեանս կարճ միջոցում
Ներկայութեանդ ես կարօտ եմ.
Յանկարծահաս մահուան ժամում
Ողորմութեանդ պիտի դիմեմ.
Եւ երբ մըտնեմ վերին իմ տուն,
Փառք կ՛տամ քեզ, ո՛վ ողորմութիւն։

ՍՐԲԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ:

134. *ՄԱՏԹ. 16, 24. Եթէ մէկը կամենում է իմ ետեւից գալ, թող իր անձը ուրանայ և իր խաչն առնէ և իմ ետեւից գայ։*

1. Իմ յետեւից, Տէրն ասումէ,
Իմ յետեւից, ով մարդիկ,
Ձեզ ուրացէք, զատուէք չարից,
Լըսեցէք ձայնն իմ քաղցրիկ.
Իմ խաչն ու լուծն ձեր վրայ առէք,
Եւ ինձ միայն հետեւեցէք։

2. Ես լոյս եմ՝ ձեզ լուսաւորողն,
Կամիմ ձեզ կեանք և լոյս տալ.
Ինձ մօտ եկողն, ինձ հետեւողն
Խաւարի մէջ չի մընալ.
Ես եմ ճամբան, ես լաւ գիտեմ,
Թէ որ ճամբով ձեզ պիտ տանեմ։

3. Վընասակարն ձեզ ցոյց կըտամ,
Որ նորանցից հեռանաք.
Ձեզ մեղքերից կը լուանամ
Ջիւնի պէս մաքուր, ճերմակ.
Ես ձեր անձանց եմ ջերմ պաշտպան,
Կը հասցնեմ ձեզ երկնից դըռան։

4. Ձեր առջեւից գընալ կամիմ,
Թէ ընկնէք՝ օգնեմ պիտի.
Կռուի դաշտում ես ձեզ կ'օգնեմ,
Մըրցանակն իմ պիտ լինի.
Վախկոտ զինուորն պիտի տեսնէ,
Որ Զօրագլուխն առաջ կ'քայլէ։

5. Ով կարծում է իւր անձն գըտնել,
Առանց ինձ նա կը կորցնէ.
Ով կարծում է նորան կորցնել,
Նա անպատճառ կը գըտնէ.
Ով խաչն առած չէ հետեւում,
Ես նրան արժան չեմ համարում։

6. Ուստի եկէք, որ մեր Տէրին
Հոգով, մարմնով հետեւենք
Եւ նեղութեանց տըխուր ժամին՝
Նորա մօտ հաստատ կանգնենք.
Ով չէ՛ կըռւում արիաբար,
Չէ՛ պըսակում նորան մեր Հայր։

135. *ՍԱՂ. 146, 10. Տէրը կ'թագաւորէ յաւիտեան, քո Աստուածը։*

P. 187.

1. Մէկն է Թագաւորն, Էմմանուէլ հըզօր,
Թըշնամիք դողացէք, տուէք փախուստ.
Բայց դու, ով Սիօն, ցընծա ամենայն օր,
Զի քո փըրկութիւնն եկաւ ի վերուստ.
Անվերջ բերկրութիւն, կեանք յաւիտենական
Տալիս է մեզ Տէրը սիրով անսահման։

2. Սիօն, ի՞նչու դու ողբումես անդադար,
Վեր, վեր պահի՛ր քո ծըռած գըլուխը.
Տես, այժըմ ծագել է Արեգակն արդար,
Եւ անհետացել թանձր մառախուղը.
Ցիսուս ապրումէ, սէրը թագաւորում,
Եւ քեզ առ կենաց Աղբիւրն առաջնորդում։

3. Մի վաղէք դէս ու դէն, վաղէք աղբիւրը,
Յիսուս խընդրումէ՝ թէ եկէք ինձ մօտ.
Տեսէ՛ք, ինչպէս հոսումէ կենաց ջուրը,
Ո՛հ, եկէ՛ք՝ դուք որ սըրտով էք կարօտ.
Խըմեցէ՛ք, սի՛րելէք և զուարթացէ՛ք,
Այստեղ է փըրկութիւն, այլ տեղ ո՛չ երբէք։

4. Զօրութիւն, գոհութիւն և փառք ու պատիւ
Լինի Հայր Աստծոյն, Որդուն և Հոգոյն.
Ա՜խ, թէ անդ լինէի սըրբոց հետ անթիւ,
Եւ Տէրին տայի սըրտիս գոհութիւն.
Նրա առաջ գցումեն թագ ու պըսակներ,
Տես, ինչպէս հընչում են բարձրաձայն երգեր։

136. ԺՈՂ. 2, 1. Ես սրտումս ասացի. Մի եկ քեզ փորձեմ ուրախութիւնով և բարիք էլ վայելիր. բայց ահա սա էլ էր ունայն։

P. 249.

1. Ունայնութիւն ունայնութեանց
Այս աշխարհքն է փուչ և սուտ.
Միայն Աստծոյ սէրն վասն մարդկանց
Յաւիտեան ունի օգուտ.
Պահպանիր ինձ,
Պաշտպանիր ինձ
Այս խաբեբայ աշխարհքից,
Որ չը զըրկուեմ երկընքից։

2. Հոգոյս համար անձն իւր զոհեց,
Որ իւր մօտ արդարանամ.
Վասն իմ մեղաց մահ ճաշակեց,
Որ ես ինքս արդարանամ.
Ո՞վ իմ տեղակ
Մարդ կամ հրեշտակ
Փըրկչիս պէս կեանք է զոհած
Եւ ամեն բան կատարած։

3. Տէր, սիրովդ իմ սիրտը վառի՛ր,
Որ քեզ միայն սրտանց սիրեմ.
Քո սուրբ Հոգին ինձ պարգևիր,
Որ այս աշխարհքն ես ատեմ.
Հաւատ և յոյս,
Սէր, կեանք և լոյս
Շընորհիր ինձ մըշտական,
Որ քեզ օրհնեմ յաւիտեան։

137. ՅՈՎ. 13, 35. Սորանով կգիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք։

P. 294.

1. Սիրտ և սիրտ միասին կապուած՝
Աստծոյ սըրտին դիմեցէք.
Ձեր սիրոյ կայծերն վառ պահած՝
Դէպ Փըրկիչը սըլացէք.
Նա գըլուխ է, իսկ մենք անդամք,
Նա լոյս է, իսկ մենք փայլը.
Նա վարդապետ է, մենք եղբարք,
Նա մերն է, մենք Նորանը։

2. Եկէ՛ք, եկէ՛ք, շնորհաց որդիք,
Ձեր խոստմունքը նորոգէ՛ք.
Երդուեցէ՛ք Նորան, ո՛վ մարդիկ,
Չի թողնել Նորան երբէք.
Եւ յորժամ ձեր կեանքի թելը
Բարակէ ու կըտրատուի,
Նորան ինքն Էմմանուէլը
Կըրկին պիտի նորոգի։

3. Ով անդամներ, ցուցէ՛ք իրար
Սէր անկեղծ, անկողմնակալ,
Որ ամէն մէկն եղբարց համար
Իւր կեանքը կարենայ տալ.
Այսպէս սիրեց Տէրն աշխարհքին,
Այսպէս զոհուեց կեանք Նորա.
Ո՜հ, սա ցաւ է Նորա սըրտին,
Որ չենք վարւում ինչպէս Նա։

4. Ով Սէր, Դու մեզ պատուիրած ես,
Որ մենք սիրոյ մէջ ապրենք.
Կենդանացրու մեզ լիապէս,
Օգնի՛ր՝ որ մենք չը յոգնենք.
Արծարծիր մեր սիրոյ կայծը,
Որ ամէն մէկն պարզ տեսնէ՝
Թէ մէկ է մեր Տէր Աստուածը,
Եւ մի մարդ պիտ մեզ դատէ։

5. Տէր, միմեանց հետ միացրո՛ւ մեզ,
Ինչպէս Դու մի ես Հօր հետ.
Ա՜խ, օգնի՛ր, որ նըմանենք քեզ,
Ով մեր անձանց Հովուապետ.

Մեր լապտերն քո հուրից միայն
Թո՛ղ ընդունէ լոյս, ո՛վ Տէր.
Որ իմանայ աշխարհքն համայն,
Թէ ենք քո աշակերտներ։

138. Փիլ. 2, 12. Ահով և դողալով գործեցէք ձեր անձերի փրկութիւնը։

P. 288.

1. Գործէ՛ք, գործէ՛ք, որդիք մարդկան,
Գործէք ձեր փըրկութիւնը.
Մի շինէք չար մարդկանց նըման
Աւազի վրայ ձեր տունը,
Այլ դէպի վեր նայեցէք
Եւ երկինքը խընդրեցէք.
Երկրիս վերայ պարտիք խորհել՝
Թէ դուք ինչպէս կարէք փըրկուել։

2. Երանի նրան, որ կըռուում
Եւ հաւատքով դիմանում.
Երանի նրան, որ յաղթում
Մեղքն ու աշխարհքն իւր սըրտում.
Եւ Քրիստոսի խաչի տակ
Ձըգտում վեր շարունակ.
Ով երկինքը մըտնել կամի,
Առաջ Փըրկչին հետ պիտ մեռնի։

3. Ա՜խ, թող կռուենք հաւատարիմ,
Ծոյլ և տաղտուկ չը լինենք.
Մեր թըշնամին է ոխերիմ,
Բայց թո՛ղ չի յուսահատուենք.

Թէ չի կռուենք քաջութեամբ՝
Չէ՛նք պըսակուիլ յաղթութեամբ.
Միայն սըրտոտ, քաջ զինուորաց
Պիտի տըրուի պըսակն փառաց։

4. Աչքըս դարձնումեմ դողալով
Մեղքից դէպի Յիսուսին.
Յայնժամ կանգնումեմ ապահով
Իւր շընորհքումն թանգագին.
Փըրկի՛չ, հաճի՛ր ծառայիդ
Չենթարկել դատաստանիդ.
Տուր ինձ հոգւոյդ զէնքը փայլուն,
Որ ես գործեմ իմ փըրկութիւն։

5. Ամէն, եղիցի, Տէ՛ր, ամէն.
Քո սուրբ հոգւովդ ինձ կընքի՛ր,
Որ հաւատքով ըսպառազէն
Պատերազմեմ քաջ և ժիր,
Ինձ օգնութիւն. Տէրն կը տայ.
Եւ կ՚իշխէ գործին վերայ,
Ես կը հըսկեմ ու կ՚աղօթեմ,
Մինչև որ իւր երկինքն մըտնեմ։

139. ՄԻՔԱ. 2, 13. Նորանց թագաւորը անց է կենում նորանց առջև, և Տէրն էլ նորանց պարագլուխ։

P. 294, 295.

1. Ո՛վ Լուծողդ ամէն կապերի,
Որ շարունակ մեզ մօտ ես.
Երբ վիշտ, ամօթ մեզ վրայ թափուի՝
Երկընքումն ենք իսկապէս.

Ադամական մեր չար կիրքեր,
Փըրկիչ, դու սանձահարէ՛ր.
Քո երեսիդ լուսով, ով Տէ՛ր,
Խաւար բանտից մեզ հանէ՛ր։

2. Սա է քո հօր հաճութիւնը,
Որ տանես մեզ մինչ վախճան.
Քեզանում է լիութիւնը
Սիրոյ և իմաստութեան.
Տէ՛ր, չի կորչում և՛ ոչ մէկը
Որ տըրուած է քեզ հօրից.
Քո ձեռքումն է կեանքիս ղեկը.
Հասցրո՛ւ ինձ ի տուն երկնից։

3. Իշխէ՛ր, իշխա՛ն, յաղթէ՛ր, յա՛ղթող,
Մեր գերութեան դո՛ւ վերջ տուր.
Ուխտի արիւնն, մեղքը քաւող,
Լուանումէ մեզ մաքուր.
Թանգ գընով ենք գընուած, փըրկուած,
Մարդկանց ծառայ չը լինենք.
Քաշէ՛ր մեզ, Տէ՛ր, առ հայր Աստուած,
Որ վերջը երկինք մըտնենք։

140. ԳԱՂ. 5, 16. Հոգով գնացէք և մարմնոյ ցանկութիւնն չէք կատարել։

1. Ո՛վ մա՛րդ, վըշտեր, հոգսեր ունիս,
Միշտ չեն մընալ, չը վըրդովիս.
Ցաւ, նեղութիւն և տառապանք,
Աղքատութիւն և դառն տանջանք
Շուտով կանցնեն, եղբա՛յր, սիրտ ա՛ռ,
Տէրը վերջ կտայ ցաւիդ իսպառ։

2. Ով մարդ, ունիս մեղքեր զազիր,
Զղջա՛, ողբա՛ և լաց եղիր.
Ապաշխարիր Աստծոյ շնորհքով,
Տէր Յիսուսին դիմիր շուտով.
Քանզի դժոխքն է իրական,
Տանջանք նորա տեւողական:

3. Ով մարդ, դու նոր սիրտ ըստացա՛ր,
Եղի՛ր Հոգոյն սըրբոյ տաճար.
Սիրիր Աստուած և քո ընկեր
Եւ հընչեցրու ուրախ երգեր.
Քանզի երկնից երանութիւն
Է հաստատուն և մընայուն:

141. ԵՓԵՍ. 6, 10. Եղբայրներս, զօրացէք Տէրով և Նորա զօրութեան կարողութիւնովը:

1. Ով Քրիստոսի օրհնեալ զինուորն,
Դու քեզ լաւ պատրաստիր.
Յիսուս Քրիստոս, քո Թագաւորն,
Աչքիդ առջև պահիր.
Խաչի դըրօշն բըռնած՝
Աշխարհքն յետև թողած՝
Փողի ձայնին նայիր դու լաւ,
Յետ մի՛ դառնար բընաւ:

2. Տէրը ճամբադ կըպատրաստէ,
Որ անվըտանգ վազես.
Երբ վայր ընկնես, վեր կըկացնէ,
Որ Նրան փառաւորես.

Քեզ միշտ կերակրում է,
Վէրքերդ բըժըշկումէ.
Երբոր Նա իւր փառքովն կըգայ,
Փառաց Թագն քեզ կըտայ:

3. Քո Զօրագլուխն ոսոխներին
Այն օրը կը պատժէ.
Անհնազանդ աշակերտներին
Փառքից պիտի զըրկէ.
Երբ գայ օրն հատուցման,
Վարձք կուտայ մեծ արքան.
Ուստի եղի՛ր դու հընազանդ,
Պահի՛ր այն սուրբ աւանդ:

142. ՅՈՎ. 6, 69. Տէ՛ր, ո՞ւմ մօտ գընանք, յաւիտենական կենաց խօսքերն ունիս:

1. Ա՜խ, Տէր իմ Յիսուս, թէ սիրտս քեզ չունենար,
Եւ արիւնդ վասն իմ բարեխօս չըդառնար,
Թըշուառ մեղաւորիս վերջն ի՞նչ կըլինէր,
— Մահ և կորուստ էր:

2. Հոգիս արեամբ մեղքից և մահից փըրկուած,
Օրհնում է քեզ, ով Տէր, մարդասէր Աստուած.
Տուր ինձ սուրբ սիրտ, և թող իմ մէջ նորոգուի
Մի ուղիղ հոգի:

3. Ուսո՛, որ քո պատուէրը, Տէր, պահեմ ես,
Քեզ սըրտանց սիրեմ և ընկերս էլ ինձ պէս.
Ես երբէք աղօթքումս չըլինեմ անփոյթ,
Ո՛վ Տէր բազմագութ:

4. Հասցրու ինձ, ով Յիսուս, իմ վերին տունը,
Որ տեսնեմ լուսի քո փրկութիւնը.
Ա՜խ, ի՜նչ կարօտ եմ այնտեղ տալ յաւիտեան,
Փառք Քո սուրբ անուան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ:

143. ՍԱՂ. 128. Երանի այն մարդուն, որ Տէրիցը վախենում է։

P. 38.

1. Բիւր երանի առն երկիւղած,
Որ Տիրոջ ճամբան է ընտրած.
Նա իւր ձեռքով հաց կ'աշխատէ,
Բարեյաջող կեանք կըվարէ:

2. Քո ամուսինն տանըդ կլինի
Որպէս մի որթ ողկոյզով լի.
Սեղանիդ շուրջն են քո որդիք
Իբր ձիթենոյ ոստեր գողտրիկ:

3. Պիտի բերէ քեզ մեծ օրհնանք,
Երբ դու վարես բարեպաշտ կեանք.
Քեզնից անէծքն է հեռանում,
Որում աշխարհքն է գըտնըւում:

4. Սիոնից պիտ շընորհք գըտնես,
Որ քո հոգոյդ աչքովն տեսնես.
Երուսաղէմն ճոխ, աննըման,
Որ Աստծոյ մօտ է պատուական:

5. Ուզումէ քեզ առաջնորդել
Եւ բարութեամբ քեզ մօտ լինել.
Եւ քո որդոց որդիներին
Պիտի տեսնես դու խընդագին:

144. ՅԵՍՈՒ. 24, 15. Ես և իմ տունս Եհովան պիտի պաշտենք։

P. 342.

1. Ես և իմ տունն, մենք պատրաստ ենք,
Որ քեզ, ով Տէր, քեզ ծառայենք
Մեր կարճ կեանքի օրերում.
Ո՜հ, եկ՝ մեր տան տէրը եղի՛ր,
Մեզ ամենիս ինքըդ օրհնի՛ր,
Որ մենք ապրենք քեզանում.
Մեզ մի — բարի
Դըրախտական
Ընտանեկան կեանք տուր, ով Տէր,
Որ գովենք քեզ և քո մեծ սէր:

2. Թող մեր տունը հիմնուած լինի.
Միայն քեզ վրայ, Վէ՛մ կենդանի,
Եւ քո սուրբ շնորհաց վերայ.
Երբ գան խաւար գիշերները,
Թող դարձնենք քեզ մեր աչքերը
Մանուկների պէս վըստահ.
Ուրախ — անվախ
Ցաւի դիմաց,
Ով Տէր Աստուած, անշարժ մընանք,
Եւ Քեզ վերայ միայն յուսանք:

3. Եթէ տաս մեզ հարըստութիւն,
Վեր առ մեզնից հըպարտութիւն,
Եւ ուրիշ մեղքեր խապառ.
Զի եթէ մենք հեզ չենք սրտանց,
Այլ անձնատուր ենք մոլութեանց,
Յայնժամ խեղճ ենք և թշուառ.
Ա՜խ, մենք — խեղճ ենք
Այս աշխարհքում.
Տէրն է շնորհում ոսկի զըտուած,
Ըսպեղանի, հանդերձք մաքրուած:

4. Եւ վերջապէս կ՚աղաչենք քեզ,
Դու չար հոգուց խընայիր մեզ.
Ա՜խ, թող մեր սըրտերի մէջ
Եւ մեր տանը հոգիդ իշխէ,
Եւ անդ ամեն ինչ զարդարէ,
Որ կարենանք մինչև վերջ
Ապրել — սիրել
Եւ յաւիտեան
Քո սուրբ անուան փառք տալ այն տեղ
Ամեն սըրբոց հետ միատեղ:

145. ԱՌԱԿ. 31, 10. Առաքինի կինը ո՞վ կարողէ գտնել. Նորա կինը աւելի է քան գոհարները:

1. Տէր, քաղցր աչքով վերից նայիր
Հարսին ու փեսային.
Ներկայութեամբդ այս տեղ գըտնուի՛ր.
Օրհնանք տուր պըսակին:

2. Ով դու գըլուխ եկեղեցոյն,
Այս զոյգի հետ և՛ մենք
Այս կեանքի մէջ քո սուրբ հոգոյն
Ամեն օր կարօտ ենք:

3. Երջանիկ են, երբ միանան
Քո խօսքիդ զօրութեամբ.
Տէ՛ր, պըսակի՛ր հարսն ու փեսան
Անապարդ մաքրութեամբ:

4. Այս կենաց մէջ յօժար կամքով
Եկեղեցուն օգնեն,
Եւ երկնից մէջ քեզ գովելով՝
Երջանկութիւն վայլեն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ:

146. ՍԱՂ. 116, 6. Տէրը պահումէ պարզամիտներին, ես խեղճ եղայ և Նա ապրեցրեց ինձ:

Ք. 28.

1. Ա՛խ, սիրելի Աստուած շնորհաց,
Պահպանի՛ր ինձ և իմ ծնօղաց,
Նոյնպէս և իմ եղբարց և քերց
Պահիր բազկովդ վըտանգից զերծ:

2. Թող ամէն իմ ազգ, ազգական,
Քեզ ունենան միշտ օգնական.
Օգնիր որ ես մեղք չըգործեմ,
Այլ հընազանդ զաւակդ լինեմ։

147. ԵԶԵԿ. 34, 15. Ես եմ արածացնելու իմ ոչխարներին, և ես եմ նորանց մակաղել տալու։

Dölk. 115.

1. Ես Յիսուսի ոչխարն եմ,
Վասն որոյ միշտ ուրախ եմ,
Զի բարի և քաջ հովւիս մօտ
Ես գտնում եմ կանաչ արօտ.
Ինձ սիրում, ճանաչում է,
Անունովս ինձ կանչում է։

2. Նորա ցուպի տակ նոյնպէս
Ներս ու դուրս եմ անում ես.
Երբ ծարաւ եմ տեղում անջուր,
Տանում է ինձ դէպի աղբիւր.
Պատրաստում է ինձ սեղան
Թըշնամեացս դէմ յանդիման։

3. Զըր խայտա՞մ, ով իմ Տէրըս,
Ես երջանիկ գառնուկըս,
Որ յետ քաղցրիկ այս օրերից
Պիտի տարուեմ հրեշտակներից
Հովուիս բազկին, ծոցին մէջ,
Ամէն, այո, բախտս է մեծ։

ԽԱՉ ԵՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ։

148. ՍԱՂ. 27, 1. Տէրն է իմ լոյսը և իմ փրկութիւնը, ես ումի՞ց պիտի վախենամ. Տէրն է իմ կեանքի զօրութիւն, ես ումի՞ց պիտի սարսափեմ։

P. 280.

1. Ախ, վայել չէ՛ ինձ վըշտանալ,
Դեռ ունիմ — Քրիստոս իմ.
Ոչ ոքի թոյլ չի տալ
Իմ երկինքը ինձնից խըլել.
Ինձ համար — խոստացար,
Ով Տէ՛ր, տեղ պատրաստել։

2. Գոյք և պատիւ, կեանք և հոգի
Իմը չէ — Տէրինն է.
Նորանից ըստացել,
Նորան էլ պիտ կըրկին դարձնեմ,
Վեր առ, Տէր, — ես քո սէր
Յաւիտեան կըգովեմ։

3. Թէ ուղարկէ Նա ինձ մի խաչ,
Պատուհաս — գայ վերաս,
Եւ քաշեմ խոր հառաչ,
Յայնժամ ցաւ տուողն տայ դարման.
Նա իմ ցաւ — գիտէ լաւ,
Ինձ կ՚օգնէ յաւիտեան։

4. Չէ՞ որ Նա ինձ լաւ օրերում
Սէր ցոյց տայ — անխընայ.
Արդ ինչո՞ւ եմ տըրտում.
Բարի Աստուած և գըթառատ,
Երբէք Դու — չես տալու
Մոռացման մեր սուրբ դատ:

5. Մահըն էլ չէ մեզ ըսպանել,
Այլ մեր անձ — նեղութեանց
Կարէ շնորհքով յաղթել.
Եւ պիտ մահուան ձորով գընայ,
Որ ուրախ — և անվախ
Երկինս հանգըստանայ:

6. Կեանքի հաճոյքն ի՞նչ կարէ տալ,
Մի բուռն հող — չէ՛ կարող
Մինչև վերջ դիմանալ.
Այնտեղ, այնտեղ պիտի տայ մեզ
Գանձ ազնիւ — մեր Հովիւ.
Նա սիրէ ինձ և քեզ:

7. Բարի Հովիւ, Աղբիւր կենաց,
Դու իմն ես — քոնն եմ ես,
Անբաժան միացած.
Այո, քոնն եմ, զի դու քո կեանք
Ես տուած — Տէր գըթած,
Վասն մեր որպէս փըրկանք:

8. Տէ՛ր, դու իմն ես, քեզ սիրումեմ.
Տէր Յիսուս — եղկելոյս
Օգնիր, որ քեզ պաշտեմ.
Ե՞րբ կըհասնեմ, Տէ՛ր իմ, այնտեղ,
Որ քեզ հետ, — ես յաւէտ
Բընակուեմ միատեղ:

149. ՍԱՂ. 62,7. Աստուծոյ մօտ է իմ Փրկութիւնը, իմ ապաւէնը, ես չեմ շարժուել.

P. 143.

1. Ով որ Աստծուն է թողնում իշխել
Եւ Նորան է միշտ յոյս կապում,
Նա կարող է հանգիստ կեանք վարել
Նեղութեանց և սև օրերում.
Ով որ բարձրեալ Աստծուն յուսայ,
Նա չէ շինում աւազի վրայ:

2. Ի՞նչ կարեն օգնել մեզ ծանր հոգսեր,
Ի՞նչ օգուտ կայ ախ ու վախից.
Ի՞նչ կ'օգնէ մեզ, երբ առաւօտներ
Հառաչում ենք սըրտի ցաւից.
Մենք մեր խաչը ծանրացնում ենք,
Երբ Աստծոյ դէմ տըրտընջում ենք:

3. Թող մարդս խաղաղ ու հանգիստ ապրէ,
Իւր վիճակով նա գոհ լինի,
Ինչ որ Աստուած ինքն բարեհաճէ,
Պիտի անշուշտ իրագործուի.
Նա որ ընտրեց մեզ իւր որդիք,
Նա գիտէ մեր ամեն կարիք:

4. Նա ուրախութեան յարմար ժամերն
Բարութեամբ է նախագծած.
Թող հաւատարիմ մընանք առ Տէրն,
Նա մեզ երբէք սուտ չէ խօսած.
Նա գալիս է անակընկալ,
Չէ՛ խընայում մեզ շընորհք տալ:

5. Յիշիր, որ նեղութեանց տապի մէջ
Չես մոռացուել Աստուածանից.
Դու միայն Աստուծոյ գոգին մէջ
Կ'ազատուես քո շատ ցաւերից.
Վարումէ ժամն ու ժամանակ,
Եւ տայ կեանքին իւր նըպատակ:

6. Աստծոյ ձեռքում հեշտ է ամէն բան,
Անկարելի չէ բարձրելոյն.
Նրանով հարուստներն աղքատանան,
Աղքատք գըտնեն հարըստութիւն.
Միշտ հըրաշքներ Նա գործում է,
Բարձրացնում և ցածրացնում է:

7. Աղօթի՛ր, գընա Աստծոյ ճամբով,
Ինչ որ ունիս լաւ գործածի՛ր.
Բաւականացի՛ր Աստծոյ շնորհքով
Եւ Նորանով միշտ նորոգուի՛ր.
Ով որ Աստծոյն է լոյս կապում,
Ամօթալի նա չէ՛ մընում:

150. ԵՐԵՄ. 17, 17. Իմ ապաւէնը դու ես չար օրը։

P. 183.

1. Ամէն ինչ է Աստծոյ կամքով,
Նրա օրհնութեամբ և շընորհքով.
Ամէն բարիք է Նրանից.
Ով որ Աստծուն է լոյս կապում,
Նա անվընաս է միշտ մընում,
Չէ՛ վըհատում ցաւերից:

2. Մինչ ցայժըմ ինձ կերակրած է,
Մեծ շընորհքներ ինձ արած է.
Նա ինքն իմն է յաւիտեան.
Նա սիրումէ ինձ մեծապէս
Եւ վարւումէ ճըշմարտապէս.
Նա է ինձ միշտ օգնական:

3. Մարդիկ ունին անթիւ տանջանք,
Երբ հոգսերով վարումեն կեանք
Եւ կամքով են անհաստատ.
Իսկ ես կամիմ միայն ջանալ,
Տիրոջ գոգում հանգըստանալ.
Երկրում ի՞նչ կայ հոգսից զատ:

4. Յոյսն իմ սիրտը կազդուրումէ,
Ամէն ձեռնարկս յաջողում է
Ըստ հաճութեան Աստուծոյ.
Անձ և հոգի ու ինչ ունիմ
Աստծուն միայն յանձնել կամիմ.
Այսպէս կ'ապրիմ ես միշտ գոհ:

5. Նա հաճումէ ըստ իւր կամաց
Ականջ դընել իմ խընդրանաց,
Բայց ամեն ինչ իւր ժամին.
Ոչինչ չ'ունիմ ես կարգադրել,
Նա իւր կամքով կամի վարուել.
Ծառայ եմ իւր առաջին։

6. Ինչքան երկար կեանք ունենամ,
Իւր կամքին դէմ չը պիտ կենամ.
Յանձնուումեմ այժմից իրան.
Այստեղ ամեն բան է խախուտ.
Երկրային ինչք կորչումեն շուտ,
Որպէս հողմ կ'անհետանան։

151. *ՍԱՂ. 37, 5. Տիրոջը յանձնիր քո ճանապարհը և նորան յուսացիր, և նա կկատարէ։*

P. 239.

1. Յանձնիր, ով մարդ, քո ուղին
Եւ ինչ սիրտդ նեղումէ,
Նրա հայրական խընամքին,
Որ երկինքն վարում է.
Ամպին, օդին և քամուն
Նա տալիս է ընթացք.
Եւ կենաց ճամբումն սահուն
Տայ քեզ հաստատ գընացք։

2. Աստուծուն ապաւինիր
Քո կեանքիդ ընթացքում.
Այս աշխարհքում դիմացիր,
Նա ինքն է քեզ վարում.

Քըննենք Աստծոյ գործերը,
Եւ ըստ այնըմ վարուենք,
Տանենք Նրան մեր հոգսերը
Եւ ջերմ աղօթք անենք։

3. Ամեն բանի ելք ունիս,
Գիտես ամեն միջոց.
Քո գործն է միշտ օրհնել զիս,
Գընացքդ է հուր և բոց.
Ո՞վ կարէ քեզ արգիլել
Կամ խափանել գործք քո.
Ինչ օգտակար ես դըտել,
Պիտ ցոյց տաս որդոց քո։

4. Եւ թէ մարդ և սատանայ
Սաստիկ հակառակեն,
Աստուած յետ չը պիտ դառնայ,
Թշնամիք կը յաղթուեն.
Այո՛, Նա իւր ուզածը
Պիտի գըլուխ բերէ.
Իզուր է մեր կասկածը,
Նա պիտի յաջողէ։

5. Երանի քեզ, ո՛վ որդի,
Որ խոնարհուես քո հօր.
Դու պիտի դալար դափնի
Եւ թագ կըրես այն օր.
Արմաւենու ոստ Տէրը
Կը դընէ աջ ձեռքիդ
Եւ ուրախ սաղմոսները
Երկընքում երգես պիտ։

6. Ա՜խ, վերջ տուր, ով Տէր, վերջ տուր
Մեր ամէն վըշտերին.
Թող մեր կեանքն չ՚անցնէ ի զուր,
Ույժ տուր մեր թոյլ սըրտին.
Թող քո ձեռքին տակ առոյգ
Եւ զուարթ ընթանանք.
Տո՛ւր մեզ լոյս, հաւատք ըստոյգ,
Շիտակ երկինք փութանք:

152. Բ. ԹԷՍՍ. 3, 3. Տէրը հաւատարիմ է, որ կհաստատէ ձեզ և կպահէ այն չարիցը:

P. 230.

1. Տէրն է հաւատարիմ,
Մեզ սըրտագին սիրումէ.
Երբեմն իրաններին
Իւր պատժին ենթարկում է.
Նա կամի իմանալ,
Մեր հաւատքն ո՞ւնի հիմ,
Խաչին կարե՞նք տոկալ.
Տէրն է հաւատարիմ:

2. Տէրն է հաւատարիմ.
Նա օգնում է ինձ տանել
Իւր ինձ տուած խաչը
Եւ անտրտունջ համբերել.
Նորա գաւազանով
Յաճախ ես կը պատժուիս,
Բայց հայր է լի սիրով,
Տէրն է հաւատարիմ:

3. Տէրն է հաւատարիմ.
Գիտէ մեր կարողութիւնն.
Մեզ մեր ուժից աւել
Չէ տանում ի փորձութիւն.
Նրա շըրթունքն խօսացին՝
«Մեղքից փըրկել կամիմ
Իմ Իսրաէլ հօտին».
Տէրն է հաւատարիմ:

4. Տէրն է հաւատարիմ.
Լացից յետ մխիթարէ.
Խաւար գիշերից յետ՝
Թողնում է, որ լոյս փայլէ.
Եւ անցնումէ շուտով
Խաչ և նեղութիւնն իմ.
Ո՛վ անձ, լե՛ր ապահով,
Տէրն է հաւատարիմ:

5. Տէրն է հաւատարիմ.
Զըսպումէ մեր բորբոքում.
Քո հաւատքի ոսկին
Կամի զըտել հալոցում.
Ընդունիր դառն բաժակ
Քո Հօրից մըտերիմ
Եւ կըստանաս պըսակ.
Տէրն է հաւատարիմ:

6. Տէրն է հաւատարիմ.
Հողմերը պիտի լըռեն.
Եղբայր, քո նեղութեանց
Շուտով պիտի վերջ տըրուեն.

Թէ չարչարակից եմ,
Փառակից էլ լինիմ.
Ո՜հ, ինչ երջանիկ եմ,
Տէրն է հաւատարիմ։

153. ՍԱՂ. 42, 12. Աստուծուն յուսացիր, ինչու որ էլ կգոհանամ նորանից, որ իմ երեսի փրկութիւնն և իմ Աստուածն է։

Mel. Harre, meine Seele.

1. Յուսացիր, հոգիս, յուսացիր Աստծուն,
Նրան յանձնիր ամեն ինչ, կըտայ օգնութիւն.
Մի՛ լեր վախկոտ,
Շուտ լոյս առաւօտ
Պիտի ծագէ. ձմեռից յետ կը գայ գարուն.
Երբ փըչէ մըրրիկ
Եւ փչէ քամին,
Կը դիմեմ անառիկ,
Ամուր բերդին։

2. Ցուսացիր, հոգիս, յուսացիր Աստծուն,
Վեր կաց, յանձնուիր իրան, կը մընաս կանգուն.
Մարդս է ունայն,
Տէրն օգնէ միայն.
Աստուածանից մեծ չեն քո ցաւ, նեղութիւն.
Աստուած փըրկումէ
Ինձ նեղ օրում.
Իմ հոգոյն և՛ ինքն է
Նոյնպէս պահում։

154. ՍԱՂ. 18, 7. Իմ նեղութիւնումը կանչեցի դէպի Տէրը, և դէպի իմ Աստուածն աղաղակեցի. Նա լսեց իմ ձայնը իւր տաճարիցը։

P. 85.

1. Նեղութեանց մէջ կանչում եմ, Տէր,
Ջուրք անցնում են գըլխովս ի վեր.
Երբ նեղ օրում եմ ես մենակ,
Ո՜հ, Տէր, լըսի՛ր իմ աղաղակ.
Տէր, օգնի՛ր ինձ։

2. Դու ես երկինքն լայն տարածած
Եւ երկիրը ձեռքովդ պահած.
Դու չես անում ճընճղուկն անտես,
Օգնի՛ր ինձ, զի տըկար եմ ես.
Տէր, օգնի՛ր ինձ։

3. Կինը Թափեց իւղն Թանգագին
Քո ոտաց վըրայ արտասուագին.
Ասա և ինձ, ողորմած Տէր,
Մի և նոյն խօսքն խաղաղաբեր.
Տէր, օգնի՛ր ինձ։

4. Պետրոս մօտ էր՝ ծովը սուզուել,
Թէև Դու մօտ էիր կանգնել.
Բըռնի՛ր իմ ձեռքն, Տէ՛ր, քո ձեռքով,
Սրա ոսոխն իմ ամօթով.
Տէր, օգնի՛ր ինձ։

5. Թող ջրերը, Տէ՛ր, քեզ տեսնեն,
Որ յետ քաշուեն, յետ նահանջեն.
Քեզ եմ կանչում, Տէ՛ր բարերար,
Որ ինձ համար կամաւ մեռար.
Տէր, օգնի՛ր ինձ:

ԽԱՉ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ:

155. *ՀՌՈՎՄ. 8, 31. Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ.*

P. 239.

1. Եթէ մեր կողմն է Աստուած,
Ո՞վ է մեզ հակառակ.
Երբ աղօթեմ անկասկած,
Կ'լռեն հողմ ու կոհակք.
Երբ Փրկչին եմ սեպհական
Եւ Աստծուն սիրելի՝
Ի՞նչ առնել կըկարենան
Խումբք չարեաց ատելի:

2. Արդ գիտեմ ըստոյգ, հաստատ,
Որ Աստուած է հայրըս.
Արեամբ գընեց ինձ ազատ
Անդրանիկ եղբայրըս.
Նա իմ անթիւ մեղքերը
Մաքրեց ինչպէս ձիւնը.
Ինչ էլ տայ ինձ իմ Տէրը,
Օրհնեալ է անունը:

3. Իւր հոգին բընակումէ
Եւ իշխում սըրտիս մէջ.
Դատաստանից փըրկումէ
Եւ վախիս տալիս վերջ.
Փարատումէ իմ վիշտը
Եւ օգնում անդադար.
Եւ Աստուծուն իմ սիրտը
Կանչումէ՝ «Աբբա՛ Հայր»:

4. Երբ ըզգումեմ իմ սըրտում
Փափագներ երկրային,
Հոգին ինքն է հառաչում
Խօսքեր գերմարդկային.
Թէ գերեզման ես իջնեմ
Եւ թէ քաշուին լերինք,
Դարձեալ ես չը վըհատեմ,
Չէ փըլչում իմ երկինք:

5. Հոգին ասումէ հոգւոյս
Այս խօսքերն քաղցրահամ,
Թէ պիտի Տէրն եղկելոյս
Տայ պըսակ անթառամ.
Ո՛չ հրեշտակ, ո՛չ ահ ու դող,
Ոչ խօսք ըսպառնալից
Ինձ բընաւին չեն կարող
Խըլել Փըրկչիս ձեռքից:

6. Իմ սիրտն ներսում ցընծումէ,
Հոգսերն են կարճատեւ.
Միշտ խայտալով երգումէ՝
Տեսնելով լոյս արեւ.

Արեգակն գեղածիծաղ
Փրկիչս ինքն է իրաւ.
Իմ անձն է հանգիստ, խաղաղ,
Դժոխքից փրկուեցաւ։

156. *ՍԱՂ. 6, 2, 2. Իրաւի որ Նա է իմ Վէմը և իմ փրկութիւնը, իմ ապաւէնը, որ խիստ չի շարժուեմ։*

P. 324.

1. Իմ անձը Աստուծով
Խաղաղ է, ապահով.
Տէրն ինձ օգնումէ.
Դա իմ բաւականս է,
Երբ Տէրն օգնականս է.
Նա ինձ տանումէ
Դէպի երկնից օթեւան.
Երբ Յիսուսից եմ անբաժան,
Գոհ եմ և բաւական։

2. Իմ սիրտն կախումն ունի
Քեզնից, հովի՛ւ բարի.
Տուր ինձ միշտ լինել
Քո մօտ ամենուրեք.
Թող թոյլ չտաս երբեք
Ինձ համոզացնել
Հետեւելու աշխարհքին,
Որից շատերն հրապուրուէին,
Այլ, Տէ՛ր, տար ինձ յերկին։

3. Այսպէս ասէ անձն իմ,
Ո՛չ ոքի ես կամիմ
Սիրել Փրկչից զատ.
Նա է իմ բերկրութիւն,
Նա թափեց իւր արիւն,
Որ լինեմ ազատ.
Նա է միայն այն անձը,
Որին տամ ինձ և իմ գանձը
Եւ իմ վառ նախանձը։

4. Աստծուց բարիք խնդրիր,
Հաւատքով ընկղմի՛ր
Հայրական ծոցում.
Ջանա՛ Նորան յուսալ
Եւ քո սիրտն Նորան տալ
Եւ հանգչել Նրանում,
Հանգիստ բղխէ Նրա հոգուց
Եւ Աստծոյ հետ կենակցելուց.
Տէ՛ր, փրկի՛ր թշնամուց։

5. Ամէ՛ն, կատարեալ է,
Ով Նրան յուսացել է,
Նա ճիշտ կիմանայ,
Թէ ինչպէս է Աստուած
Պաշտպան իւր զաւակաց.
Մեծ է Եհովայ։
Եւ նեղութեանց փոխարէն
Յաւիտեան պիտ հանգիստ գտնեն
Եւ միշտ խնդան. ամէն։

157. *ՍԱՂ. 116, 7. Ով իմ անձը, յետ դարձիր դէպի քո հանգստութիւնը, ինչու որ Տէրը բարի արաւ քեզ։*

P. 324.

1. Ով անձ, լե՛ր բաւական.
Տէրից դըրուած սահման
Է միշտ օգտակար.
Արտաքսի՛ր քո սըրտից
Տըրտունջ, ցաւ և կըսկիծ.
Կռուիր քաջաբար.
Թէ վիշտ է քո օրուան հաց,
Հազիւ ժըպտես, դառն է քո լաց,
Տէրն կ'օգնէ, ուրախ կա՛ց։

2. Թէ մըռայլ են ամպերն,
Եւ մարդկային պաղ սէրն
Իսպառ մեռնումէ.
Թէ քեզ վըրայ է հասած
Մի որ և է արկած
Եւ միտքդ ճընշումէ,
Այս խօսքն պահիր անմոռաց՝
Թէ հոգումէ քեզ Տէր Աստուած.
Տէրն կ'օգնէ, ուրախ կա՛ց։

3. Տառապանք և հոգսեր
Չե՛ն կարող մեր գանձեր
Մեզնից կողոպտել.
Եւ շատ դըրդըռւողը
Է աւել տանջւողը.
Ջանա՛ համբերել.

Սըրտիցդ հանիր ցաւ, կասկած,
Դոքա ճընշում են տըկարաց.
Տէրն կ'օգնէ, ուրախ կա՛ց։

4. Երբ հեղեղն վերջանայ,
Ծիածան կ'երևայ,
Նոյնպէս և արև.
Այնպէս էլ լացից յետ՝
Կան ժամեր ցընծաւէտ
Իբր երկնից պարգև.
Մի հոգա՛, ո՛վ դու յոգնած,
Քընած ժամին՝ թէ արթնացած՝
Յաջողէ պիտ Աստուած։

5. Որոնք խաչը տանեն,
Պըսակ պիտի կըրեն,
Եւ յաղթեն մեղքին.
Ով որ համբերող է,
Տիրոջ խոնարհւող է,
Կը յաղթէ չարին.
Ո՛վ հոգիս, անվըրդով կա՛ց,
Ժըպտի՛ր ընդդէմ պատահելեաց,
Յաջողէ պիտ Աստուած։

6. Արդ մընա՛, ով անձն իմ,
Աստծուն հաւատարիմ.
Տուր Նրան քո խոստում.
Մէջ կեանքի և մահու
Իրան եմ վըհուելու.
Նրան եմ ես ձըգտում.

Սրտիս թանգ ես, Տէր գըթած,
Կամիմ ապրել ըստ քո կամաց,
Յաջողէ պիտ Աստուած:

158. *ՍԱՂ. 101, 6. Անմեղ ճանապարհ գնացողը կծառայէ ինձ:*

P. 288.

1. Հաստատ կացի՛ր նեղութենում,
Թող կասկածներ մահաշունչ
Չըսառեցնեն սէրը քեզնում,
Այլ կեանք վարի՛ր անտրտունջ.
Տէրն ինքն էր քեզ շատ անգամ
Օգնելու պատրաստակամ.
Թէ և քո սիրտ յամառեցաւ,
Բայց Նա երբէք չը յոգնեցաւ:

2. Հաստատ կացիր քո հաւատքում,
Թող հաւատդ քո հիմունք
Չըկործանուի սըրտիդ խորքում,
Ամուր պահի՛ր այն խոստմունք,
Որ տուել ես քո Տիրոջ,
Թող չ՚լինի քո «այո»ն ոչ.
Նորէն սուրբ կեանք վարել ջանա՛
Եւ Աստուծուն եղի՛ր ծառայ:

3. Հաստատ կացի՛ր դու քո յոյսում,
Թէ Տէրն էլ չ՚օգնէ իսկոյն,
Ամէն միջոցք են իւր ձեռքում,
Լեցնէ փափագն քո հոգոյն.

Յուսա՛, զի Տէրն այստեղ է,
Սիրտը քո դէմ կբաբախէ.
Յուսա՛ միայն, Աստուած է մօտ,
Նա չի թողնել՝ կըլես ամօթ:

4. Հաստատ կացի՛ր դու քո սիրում,
Որով սիրես քո Փըրկչին.
Թէ ընկերդ էլ է քեզ ատում,
Դու նրան սիրի՛ր սըրտագին.
Տես, քո Փըրկիչն ինչ արեց,
Վասն թըշնամեաց աղօթեց.
Այսպէս եղիր ներողամիտ,
Որ Նա էլ տայ նիրումն մեղքիդ:

5. Օգնի՛ր՝ տանեմ ես իմ խաչը,
Հաւատամ, յուսամ, սիրեմ,
Ամուր կանգնեմ մինչև վերջը,
Որ մըրցանակն վաստակեմ.
Մինթէ չա՞րժէ խաչ կըրել,
Երբ յոյս կայ փառք ժառանգել.
Ես նուիրում եմ ինձ Նորան
Եւ չե՛մ կասկածում յաղթութեան:

159. *ՍԱՂ. 43, 5. Ինչո՞ւ ես տրտում, ով իմ անձը, և ինչո՞ւ ես շփոթւած, Աստուծոյն յուսացիր:*

P. 79.

1. Ինչո՞ւ տըրտմած ես, ով հոգիս,
Եւ մընացել հոգս քաշելիս.
Վասն գանձին աշխա՞րհքիս.
Յուսա՛ Տէրին, Նա չէ ի նինջ,
Ինքն ըստեղծեց ամենայն ինչ:

2. Նա քեզ թողնել չէ՛ կամենում,
Գիտէ՛ ինչ է քեզ պակասում,
Նորան է պատկանում
Երկինք, երկիր. Նա է իմ Հայր
Եւ նեղութեանց մէջ հոգատար:

3. Դու մեր Հայրն ես և մեր Աստուած,
Որդկանցդ սիրես դու անմոռաց,
Մի սիրտ ունիս գըթած,
Ես մի թշուառ հողածին եմ,
Մի ըսփոփանք աստ չըգիտեմ:

4. Հարուստք իրանց կայքին յուսան,
Բայց դու ես, Տէր, իմ ապաստան.
Թող մարդիկ վըրաս խնդան,
Ըստոյգ գիտեմ, ով քեզ յուսայ՝
Կարօտութիւն պիտ չ՚ունենայ:

5. Աշխարքի փառքն ես կ՚ուրանամ,
Որ երկնային գանձն ըստանամ.
Քեզ Փըրկչիդ կը յուսամ.
Տէ՛ր, դառն մահուամբ ես ինձ գընել
Եւ երկնային փառք վաստակել:

6. Գոհանում եմ, Աստծոյ որդին,
Որ ինձ տուիր պատգամ քոյին
Բանիւդ Աստուածային.
Տուր իմ մըտքին հաստատութիւն,
Որ ժառանգեմ երանութիւն:

ՄԱՀ ԵՒ ԹԱՂՈՒՄՆ:

160. *ՍԱՂ. 146, 4. Մարդու հոգին դուրս կգայ, նա դէպի իւր հողը կը դառնայ:*

P. 355.

1. Ալէլուիա՛, ամէն, ամէն.
Հանգչիր այստեղ քո ճանապարհէն
Երկնից, երկրի Տիրոջ անուամբ.
Տեա՛, հասել ես կեանքիդ վերջին,
Տէրն իւր ձեռքով տանէ քո հոգին
Դէպի երկինք մեծ զօրութեամբ.
Ա՜խ, ի՜նչ երջանիկ ես,
Որ հիմայ կը գովես
Յիսուս Փըրկչին
Ազատիչին,
Վարձատրողին.
Քո փափագին արդ հասել ես:

161. *ՅԱՅՏ. 5, 5. Լաց մի լինիր, ահա յաղթեց առիւծը, որ Յուդայի ցեղիցն է՝ Դաւթի արմատնը:*

P. 161.

1. Արդ փորեցէք գերեզման,
Ես յոգնած եմ ճանապարհից.
Հասել է ժամն բաժանման.
Խաղաղ պատգամ հասաւ յերկնից,
Քաղցըր հանգիստն ակնարկէ,
Եւ սըրբոց մօտ ինձ կանչէ:

2. Արդ փորէք գերեզմանըս,
Կատարուած է իմ ընթացքը.
Ջրդում իմ գաւազանըս,
Եւ թողնում իմ ըստացուածքը.
Արդ յուսով եմ ես պառկում
Իմ հողեղէն անկողնում։

3. Մի լացէք, իմ փրկութիւնն
Եւ իմ Փրկիչն ես գտել եմ,
Իւր վէրքերումն կարմրագոյն
Մաս ու բաժինս ըստացել եմ,
Որտեղից արիւն հոսեց
Եւ ինձ մեղքից ազատեց։

4. Մի լացէք, զի նըստած է
Աստծոյ աջ կողմն Յիսուս իմ Տէր.
Եւ իմ յոյսն թեւարկումէ
Հող ու մոխրից յերկինս ի վեր.
Տէրն ասումէ սիրալիր,
Ո՛վ որդեակ, լաց մի լինի՛ր։

162. Ա. ԿՈՐՆ. 15, 43. Սերմանումէ անարգութիւնով, և յարութիւն առնէ զօրութիւնով։

P. 37.

1. Արդ թողէք այս մարմինն թաղենք,
Եւ մենք երբէք չի երկմըտենք,
Թէ վերջին օրն նա կը յառնէ
Եւ ոսկեղէն թագ կը կըրէ։

2. Մարմինն հող էր և հող դառնայ,
Իսկ հոգին վեր կը սըլանայ.
Երբ փըչուի փողն Աստուածային,
Յառնէ հողից պիտ այս մարմին։

3. Արդ տանք հրաժեշտ հանգուցելոյն,
Եւ ամեն մէկն գընայ իւր տունն.
Մենք էլ ջանանք պատրաստ լինել,
Զի մեզ համար էլ կայ մեռնել։

4. Թող օգնէ մեզ Քրիստոս Յիսուս,
Որ ինքն է մեր ամենքիս յոյս.
Արեամբ փըրկեց մեզ դըժոխքից,
Փառք տանք իրան սըրտի խորքից։

ՄԱՀ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ։

163. ԵԲՐ. 9, 27. Մարդկանց համար սահմանուած է մէկ անգամ մեռնել և նորանից յետոյ դատաստան։

1. Հարկ է մեռնել, պիտի մեռնիմ.
Բայց կ՚աղաչեմ, ով Աստուած իմ,
Մահիցս առաջ շընորհէք անել
Եւ այս խընդիրքն սիրով լսել։

2. Պարգեւի՛ր ինձ, կ՚աղերսեմ, Տէ՛ր,
Հաւատ, յոյս և երկնային սէր,
Թող ուզածիդ պէս կեանք վարեմ,
Որ երջանիկ մահուամբ մեռնեմ։

3. Մահուան ժամում ինձ մօտ եղի՛ր,
Զօրեղ բազուկդ գըլխիս տակ դի՛ր·
Վերջին ցաւերս թեթեւացո՛ւր,
Նոյնպէս ինձ մի խաղաղ մահ տուր։

4. Իմ հաւատս, Տէ՛ր, միշտ կենդանի
Պահի՛ր, մինչեւ շունչըս կըտրուի·
Եւ թող հոգիս այնտեղ գընայ,
Ուր հաւատքի էլ պէտք չը կայ։

164. Ա. ԿՈՐ. 15, 55. Ով մահ, ո՞ւր է քո խայթոցը. դժոխք, ո՞ւր է քո յաղթութիւնը։

1. Ինչո՞ւ երկիւղ մենք ունենանք,
Երբ որ մահուան կը մօտենանք·
Չէ՞ որ խայթոցն դառը մահուան
Յիսուս հերքեց խաչի վերան։

2. Չէ՞ որ մահն է միակ միջոց,
Որով վերջ է տրուում ցաւոց,
Եւ փըրկում է խաւար ձորից,
Ուր տանջուումենք ծընած օրից։

3. Չէ՞ որ մահն է ելքը միակ,
Որով կարենք լինել տեղեակ
Այն սուրբ եւ մեծ խորհուրդներուն,
Որ աստ ծածուկ են ամենուն։

4. Չէ՞ որ միայն մահով պիտի
Հաւատացեալն հաւասարի
Հրեշտակաց հետ անմահութեամբ,
Երջանկութեամբ եւ զօրութեամբ։

5. Մահուան երկիւղն, Տէ՛ր, փարատի՛ր,
Եւ մեր սըրտերն Դու հաստատի՛ր·
Օրհնի՛ր մեզ, որ միշտ քաջ լինենք,
Եւ մահըն որպէս կեանք սեպենք։

165. ՍԱՂ. 126, 1. Երբոր Տէրը Սիոնի գերութիւնը դարձնէ, երազ տեսնողների պէս կլինինք։

1. Մահուան գալուն ինչո՞ւ ցաւենք
Եւ ձայնից սարսափենք·
Փըրկիչն ինքն է որ մեզ ձայնէ
Եւ մեզ իւր մօտ կանչէ։

2. Եւ մենք պիտի ննջենք շուտով,
Եւ շուտ անցնենք գետով·
Մեր ժամերը շուտով կ՚անցնին,
Որ շուտ տեսնենք Փըրկչին։

3. Ինչու մեռեալն, երբ հողին տանք,
Գերեզմանից սոսկանք·
Չէ՞ որ Տէրը հող իջնելուց,
Գերեզմանն քաղցրացրուց։

4. Օրհնեալ է սըրբոց գերեզման,
Կակուղ հանգըստարան·
Ուր օրհնեալ Տէրըն ինքն հանգչի,
Ծառան էլ անդ ննջի։

5. Ինքն յարութիւն անդից առաւ,
Կենաց ճամբան բացաւ·
Եւ մենք անդից պիտի ելնենք
Եւ աջ կողմումն կանգնենք։

ՄԱՀ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆ։

166. ԵԲՐ. 4, 1. Վախենանք, մի գուցէ երբէք նորա հանգստի մէջ մտնելու աւետիքը մնալիս, ձեզանից մէկը պակասած գտնուի։

1. Ըստոյգ է, որ ի ժամ ուղիղ
Կը գայ Աստուծոյ Որդին,
Իւր մեծ փառքով լուսաշաւիղ
Դատելու չարն ու բարին.
Շատ շըրթունքներ չը պիտ ժըպտեն,
Երբ ըստեղծուածք հուրով փոխուեն,
Ինչպէս Աստուած ասումէ։

2. Պիտի լսուեն փողի հընչիւն
Երկրիս ամեն ծայրերում.
Եւ նրանք առնեն պիտ յարութիւն,
Որ նընջեն գերեզմանում.
Իսկ դեռ այստեղ ապրողները
Կը նորոգուին, ասէ Տէրը,
Նրան ընդ առաջ ելնելու։

3. Շուտով գըրքերն բացուեն պիտի,
Ուր այն գործքերն են գրուած,
Որ մանկահաս և ծերունի
Այս կեանքումն են կատարած.
Յայնժամ պիտի լսեն նորանք,
Ինչ գործել են այստեղ իրանք՝
Այս երկրային կեանքումը։

4. Ո՜հ, վա՜յ նորան, որ մերժել էր
Աստծոյ խօսքը լսելու.
Եւ իւր կեանքում որոշել էր
Հարստութիւնը դիզելու.
Նա չը պիտի կանգուն մընայ,
Այլ սատանի հետ հեռանայ
Դըժոխքի կըրակի մէջ։

5. Օգնիր ինձ, ով Յիսուս Քրիստոս,
Ի սէր Քո սուրբ հինգ վիրաց.
Հաճիր գըրել մեծ բարեխօս
Իմ անունս գըրքումն կենաց.
Տուր ժառանգեմ տուն երկնային,
Ընտրեալների հետ միասին,
Մեծ դատաւոր, շուտով եկ։

ՄԱՀ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

167. ԵԲՐ. 4, 11. Ջանանք այն հանգստի մէջ մտնելու։

1. Ո՞ւր կարեմ գտնել հայրենիք և հանգիստ,
Ո՞վ կը ծածկէ իմ անձն իւր թեւերովն միշտ.
Արդեօ՞ք այս աշխարհքը տայ մեզ մի ազատ տեղ,
Որ փորձանքից ազատուած՝ կեանք վարենք անմեղ.
Ոչ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, աստ չէ բընաւ.
Մեր հայրենիքն է լոյս աշխարհքումն իրաւ։

2. Մի ընտրիր այս երկիրն որպէս հայրենիք,
Այլ փընտռիր քաղաքն, ուր են երանելիք,

Այն վերին Երուսաղէմում ոսկուց շինուած,
Այս է Հօրս հայրենիքն հոխ զարդարուած.
Այո՛, այո՛, այս է մեր տուն.
Հանգստեան տեղ և հայրենիք մեր հոգուն։

3. Ի՜նչ երջանիկ հանգիստ կայ այնտեղ լոյսում,
Մահ, մեղք և ցաւ այնտեղ բնաւ չ'են ըզգում.
Դասք հրեշտակաց նուագեն քաղցըր ձայնով,
Հրճուի անձն իմ նորա երգեցողութիւնով.
Հանգիստ, հանգիստ, հանգիստ անդին,
Կայ միջնորդիս գոգում. արդ փութամ յ'երկին։

168. *ՅՈՎՀ. 12, 21. Տէր, կամենում ենք Յիսուսին տեսնել։*

1. Թողէք գնամ, թողէք գնամ,
Յիսուսին տեսնել ցանկամ.
Ո՜հ, իմ անձն է լի փափագով,
Որ փաթաթուեմ իւր ոտքերով,
Եւ գահին շուրջը մնամ։

2. Քաղցըր լոյս, քաղցըր լոյս,
Ծեղքէ՛ր ամպերն, տուր ինձ յոյս.
Ե՞րբ արժանի պիտի լինեմ,
Ամեն սըրբոց հետ ես տեսնեմ
Քո երեսը, ով Յիսուս։

3. Ի՜նչ սիրուն, ի՜նչ սիրուն,
Հրեշտակաց ձայնի հընչիւն.
Ախ թէ թևեր ունենայի,
Լեռ ու ձորի վրայ թըռչէի
Դէպ Սիօնի բարձրութիւն։

4. Ինչ կլինի, ինչ կլինի,
Երբ իմ անձն Սաղէմ մըտնի.
Ոսկէկառոյց փողոցները
Պիտի կոխեն իմ ոտքերը.
Այս ի՜նչ փառք է պանծալի։

5. Ով դըրախտ, ով դըրախտ,
Քաղցր է քո միրգ, բուժէ ախտ.
Կենաց ծառի շուքի տակ
Պիտ երազենք մենք շարունակ.
Տար մեզ, այստեղ ենք դըժբախտ։

169. *ՍԱՂ. 42, 3. Ե՞րբ կգամ և նորա երեսաց առջև կերևիմ։*

1. Ես այստեղ պանդուխտ եմ,
Տունս է երկինք.
Փըրկչին պէս տէր ունեմ,
Տունս է երկինք.
Երկրիս վերայ իրաւ
Վըտանգ կայ, վիշտ և ցաւ.
Բայց վերը փառք անբաւ,
Տունս է երկինք։

2. Ունիմ աստ փորձութիւնս,
Տունս է երկինք.
Կարճ է պանդըխտութիւնս,
Տունս է երկինք.

Մըրրիկն է փայլենի,
Սակայն շուտով կ՚անցնի,
Ես տունս հասնեմ պիտի,
Տունս է երկինք։

3. Ուստի չեմ գանգատւում,
Տունս է երկինք.
Բաժինս չէ այս երկրում,
Տունս է երկինք.
Փրկչին խոստմունքն ունիմ,
Որ իւր աջ կողմն կանգնիմ.
Աթոռի վրայ բազմիմ,
Տունս է երկինք։

170. ԵԲՐ. 10, 34. Ձեր անձերի համար աւելի լաւ և մնայուն ստացուածք ունիք երկնքումը։

1. Հոգիս, վեր կաց, թեւերդ բաց,
Վերին կոչումդ յիշիր.
Այս կենաց բաներն թողած՝
Դէպի երկինք թըռիր.
Արև, լուսին, աստղերը
Եւ աշխարհ շուտ կ՚անցնեն.
Խոյացիր դէպի վերը,
Տեսնելու Յիսուսին։

2. Գետ վազում է դէպի ծով,
Չէ կանգնում բընաւին.
Ծառն բուսնէ Աստծոյ կամքով,
Աճումէ դէպ երկին.

Այսպէս հոգով ծընածը
Փառքով վեր պիտ ելնէ,
Որ տեսնէ իւր Աստուածը
Եւ ապահով հանգչէ։

3. Ի՞նչ է փառք, հարըստութիւն,
Երբ ես 'ի վեր նայեմ.
Փուչ աշխարհք, մարմին, արիւն
Պիտի սըրտանց ատեմ.
Պանդուխտ ենք աստ, սիրելիք,
Տարիներն անցնումեն.
Կը հասնենք մեր հայրենիք
Եւ մեր տունն ոսկեղէն։

4. Պանդուխտներ, դուք մի տըրտմէք,
Ձերն է յաղթանակը.
Տէրը չի սըտել երբէք,
Կըտայ ձեզ պըսակը.
Համբերեցէք, ընկերներ,
Պատերազմի դաշտում.
Աստ թողնելով ձեր ցաւեր,
Պիտ հանգչէք երկընքում։

ՑԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

171. ՍԱՂ. 84, 1. Քանի սիրելի են քո բնակարանները, ով զօրութեանց Տէր։

1. Երուսաղէմ, օրհնեալ տուն մեր,
Ի՜նչքան կարօտ եմ քեզ.
Երբ վերջանան մեր շատ հոգսեր,
Հանգըստեան ժամ կայ մեզ։

2. Գոհարից են պարիսպներըդ,
Քո տեսքն է մեծաճոխ.
Ակունքից են քո դըռներըդ,
Փողոցդ է ոսկեշող:

3. Բուրաստաններդ անմահութեան
Հոտ կը բուրեն մարդկանց,
Ոյք պիտ հասնեն երանութեան
Եւ ժառանգեն նորանց:

4. Երբ երկինքն է գոհարազարդ,
Է՞ր մընամ բացակայ.
Ինչո՞ւ վախես, ով անմիտ մարդ,
Խորհելով՝ թէ մահ կայ:

5. Կարկառիր, Տէ՛ր, քո աջ ձեռքը,
Ինձ քեզ մօտ վեր հանիր.
Ուր չէ յոգնում սուրբ ժողովքը՝
Երգելու բերկրալիր:

6. Տէրը գընաց ստանալու փառք,
Եւ ես նրա մօտ գընամ.
Ինձանից յետ ապրող եղբարք
Շուտ պիտ գան մի անգամ:

7. Ո՛վ բարեկամք, մընաք բարով,
Աստ պիտ միմեանց թողնենք.
Կացէ՛ք ուրախ և անվըրդով.
Աստծով անդ պիտ տեսնուենք:

8. Եւ երկընքում շուտով մեր կեանք
Պիտ փայլէ իբր արև.
Ժամ չի լինել, որ փառք չի տանք
Տիրոջ գահի առջև:

172. ՍԱՂ. 39, 4. Տէ՛ր, ցոյց տուր իմ վերջը և իմ օրերի չափը թէ որքան է. թող գիտենամ թէ քանի անցաւոր եմ ես:

P. 143, 144, 145.

1. Ո՞վ գիտէ, ինչքան մօտ է իմ վերջ,
Կ՚անցնեն ժամերն, կըգայ մահը.
Ո՞վ գիտէ՝ թէ որ մէկ ժամի մէջ
Կարէ գալ վրաս մահուան ցաւը.
Ա՜խ, խընդրումեմ արեամբ Գառան,
Տուր ինձ, ո՛վ Տէր, բարի վախճան:

2. Ժամանակն, ա՜խ, թէ ճիշտ գործ անեմ,
Որ պատրաստուել կարենամ ես,
Եւ ամեն մի դէպքում ես ասեմ,
Վարուիր ինձ հետ՝ ինչպէս կ՚ուզես.
Ա՜խ, խնդրումեմ....

3. Ես գիտեմ Յիսուսի վէրքերում
Ծածկուած եմ ես հանգիստ, խաղաղ.
Եւ ես միշտ գըտնուեմ նեղ ժամում
Մըխիթարանք թէ ուշ, թէ վաղ.
Ա՜խ, խնդրումեմ....

4. Թանգագին է սէրը մեր Փրկչին,
Մինչ մահ կըմնամ հաւատարիմ.
Դընումեմ իմ ձեռքը իւր կողքին՝
Եւ ասում՝ «Տէ՛ր իմ, Աստուած իմ».
Ա՜խ, խնդրումեմ.....

5. Թէ այսօր կամ վաղը վերջըս գայ՝
Փոյթ չէ Յիսուս մօտս է կանգնել.
Ինձ համար մի վըտանգ էլ չըկայ,
Գառան արեամբ եմ զարդարուել.
Ա՜խ, խնդրումեմ....

6. Ես գոհ եմ մինչև ց՚արդ, ո՛վ Աստուած,
Մահուան պատրաստ եմ համարձակ.
Բազուկիդ տակը ես խոնարհուած՝
Քո սուրբ կամքին եմ հըպատակ.
Ա՜խ, խնդրումեմ....

173. ՍԱՂ. 90, 12. Սովըեցրու մեզ, որ այնպէս համարենք մեր օրերը և իմաստուն սիրտ ընդունենք։

Р. 237.

1. Երգ ձօնիր մահուան մասին,
Հրաժեշտի լուրջ երգը.
Այսօր գուցէ վրայ հասնէ
Ներկայ կեանքիդ վերջը.
Եւ արևն մայր մըտնելուց՝
Կեանքիդ լոյսն էլ մարի,
Եւ արեգակն ծագելիս՝
Քո կեանքն էլ չըզարթնի։

2. Չըկայ սըրանից անստոյգ,
Քան կեանք, վիշտ և ցընծում.
Եւ չըկայ այսչափ ըստոյգ,
Քան մահ և բաժանում.
Ամէն մի քայլափոխին
Զատուումեմ այս կեանքէս,
Մեռնումէ սըրտիս բերկրանքն
Եւ սիրտըս էլ նոյնպէս։

3. Ուխտաւորի ցուպն առած,
Գընում ենք գերեզման.
Իշխանաց ցուպն է նոյնպէս
Պանդըխտի գաւազան.
Աշխարհքը ճամբորդի շոր
Տալիս է ամենքին,
Որ հագնենք երկրիս վրայ
Եւ յետ դարձնենք երկրին։

4. Թէ վեր ելնես լեռները
Եւ տեղեր բարձրաբերձ՝
Հողաշէն տապաններից
Չես կարող մընալ զերծ.
Մինթէ այդ փոքրիկ տեղից
Կարես անցնել գընալ.
Երկար ճամբից դու պարտես
Այնտեղ հանգըստանալ։

5. Ուստի մահուան երգն երգիր,
Պանդըխտոց մեղեդին.
Չի օրէցօր քո ճամբան
Մօտ է գերեզմանին.

Զանգակի ձայնի պէս մեղմ
Թող քո այս երգն հընչէ,
Եւ մահուան ու յարութեան
Օրը քեզ յիշեցնէ:

174. ՓԻԼ. 1, 21. Ինձ համար կեանքը Քրիստոս է և մեռնիլը շահ:

P. 9.

1. Քրիստոս ինքն է իմ կեանքը.
Մեռնիլն է վասն իմ շահ.
Նմա զոհուել է իմ ջանքը,
Մահուան դիմեմ վըստահ:

2. Ուստի գընամ բերկրանօք
Եղբօրս մօտ անդրանիկ.
Յաւիտեան պիտի իրօք
Լինեմ ես երջանիկ:

3. Հիմայ յաղթած եմ խաչիս,
Վերջացել է իմ վիշտ.
Եւ սուրբ վիրօքն իմ Փըրկչիս
Երկնից հետ հաշտ եմ միշտ:

4. Երբ իմ ոյժը ըսպառի,
Եւ ընկնեմ շընչասպառ,
Երբ լեզուս չը բարբառի՝
Հառաչանքս, Տէ՛ր, վեր առ:

5. Յիսուս, տուր ինձ մեղմ ննջել
Քո սուրբ թեւերիդ տակ.
Եւ մահից չըվըհատել,
Երբ գայ իմ ժամանակ:

6. Ո՛հ, ի՜նչ մեծ երանութիւն,
Երբ գահիդ շուրջն կանգնեմ,
Հօրն ու որդւոյն և Հոգւոյն
Յաւիտեան ես գովեմ:

175. ՍԱՂ. 31, 15, 16. Դու ես իմ Աստուածը. իմ ժամանակները քո ձեռքումդ են:

P. 205.

1. Տէր, կամքիդ պէս ինձ հետ վարուիր
Թէ կեանքում և թէ մահում.
Ա՜խ, ի կորուստ ինձ մի թողի՛ր,
Միայն քեզ եմ փափագում.
Պահիր ինձ, Տէր, քո հաճութեամբ,
Որ տանեմ խաչս համբերութեամբ.
Քո կամքն է իմաստնագոյն:

2. Խըրատ, սընունդ տուր ինձ, ո՛վ Տէր,
Եւ սէր առ Աւետարան.
Հերքիր ամեն սուտ ուսմունքներ,
Տուր հասնեմ երանութեան.
Թող աստ վարեմ մի կեանք բարի,
Խափանիր գործս ապօրինի
Եւ արա ինձ հաստատուն:

3. Երբ մի անգամ ըստ քո կամաց
Հրաժեշտ տամ աշխարհքին,
Տուր ինձ շնորհք, ո՜վ իմ Աստուած,
Որ խայտալով գամ յերկին.
Յանձնեմ իմ անձն բազկիդ մէջը,
Բարի արա Դու իմ վերջը
Յիսուս Քրիստոսով. ամէն:

176. *ՍԱՂ. 39, 13. Իմ արտասուքին լուռ մի կենար, ինչու որ ես Քո առջև պանդուխտ եմ և հիւր, ինչպէս իմ հայրերը:*

P. 245.

1. Ես հիւր եմ երկրիս վրայ,
Այստեղ չունիմ կայան.
Բայց պայծառ երկնքում կայ
Ինձ համար օթևան.
Այստեղ տարուբերւում եմ,
Իսկ անդ պիտի հանգչիմ,
Շնորհքովդ է, որ ես ապրեմ,
Գործք չ'են հաւատքիս հիմ:

2. Ի՞նչ է ողջ իմ գոյութիւն
Մանուկ հասակիցս վեր,
Չէ՞ որ միշտ էր նեղութիւն,
Որով զըտէր ինձ Տէր.

Ի՜նչքան անգամ ինձ ցընցեց
Փոթորիկն խըստաշունչ,
Եւ առիւծը ինձ սարսեց,
Արձակելով մռունչ:

3. Թէև փոքր ինչ պիտ կենամ
Այս խաւար աշխարհքում.
Բայց քաւ լիցի, որ մընամ
Այս խարխուլ վրանում.
Քայլում եմ այս ճամբումը
Դէպի իմ հայրենիք.
Նա իւր անհուն ցընծումը
Պիտ տայ հոտին փոքրիկ:

4. Հայրենիքս է վերևը,
Ուր կան խումբք հրեշտակաց
Եւ օրհնում են մեր Տէրը
Սըրբոց հետ միացած.
Դէպ այնտեղ եմ իմ փափագ
Այս աշխարհքից ուղղել.
Քաղցըր է իմ նըպատակ,
Այստեղ շատ եմ յոգնել:

5. Այնտեղ կամիմ բընակուիլ,
Բայց ո՛չ թէ որպէս հիւր.
Պսակեալ խըմբին հետ լինիլ,
Որ հազար են և բիւր.
Անդ կամիմ երգել, խայտալ
Քո գործքերիդ վրայօք
Եւ իմ բաժինն ըստանալ.
Անդ հանգիստ կայ իրօք:

177. ՂՈՒԿ. 2, 25. Այս մարդը արդար և Աստուածավախ էր, և սպասում էր Իսրայէլի մխիթարութեանը։

P. 237.

1. Ես ինձ զոհած եմ Աստծուն,
Իմ սիրելի Հօրը.
Կեանքը չէ աստ մընայուն,
Կը գայ մահուան օրը.
Մահն վընաս ինձ չէ՛ տալիս,
Իմ օգուտն է միայն.
Աստծոյ շընորհքն կ'օգնէ զիս,
Որ ես հասնեմ Քանան։

2. Իմ ուղին վերջանում է,
Ի՞նչ փոյթ ես, ո՛վ աշխարհ.
Երկինքն ինձ ակնարկում է,
Ուր փութամ անդադար.
Տէր, հոգսից փըրկիր հոգիս,
Որ հեշտ գընամ ճամբան.
Աստծոյ շընորհքն և այլն......

3. Ա՜խ, մեծ բերկրանք շարունակ
Ինձ պատրաստ է այնտեղ.
Անդ Քրիստոս է արեգակ,
Անդ փառք կայ լուսագեղ.
Աշխարհքն ինձ վընասելիս՝
Աստուած է ինձ պաշտպան.
Աստծոյ շընորհքն և այլն......

4. Տէրն օրհնէ ձեզ, սիրելիք,
Եղբարք և ազգականք.
Ինձ համար լաց մի լինիք,
Չունիմ ո՛չ մի տանջանք.
Մեր նըպատակին անվախ
Դուք այսօրից ձըգտէք
Եւ համարձակ և ուրախ
Իմ յետևից եկէք։

178. ՅԱՅՏ. 12, 11. Նորանք յաղթեցին նորան՝ Գառի արիւնովը և նորա վկայութեան խօսքովը.

P. 37.

1. Փըրկչին վիրաց մէջ նընջում եմ,
Նրանց մէջ մեղքից ես մաքրւում եմ.
Փըրկչին արիւն և սըրբութիւն
Իմ զարդն է և հանդերձ փայլուն։

2. Արեամբ կարեմ երկինք մըտնել,
Եւ Աստուծոյ առջև կանգնել.
Առ Նա գընամ ես ցընծագին,
Զի եմ Աստծոյ ազատ որդին։

3. Ողջոյն քեզ, մա՛հ, որ ինձ տանես
Կենաց երկիրն այս աշխարհքէս.
Փըրկչին արեամբ մաքրուած եմ զուտ,
Վառի՛ր հաւատքս կայծով սիրոյդ։

179. ՍԱՂ. 88, 3, 4. Թող իմ աղօթքը առջեւ գայ. խոնարհեցրու քո ականջը դէպի իմ աղաղակը..... զի կեանքս մօտեցաւ դժոխքին։

P. 357.

1. Մենք շարժւում ենք կեանքի մէջ,
Մահից շրջապատուած.
Տէ՛ր, օգնի՛ր, որ մինչեւ վերջ
Ապրենք ըստ քո կամաց,
Ճշմարիտ եւ մի Աստուած.
Մեր անձն մեղքից խիստ զզուած է,
Որ քեզ, Տէ՛ր, բարկացրած է.
Սուրբ, սուրբ, Տէր Աստուած,
Սուրբ եւ Հզօր Աստուած,
Սուրբ, մարդասէր եւ Փրկիչ գթած.
Դու կենաց Աստուած,
Մեզ մենակ մի թողէ՛ր.
Մահուան ցաւում մեզ օգնի՛ր.
Տէր Աստուած, փրկի՛ր։

2. Մահուան երես առ երես
Եւ դժոխքին հանդէպ
Ո՞վ պիտ այս նեղութենէս
Մեզ ազատէ ըստէպ.
Տէրն կ՚օգնէ մեզ անվրէպ.
Ողորմութիւն քո, Տէ՛ր, ողջայ
Մեր շատ մեղքերի վերայ.
Սուրբ, սուրբ եւ այլն.....
Մի թող՝ վախենք մահից
Եւ դժոխքի վառ բոցից,
Եհովայ, Որէն։

3. Դժոխական տագնապով,
Մեղաց ճնշումի տակ
Ո՞ւր փախչենք եւ դէպի ո՛վ,
Որ կեանք վարենք արձակ.
— Առ քեզ, Տէր, Փրկիչ միակ։
Թափուեց արիւն քո փրկչական,
Եւ սա է մեզ բաւական.
Սուրբ, սուրբ եւ այլն.....
Թող հաւատքից չ՚ընկնենք,
Այլ քեզնով մխիթարուենք
Եւ երկինք մտնենք։

180. ՂՈՒԿ. 10, 20. Ուրախացէք, որ ձեր անունները գրուած են երկնքում։

P. 245.

1. Հրաժեշտ կամիմ քեզ տալ,
Ով աշխարհ մեղսալի.
Քո կեանքը ապականեալ
Էլ չէ ինձ՝ հաճելի.
Իմ տունըս է երկընքում,
Ուր փափագս է ուղղուած.
Իւր ծառայից հատուցում
Կը տայ այնտեղ Աստուած։

2. Վարի՛ր ինձ ըստ քո կամաց,
Ով Դու Աստծոյ Որդին.
Որ ի ժամ տառապանաց
Դիմանայ իմ հոգին.

Սրա ինձ արի և քաջ,
Ամրքիր նեղութիւնս,
Որ մինչ վերջ գընամ առաջ,
Եւ վերջն հասնեմ իմ տունս։

3. Սրտիս խորքում փայլում է
Քո խաչն ու անունը.
Միշտ ինձնում վառ պահում է
Քո փայլունութիւնը.
Նեղութեանց մէջ գըտնուելիս՝
Կ՚ըսփոփէ ինձ Տէրը,
Ինձ տեսնել տալով Փըրկչիս
Արիւնոտ պատկերը։

4. Ծածկիր իմ անձն շընորհքով
Ի մէջ քո բաց կողիդ,
Որ վտանգից փըրկուելով՝
Արժանանայ փառքիդ.
Նա է միայն երջանիկ,
Որ յերկինս տեղ ունի.
Նա պիտ փայլ է իբր աստղիկ՝
Որ Նրան ապաւինի։

5. Տէր, իմ անունս ձեռքովդ
Կենաց գըրքում գըրիր.
Իմ անձն սիրոյ կապովդ
Քո սըրտիդ հետ կապիր.
Թող երկնից համար ծաղկեմ
Եւ պըտուղ տամ առատ,
Եւ յաւիտեան քեզ գովեմ,
Որ սէրդ է խանդակաթ։

181. *ՍԱՂ. 39, 5. Իմ կեանքի ժամանակը ոչինչ պէս է Քո առջև։*

1. Ի՞նչ է մեր կեանքն՝ մի շոգի,
Որ շատ շուտով անյայտ լինի.
Նա է պըլպըլած մի պատրոյգ
Եւ ալեաց մէջ իբրև մակոյկ.
Բայց թեւերդ, հոգիս, թըռի՛ր,
Երջանիկ երկիրն հասի՛ր։

2. Տե՛ս, այն երկիրն լուսափայլ,
Ուր Քրիստոս է ի գահ բազմեալ,
Նա սըրբոց է Թագաւոր.
Նորա համբաւն է փառաւոր.
Բայց թեւերդ, հոգիս, թըռիր, և այլն.—

3. Մեր Փըրկիչն կըռուում յաղթեց,
Սատանան է արդ գահըընկէց.
Յիսուս բացաւ մեզ համար
Դէպ երկինքը հարթ ճանապարհ.
Բայց թեւերդ, հոգիս, թըռի՛ր, և այլն.—

4. Պատած գահիդ բոլորտիք՝
Ուրախ կ՚երգեն փըրկեալ հոգիք.
Ցընծութեամբ երկինքն համայն
Փառք տայ քո սուրբ և մեծ անուան.
Բայց թեւերդ, հոգիս, թըռի՛ր, և այլն.—

182. *ՍԱՂ. 90, 12. Սովորեցրու մեզ, որ այնպէս համարենք մեր օրերը և իմաստուն սիրտ ընդունենք։*

1. Տէ՛ր իմ Յիսուս, մա՛րդ և Աստուա՛ծ,
Ծեծուած, ծաղրուած, նահատակուած.
Դու թափեցիր քո արիւնը
Եւ ձեռք բերիր հաշտութիւնը.
Կաղաչեմ քեզ, ով իմ Փրկիչ,
Եղի՛ր բազում մեղացս քաւիչ։

2. Օգնի՛ր, երբոր մահը հասնի,
Եւ տագնապը մահուան ընկնի,
Երբ երեսիս գոյնը գնայ,
Եւ ականջներըս խլանայ.
Երբոր լեզուս չբարբառէ,
Եւ սիրտս երկիւղից պատառէ։

3. Դու չար հոգիք ինձնից մերժի՛ր,
Քո Հոգով միշտ ինձ մօտ կացի՛ր.
Մինչև հոգիս մարմնից զատուելն
Եւ բազկիդ վրայ երկինք թռչելն,
Մարմինս հանգչէ ի գերեզման,
Մինչև գայ վերջ և դատաստան։

183. *ՂՈՒԿ. 23, 43. Ճշմարիտ ասում եմ քեզ, դու այսօր ինձ հետ դրախտումը կլինիս։*

P. 37.

1. Սիրած մեղքերս կամիմ թողնել,
Կուզեմ Փրկչին սեպհականել.
Պիտի տեսնեմ իւր սուրբ երես
Եւ վայելեմ կեանք լիապէս։

2. Այս կեանքս երազ եմ համարում.
Բայց անդ, ուր իմ անձն է ձգտում,
Երանութիւն կը վայելեմ.
Ո՜հ, ե՞րբ պիտի այն ճաշակեմ։

3. Ո՜հ, ժա՜մ սիրուն, երբ անդ գնամ
Եւ իմ Տիրոջ նման դառնամ,
Այնտեղ մեղքը չ'իշխէ մարմնոյս,
Եւ էլ չըտայ ցաւեր հոգւոյս։

4. Եթէ ննջեմ հողի տակին,
Մինչ լսեմ ձայն վերջի փողին,
Այն ժամանակ կոտրեմ շղթան,
Եւ վեր կ'ելնեմ Փրկչիս նման։

184. *ՅՈՎ. 14, 19. Ես կենդանի եմ, և դուք կենդանի կլինիք։*

P. 161.

1. Յիսուս, իմ վստահութիւն,
Եւ իմ Փրկիչըս ապրումէ.
Ուստի հոգիս լիութիւն
Եւ ընփոփանք միշտ գտնում է.
Մահուան տագնապն էլ բնաւ
Իմ սրտին չէ տալիս ցաւ։

2. Հողից եմ և կըդառնամ
Հողին, որից ըստեղծուել եմ,
Եւ գիտեմ, որ մի անգամ
Այս երկրից պիտի վեր ելնեմ,
Որպէս զի միշտ Նորա մօտ
Լինիմ սիրուն իմ կարօտ։

3. Այս իմ աչքերն, Աստծոյ Գառն,
Քեզ պիտ տեսնեն և ճանաչեն.
Եւ ես ինքս, ոչ թէ օտարն,
Պիտ կըշտանամ քո երեսէն.
Քո սիրովը ինձ վառի՛ր,
Իմ արատներն, Տէ՛ր, մաքրի՛ր։

4. Վըստահ եմ ես յաւիտեան,
Յիսուս՝ կըրէ անդամներըս.
Տեղի մի տաք տըխրութեան,
Մեռնէ՛ք՝ վեր կըկացնէ Տէրըս.
Երբ վերջին փողը փըչուի,
Գերեզմանք բացուեն պիտի։

5. Ծաղր արէք խոռոչներին,
Ծաղր — դըժոխքին, նոյնպէս մահուան,
Զի ընտրեալներն պիտ թըռչին,
Որ օդում Փըրկչին միանան.
Ո՜հ, պինդ պահենք սիրոյ կապ
Եւ հաւատոյ ուխտն անխափ։

185. ՅԱՅՏ. 21, 10, 11. Ինձ ցոյց տուաւ այն մեծ քաղաքը, սուրբ Երուսաղէմը։

P. 270.

1. Երուսաղէմ, դու բարձրաշէն քաղաք,
Ե՞րբ կը լինեմ քեզնում.
Իմ կարօտ սիրտն առ քեզ ունի փափագ,
Խայտումէ ինձանում.

Իմ անձը լեռն ու ձորով,
Տափարակ դաշտերից
Սըլանայ լայն թեւերով
Առ սուրբ քաղաքն երկնից։

2. Այն մեծ օրին, այն երջանիկ ժամուն,
Ա՜խ, ե՞րբ կարժանանամ,
Որ իմ ուրախ անձն իւր բազուկներուն
Յանձնեմ յօժարակամ.
Եւ նա տանէ ինձ երկինք
Եւ խոստացեալ Քանան.
Եւ թըռչին փըրկեալ անձինք
Կառքովն Եղիական։

186. ՄԱՏԹ. 25, 13. Արթուն կացէք, չէք գիտում ոչ օրը, ոչ ժամը։

1. Ո՛վ սուրբեր, կացէ՛ք վըստահ,
Պահէ՛ք ձեր լոյսն պայծառ.
Հասնում է իրիկնապահ
Եւ գիշերուան խաւար.
Պատրաստուած է մեր փեսան,
Զարդարեալ է Տէրը.
Ուստի ժամ է արթնութեան,
Մօտ է կէս գիշերը։

2. Պատրաստէ՛ք ձեր լապտերներ
Եւ լըցրէ՛ք նրանց իւղով.
Արթուն կացէք միշտ ի Տէր,
Պատրաստ հոգով, մարմնով.

Սիօնի պահնորդք գոչեն,
Թէ փեսան կը մօտենայ.
Թող ամէնքը վեր ելնեն,
Երգեն ալէլուիա՛։

3. Ով իմաստուն սուրբ կուսանք,
Ձեր գլուխներն բարձրացրէ՛ք.
Ոհ, ի՜նչ ցնծում, ի՜նչ բերկրանք,
Ուրախ երգեր երգէ՛ք.
Դուռն է արդէն լայն բացուած.
Պատրաստ է հարսանիք.
Ո՛վ հիւրեր, ժամն է հասած,
Փեսան է շատ մօտիկ։

4. Բուրումէն ծաղիկ և բոյր,
Մօտ է արդէն գարուն.
Եւ վարդագոյն վերջալոյս,
Յոյսեր տայ մեզ փայլուն.
Նա չըպիտի ուշացնէ.
Մօտ է փրկութեան ժամ.
Իւր հարսին պիտ պարգևէ
Մի պսակ անթառամ։

5. Ո՛վ Յիսուս, իմ փրկութիւն,
Շուտ եկ, մի ուշացի՛ր.
Ե՛կ, ո՛վ իմ արդարութիւն,
Մեզ վրայ քո լոյսն հեղի՛ր.
Տէ՛ր, վերջ տուր աղաչումենք,
Մեր ցաւին և կռուին.
Մեր աչքն ու գլուխ վերցնումենք
Եւ նայում երկինքին։

187. ՅԱՅՏ. 21, 11. Սուրբ Երուսաղէմը
Աստուծոյ փառքն ունէր։

1. Դու նոր Երուսաղէմ,
Դու գեղեցիկ ես.
Տուն շքեղ և վսեմ,
Տուն շքեղ և վսեմ,
Դու ցանկալի ես։

2. Ճարտարապետն երկնից
Է ամենագէտ.
Դռներն են մարգարտից,
Դռներն են մարգարտից,
Ուր հրեշտակք են դէտ։

3. Թո՛ղ այս քաղաքն, Աստուած,
Քաշէ մեր սրտեր,
Որ սրբուած, պատրաստուած·
Քո հոգով զարդարուած՝
Մենք ելնենք ի վեր։

4. Ի՜նչ յոյսեր աստ ունենք,
Անդ աչքներս տեսնեն.
Թո՛ղ ձեռքերիդ բռնենք,
Եւ հայրենիք տարուենք,
Եհովա՛յ, ամէն։

188. *ՍԱՂ. 90, 4. Հազար տարին քո առջև
ինչպէս իրիկուան օրն է։*

P. 38.

1. Ո՛վ Տէր, դու ես մեզ ապաւէն,
Հաստատուն յոյս, ապար և զէն.
Տիեզերքը դեռ չըստեղծուած՝
Յաւիտենից էիր Աստուած։

2. Դու մարդն փոշի դարձուցանես,
Մարդոց որդիք, դարձէ՛ք, ասես.
Քեզ մօտ տարին հազարաւոր
Է երեկուան նըման մի օր։

3. Նոքա բոլոր անյայտանան,
Երազի պէս անհետանան.
Առաւօտեան ծաղկին, ծըլին,
Բայց իրիկուան շուտ թառամին։

4. Մարդիկ քո ոյժն չեն ճանաչում,
Քեզանից, Տէ՛ր, չեն վախենում.
Մեր օրերի թիւն մեզ յայտնիր,
Յերկնից հանճար մեզ պարգևի՛ր։

5. Յայտնի լինին ծառաներիդ
Գործ քո ձեռաց, փառք երկընքիդ.
Եւ թող լոյս քո դէպ մեզ ծագէ
Ձեռնարկութիւնք մեր յաջողէ։

ՄԱՀ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ).

189. *ՄԱՏ. 18, 10. Այդ փոքրների հրեշտակները
երկնքումը միշտ տեսնումեն իմ Հօր երեսը։*

P. 117.

1. Երբ երկնից փոքր ժառանգներ
Սուրբ կեանքով նընջեն ի Տէր,
Մարդ նոցա չէ ողբում,
Զի նրանց պիտի մեր Հայրը
Տանէ իւր սըրբավայրը.
Այնտեղ չարից են ազատւում։

2. Մըկըրտութեամբ են կանչուած
Եւ Յիսուսին նուիրուած.
«Թողէք նոցա առ իս»
Ասումէ սիրողն մանկանց,
Արքայութիւնն է նորանց.
Ապահով են նոքա մօտիս։

3. Երանի քեզ, ո՛վ մանուկ,
Որ Փըրկիչն է քեզ նեցուկ.
Բարի երթ, ո՛վ մանկիկ,
Գընա հանգիստ կայ յերկին,
Եւ միացիր այն հօտին,
Որ Փըրկչին մօտ է երջանիկ։

190. *ՅՈԲ. 1, 21. Տէրը տուաւ և Տէրը առաւ, Տիրոջ անունը օրհնեալ լինի։*

P. 117.

1. Փառք Աստծոյ, ժամն հասած է,
Ինչպէս Տէրն խոստացած է.
Ինձ երկինք վեր կ'առնի.
Ո՛վ ծնողք, մի՛ ողբացէք,
Այլ Աստուծուն այս ասէք,
Տէ՛ր, քեզ փառք և պատիւ լինի։

2. Կարճ է իմ կեանք երկրային,
Սակայն մի լաւագոյնին
Կը հասնէ հայրն գըթած.
Այնտեղ պիտի չը մեռնեմ,
Եւ էլ երբէք չը նեղուեմ.
Ինձ ուրախ կեանք է խոստացած։

3. Յիսուս օգնումէ սրբոց,
Դադարումեն լաց ու կոծ
Այս արտասուաց ձորում.
Մեզ վաղահաս մի վախճան
Շուտ հասցնէ երանութեան,
Որին մենք միշտ ենք նըկըրտում։

4. Տէրն թըռումէ մեր ժամերն,
Նա բուժում է մեր վէրքերն,
Մարդոց ճանաչումէ.
Առանց իւր թոյլտըւութեան
Մարդիկ մեզ վընաս չըտան.
Մեր բարին նա փափագումէ։

5. Մընաք բարեաւ, ո՛վ ծնողք,
Բարեկամք և ինձ սիրողք,
Փըրկչին հետ ուխտ կապենք,
Որ ապրենք Նորա համար
Եւ ծառայենք անդադար,
Որ վերջին օրն իրար տեսնենք։

ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

191. *ՄԱՏ. 25, 6. Կէս գիշերին աղաղակ եղաւ, թէ ահա փեսան գալիս է, դուրս եկէք նորան դիմաւորելու։*

P. 355.

1. Արթնացէք, գոչումեն վերից
Պահապանք բարձըր դիտարանից.
Արթնացիր, դու Երուսաղէմ,
Կէս գիշերը մօտ կըտեմնեմ.
Նրանք գոչեն ձայնիւ մեծահընչիւն՝
«Ո՞ւր էք դուք, կուսանք իմաստուն.
Փեսան գայ, արթնացէք,
Լապտերներդ վեր առէք՝
Ալէլուիա.
Պատրաստուեցէ՛ք,
Զարդարուեցէք
Եւ Նորան ընդ առաջ ելէ՛ք»։

2. Մեզ արթնութեան հոգի փըչէ՛ր,
Եւ մեր սառած հոգին բորբոքէ՛ր.

Ո՛վ սուրբ Հոգի կենդանութեան,
Մեզ պատրաստէ՛ր ըստ քո խոստման.
Հաւատ, յոյս և սէր վառէ՛ր մեզնում,
Ո՛վ Հայր, օրհնէ՛ր մեզ այս կեանքում.
Տո՛ւր դիմենք երկնային
Գեղեցիկ փեսային.
Ալէլուիա.
Եկէ՛ք, մարդիկ,
Դէպ Հարսանիք
Եւ ժառանգենք մեր Հայրենիք:

ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ:

192. Ա. ԿՈՐ. 15, 53. Պէտք է այս ապականացու հագնէ անապականութիւնը, և այս մահկանացուն հագնէ անմահութիւնը:

P. 106.

1. Յարութիւն, յարութիւն պիտի առնես,
Ո՛վ փոշիս, իւր ժամին.
Աստուած քեզ պիտի
Անվերջ կեանքով պըսակի.
Ալէլուիա, ալէլուիա:

2. Ես սերմնւումեմ կըրկին ծաղկելու,
Հունձքի տէրն է գալու,
Խուրձք պիտի ժողովուեն
Եւ նրանք՝ որ ի Տէր ննջեն. Ալէլուիա...

3. Օ՛ր շնորհակալեաց, օ՛ր բերկրութեան.
Ո՜հ, օ՛ր նուիրական,
Երբ գերեզմանից
Նա ինձ տուն տանէ երկրից: Ալէ....

4. Յիսուս կըգայ՝ դատաստան անել,
Սըրբոց ուրախացնել.
Մարմինք նորոգուած՝
Պիտի փայլեն առ Աստուած: Ալէ....

5. Երանութեան կըլինենք հաղորդ,
Երբոր մեզ մեր միջնորդ
Տանէ դէպ երկինք,
Ուր պիտի ցընծան մեր անձինք: Ալէ....

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ:

193. ՅԱՅՏ. 7, 9, 17. Եւ սորանցից յետոյ տեսայ, և ահա մի շատ ժողովուրդ, որ ո՛չ ոք չէր կարող համարել.... կանգնած աթոռի առջև:

P. 174.

1. Ո՞վքեր են, որ գահիդ առջև
Կանգնած են մեծ բազմութեամբ,
Թագ գըլխներին և թև ի թև,
Հանդերձք են ներկուած արեամբ,
Երգումեն՝ ալէլուիա,
Մորթուած գառին՝ ովսաննա:

2. Ո՞վքեր են, որ կրեն ոստեր
Որպէս նշան յաղթութեան,
Եւ ունին ոսկէ քնարներ,
Եւ ձայն ունին աննըման.
Ի՞նչ է այս մեծ ակումբը,
Ո՞ւստի կուգայ այս խումբը:

3. Սրանք սատանի դէմ են կռուած
Աստուծոյ փառքին համար,
Եւ մեղքին ու մահին յաղթած
Փրկչին արեամբ կենարար.
Սոքա էին ցաւի մէջ,
Արդ կռուին տըրուած է վերջ:

4. Սոքա ինչպէս որ եղջերուն
Փափագումէ վտակին՝
Հառաչել են Տէր Աստուծուն՝
Տանել նրանց կենաց ջրին.
Հիմայ էլ չըծարաւեն,
Զի մեծ հովուին գտել են:

5. Եւ ես էլ եմ, ո՛վ Տէր Յիսուս,
Ձեռքերըս առ քեզ մեկնում.
Լե՛ր օգնական ինձ խըղճալըս.
Քանի ապրեմ այս երկրում,
Թող քո սիրով վառ ի վառ
Տեսնեմ երես քո պայծառ:

194. ԳՈՐԾ. 2, 26. *Իմ սիրտն ուրախ եղաւ, և լեզուս ցնծացաւ, և իմ մարմինն էլ յուսով կբնակէ:*

P. 288.

1. Ուրախացիր, ո՛վ իմ անձը,
Եւ մոռացիր քո ցաւեր,
Տէր Յիսուս՝ քո հոգոյդ գանձը,
Զորից քեզ կանչումէ վեր.
Նեղութիւնից և ցաւից
Դիմես դէպ ցընծումն երկնից.
Մարդկային աչք դեռ չէ՛ տեսած,
Ինչ որ Տէրն է քեզ խոստացած:

2. Ինչ որ փուշն է վարդի համար,
Այնպէս վըշտերն մեզ վրայ գան.
Ինչպէս ալիքն է անդադար
Յուզում ծովը անսահման՝
Այնպէս էլ անթիւ արկածք
Խանգարումեն մեր գընացք.
Մեղք, սատանայ, աշխարհք, դըժոխք
Ցաւացնումեն մեր սըրտի խորք:

3. Ուստի Յիսո՛ւս, ա՛ստղ լուսատու,
Որ շողշողես յաւիտեան,
Մի լեր ինձնից երբէք հեռու,
Դիմումեմ քո գըթութեան.
Արա՛ ինձ հոգով ուրախ,
Որ գամ քեզ մօտ ես անվախ.
Իմ աչքն է կոյր, խուլ իմ ականջ,
Թող իմ նեցուկն լինի քո լանջ:

4. Ուրախացիր, ո՛վ իմ անձը,
Եւ մոռացիր քո ցաւեր.
Տէր Յիսուս՝ քո հոգւոյդ գանձը,
Քեզ ձորից կանչում է վեր,
Որ լինես Հօրը ժառանգ,
Տեղ հասնելով անվըտանգ՝
Հրեշտակաց հետ կ՚ուրախանաս,
Եւ երեսիցն կըկըշտանաս:

195. ՂՈՒԿ. 14, 27. Ով որ իր խաչը վեր չառնէ և իմ ետևից գայ, նա չէ կարող իմ աշակերտը լինել:

1. Միայն Յիսուս խաչը տանի,
Եւ մարդս ազատ մընայ.
Ո՛չ, մէկ խաչ կայ ամեն մէկին,
Եւ ինձ էլ մի խաչ կայ:

2. Ի՞նչ երջանիկ վերի սուրբերն,
Որ աստ տըրտմում էին.
Բայց անդ անխառն սէր վայելեն
Եւ ցընծում լիովին:

3. Օրհնեալ իմ խաչս տանել կամիմ
Մինչև իմ մահուան ժամ,
Եւ ես կելնեմ պըսակս կ՚առնեմ,
Մի պըսակ անթառամ:

196. ԵՍ. 59, 1. Տիրոջ ձեռքը չէ կարճացել փրկելուց:

D.

1. Ո՛վ Տէր, բռնիր իմ ձեռքից
Մինչ իմ վախճան
Եւ վարիր ինձ այս օրից
Մինչ յաւիտեան.
Մենակ չեմ կարող առնել
Մի քայլ անգամ.
Քեզ հետ կամիմ միշտ լինել,
Թող հետըդ գամ:

2. Տուր զօրութիւն քո շնորհքով
Իմ թոյլ սըրտիս.
Ուրախութեամբ և ցաւով
Դու կըրթիր զիս.
Քո ոտաց տակ թող հանգչէ
Տըկար ոգիդ.
Նա աչքերն խըփած կուզէ
Յենուել ձեռքիդ:

3. Թէ երբէք էլ չըզգամ ես
Քո զօրութիւն.
Նըպատակիս դու կ՚հասցնես
Սիրովդ անհուն.
Ո՛վ Տէր, բռնիր իմ ձեռքից
Մինչ իմ վախճան
Եւ վարիր ինձ այս օրից
Մինչ յաւիտեան:

ՁԱՆԱՁԱՆ։

197. *ՍԱՂ. 54, 4. Աստուած իմ օգնականն է. Տէրը պահպանումէ իմ անձը։*

D.

1. *Պանդըխտութեան իմ օրում*
Սա՛ ես կը հառաչեմ,
Եւ կասեմ ամէն դէպքում,
Տէ՛ր, օգնիր՝ ես քոնն եմ.
Եւ կասեմ ամէն դէպքում,
Տէ՛ր, օգնի՛ր՝ ես քոնն եմ։

2. *Երբ առաւօտն արթնանամ,*
Եւ իրիկունն պառկեմ,
Ես ինձ Նրա ձեռքը կըտամ,
Տէ՛ր, օգնիր՝ ես քոնն եմ.
Ես ինձ Նրա ձեռքը կըտամ,
Տէ՛ր, օգնի՛ր՝ ես քոնն եմ։

3. *Եւ իմ գործին գընալիս՝*
Ես Նորան կ'աղօթեմ,
Խելք տուր ինձ և ոյժ բազկիս.
Տէ՛ր, օգնիր՝ ես քոնն եմ.
Խելք տո՛ւր ինձ և ոյժ բազկիս,
Տէ՛ր, օգնի՛ր ես քոնն եմ։

4. *Երբ մեղքը ինձ ցաւ կըտայ,*
Յայնժամ կը մըտածեմ
Իմ Հաշտարարիս վըրայ,
Տէ՛ր, օգնիր՝ ես քոնն եմ.
Իմ Հաշտարարիս վըրայ՝
Տէ՛ր, օգնի՛ր՝ ես քոնն եմ։

5. *Երբ վրաս գան լաց ու կոծը,*
Եւ արտասուք թափեմ՝
Ինձ տեղ կընտրեմ Նրա ծոցը,
Տէ՛ր, օգնիր՝ ես քոնն եմ.
Ինձ տեղ կընտրեմ Նրա ծոցը,
Տէ՛ր, օգնի՛ր՝ ես քոնն եմ։

6. *Երբ սատանան ինձ նեղէ,*
Եւ աշխարհքն է ընդդէմ՝
Հաւատքով իմ անձն կ'ասէ՝
Տէ՛ր, օգնիր՝ ես քոնն եմ.
Հաւատքով իմ անձն կ'ասէ,
Տէ՛ր, օգնի՛ր՝ ես քոնն եմ։

7. *Եւ իմ վերջին ժամերում*
Ապաստան կըգըտնեմ
Իմ Յիսուսիս վէրքերում.
Նա կ'օգնէ, ես Նրանն եմ.
Իմ Յիսուսիս վէրքերում,
Նա կ'օգնէ, ես Նրանն եմ։

198. ՅԱՅՏ. 2, 10. Հաւատարիմ եղիր մինչ մահ, և կենաց պսակը կըտամ քեզ։

D.

1. Հաւատարիմ կաց մինչ մահ, (կրկնիր)
Ո՛վ անձս, թող քեզ ոչ մի կըսկիծ
Չը հեռացնէ Փրկչի խաչից.
Խաչըդ տար սըրտով վըստահ.
Հաւատարիմ կաց մինչ մահ։

2. Հաւատարիմ կա՛ց մինչ մահ (կրկնիր),
Խարիսխ գըցիր նրա վէրքերում,
Յայնժամ գտնես հանգիստ, ցընծում.
Թէ մահն տայ քեզ սարսափ և ահ՝
Հաւատարիմ կաց մինչ մահ։

3. Հիմայ կամիմ մինչև մահս
Լինել Փրկչիս հաւատարիմ.
Թող խօսքերդ հաստատ մընան,
Որ խօսել է քո սուրբ բերան.
Յիսո՛ւս, օգնի՛ր ինձ մինչ մահս։

199. ՅԱՅՏ. 2, 7. Ով որ յաղթումէ նորան կենաց փայտից ուտել կտամ, որ Աստծոյ դրախտի մէջ է։

1. Ով որ կըյաղթէ՝ պիտի և՛ վայելէ
Աստուծոյ դրախտի մէջ կենաց փայտից.
Նա ցաւից և մահից երբէք չը վախէ՝
Թէ որ պաշտէ Տիրոջն բոլոր սըրտից.

Նա կը ճաշակէ պարգևն երկնային,
Նա միշտ կ՚ընդունի Աստծոյ Հոգին,
Նա միշտ կ՚ընդունի Աստծոյ Հոգին։

2. Ո՛վ Յիսուս, օգնիր ինձ, և տուր որ յաղթեմ.
Թէ և ես կըռուումեմ ընդդէմ մեղաց,
Բայց, ա՜խ, տըկար գոլով՝ յաղթել չը կարեմ,
Երբեմն յաղթուումեմ ուժասպառ եղած.
Դու առաջնորդի՛ր ինձ և միշտ օգնի՛ր,
Երկինքի համար ինձ պատրաստիր,
Երկինքի համար ինձ պատրաստիր։

3. Ո՛վ Յիսուս, օգնիր ինձ, և տուր որ յաղթեմ,
Իմ հաւատքս տըկար է և անկենդան.
Շնորհքիդ ճառագայթով թող լուսաւորուեմ,
Կռուիր, իմ խաւարին, ո՛վ լոյս փրկութեան.
Թակարդ է շարում խաւարի իշխան.
Օգնիր որ դիմանամ նեղութեան,
Օգնիր որ դիմանամ նեղութեան։

200. ՅՈՎ. 1, 29. Ահա Աստուծոյ գառն, որ վեր է առնում աշխարհքի մեղքը։

Z. W. 8.

1. Տե՛ս Աստուծոյ Գառը,
Վեր է առնում
Աշխարհքի մեղքերը
Գողգոթայում.

Ո՜հ սէ՛ր մեծ և անհուն,
Նա հեղեց իւր արիւն,
Որ ինձ տայ փրկութիւն.
Գառն Աստուծոյ։ (3 անգամ)

2. Տե՛ս Աստուծոյ Գառը,
Նա կատարեց.
Զարմանալի սիրով
Մեզ ազատեց.
Ա՜խ, լեր ինձ օգնական,
Որ լինեմ յաւիտեան,
Քո անձնուէր ծառան,
Գառն Աստուծոյ։ (3 անգամ)

3. Տե՛ս Աստուծոյ Գառը,
Նա յաղթել է,
Փառաց աթոռի վրան
Արդ նըստել է.
Քո սէրդ պէտք է պատմեմ,
Քեզ միշտ պիտի երգեմ,
Եւ յաւիտեան գովեմ,
Գառն Աստուծոյ։ (3 անգամ)

ՎԵՐՋ.

ՅԱՆԿ

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԳՈՑ։

	№
Ազնիւ Հոգի, հըրաշափառ	96
Ալէլուիա՜, ամէն, ամէն	160
Ալէլուիա՜, ղի Քրիստոս	76
Ալէլուիա՜, ո՛վ երգիչներ	77
Ա՜խ թէ ինձ	7
Ա՜խ, կայ մեզ մօտ	104
Ա՜խ, սիրելի Աստուած շնորհայ	146
Ա՜խ, վայել չէ ինձ	148
Ա՜խ, Տէր իմ Յիսուս,	142
Ահա մի օր	30
Ամենաստեղծ	15
Ամէն ինչ Աստծոյ կամքով	150
Ամուր բերդ է	102
Այսպէս մի	82
Աշխարհ ամենայն	125
Ապրումէ	75
Աստուած աստ ներկայ է	2
Աստուած իմ	27
Աստուած ողորմած	123
Արդ գովեցէք	10
Արդ թողէք այս մարմին	162
Արդ թողէք՝ առաջ	51
Արդ յայտնուած է	71
Արդ փորեցէք	161
Արթնացէք	191
Բարի Յիսուս, արթուն կաց	34
Բացէք դուռը	36
Բիւր երանի	143

№
Գառն Աստծոյ, անմեղ 55
Գեթսեմանի պարտէզն 56
Գեղեցիկդ Յիսուս 88
Գիտեմ՝ ո՛ւմն եմ հաւատում 129
Գովիր քո Տիրոջ 14
Գովումենք քեզ 78
Գործէք, գործէք 138
Գովումեմ ես 113
Դարձիր կրկին 121
Դու Նոր Երուսաղէմ 187
Եթէ մեր կողմն 155
Եկ, հըզօր Թագաւոր 101
Եկ, ո՜հ, եկ 98
Եկ, սուրբ Հոգի 95
Եղիր ինձ մօտ 20
Եկ այստեղ 169
Ես ինձ զոհած եմ 177
Ես հիւր եմ 176
Ես Յիսուսի ոչխարն եմ 147
Ես քեզ ի՛նչպէս 39
Ես և իմ տունն 144
Երանեալ է 107
Երբ այն խաչին 57
Երբ երկնից 189
Երգ ձօնիր 173
Երկրպագեմ 17
Երուսաղէմ, դու բարձրաշէն 185
Երուսաղէմ, Երուսաղէմ 40
Երուսաղէմ, օրհնեալ 171

№
Զարդարիր քեզ 118
Զարթիր, հոգի 114
Զարթիր, ով սիրտ 26
Զարթիր, սիրտ իմ 73
Ըստոյգ է 166
Թանգագին 109
Թողէք՝ գնամ 168
Թող Սիօնի 111
Ժողովուրդ աղօթասէր 21
Իմ անձը 156
Իմ լեզուն 12
Իմ յետևից 134
Իմ Յիսուսն 86
Իմ Փրկիչն 60
Ի՜նչ ախորժ է 85
Ի՜նչ է մեր կեանք 181
Ինչո՞ւ երկիւղ 164
Ինչո՞ւ տրտմած 159
Ինչ տըխուր էր 132
Լաւ բարեկամ 90
Լուռ գիշեր 42
Լուսինը 29
Խաչի վրայինն 59
Կատարուած է 67
Հայր մեր 23
Հաստատ կացիր 158
Հարկ է մեռնել 163
Հաւատարիմ կա՛ց 198
Հիմայ լուռ են 35

	№
Հոգի՛ս, արթնացի՛ր	69
Հոգիս, վեր կաց	170
Հրաժեշտ	180
Մահուան գալուն	165
Մենք գովումենք քեզ, ով Քրիստոս,	74
Մենք գովումենք քեզ, Տէր Յիսուս,	65
Մենք շարժւումենք	179
Մենք չենք թողնիլ	105
Մէկն է Թագաւորն	135
Միայն Աստծոյն	1
Միայն մէկ բան	92
Միայն Յիսուս խաչը տանի	195
Միայն քեզ եմ	122
Միայն քեզ դէմ	126
Մի գառնուկ	61
Մի հօտ և մի հովւապետ	112
Մեր սրտերը	47
Յանձնիր, ո՛վ մարդ	151
Յառաջ գնա՛	103
Յարութիւն, յարութիւն	192
Յաւիտեան ես քեզ համար	116
Յերկնից իջան	41
Յիսուս, առաջ գնա	87
Յիսուս, դու ես	117
Յիսուս, իմ բերկրութիւն	91
Յիսուս, իմ վստահութիւն	184
Յիսուսն է նշանաբան	50
Յիսուս քեզ ընդունումէ	127
Յոգնած եմ	33
Յուսացիր	153

	№
Նեղութեանց մէջ	154
Շնորհք ընդ մեզ	130
Ո՜հ, կէս օրին	58
Ո՛վ անձ, լեր բաւական	157
Ով անձ իմ	124
Ո՞վ գիտէ	172
Ով գլուխ	54
Ո՛վ դու բերկրալի	46
Ո՛վ դու պանծալի	72
Ով լուծողդ	139
Ով մարդ, ինչո՞ւ	94
Ով մարդ, վշտեր	140
Ով որ Աստծուն	149
Ով որ կ՚յաղթէ	199
Ովսաննայ, Դաւթի Որդին	37
Ով սուրբեր,	186
Ով սուրբ հոգի, լոյս երկնային	97
Ով սուրբ հոգի, Տէր ողորմած	100
Ով Տէր Աստուած, Հայր	115
Ով Տէր, արդար Աստուած	18
Ով Տէր, բռնիր իմ ձեռքից	196
Ով Տէր, դու ես	188
Ով Տէր, ինձ նոր սիրտ	131
Ով Տէր Յիսուս, դու խոստացար	99
Ով Տէր Յիսուս, կեանք	64
Ով Տէր Յիսուս, որ հանգչեցիր	66
Ով Տէր Յիսուս, քո խոր վէրքեր	63
Ով Տէր Յիսուս, օրն անցած է	32
Ով Տէր, ո՜րքան բարի է	106
Ով փեսայ հոգւյս	93

№

Ո՞վքեր են . . . 193
Ով Քրիստոսի օրհնեալ զինուոր . . . 141
Ունայնութիւն ունայնութեանց . . . 1[illegible]6
Ուրախացիր, ով իմ անձը . . . 1[illegible]4
Ո՞ւր է Յիսուս . . . 84
Ո՞ւր կարեմ . . . 167
Պանդխտութեան իմ օրում . . . 197
Սա այն օրն է . . . 43
Սէ՛ր, որ դու . . . 83
Սիրած մեղքերս . . . 18[illegible]
Սիրական Յիսուս . . . [illegible]
Սիրելի Տէր . . . [illegible]
Սիրտ և սիրտ միասին . . . [illegible]
Սիօն ցաւից գանգատուումէ . . . [illegible]
Սուրբ Հրեշտակք . . . [illegible]
Սրտիս խորքից ես կրկին . . . [illegible]
Սրտիս խորքից փառք քեզ . . . [illegible]
Սրտանց սիրեմ . . . [illegible]
Տարին ահա . . . [illegible]
Տարուց տարի . . . [illegible]
Տես Աստուծոյ Գառը . . . [illegible]
Տեսէք չքնաղ . . . [illegible]
Տէր, աղօթքի լսիր . . . [illegible]
Տէր, դու՛ սրտիս . . . [illegible]
Տէր, իմ ապաւէն . . . [illegible]
Տէր իմ Յիսուս . . . [illegible]
Տէր, ինքդ հաճիր . . . [illegible]
Տէր, կամքիդ պէս . . . [illegible]
Տէրն է հաւատարիմ . . . [illegible]
Տէրն է պատրաստել . . . [illegible]

№

Տէր, քաղցր աչքով . . . 145
Տէր, քեզ ողջոյն . . . 53
Տէր, քո խօսքը . . . 108
Տիրոջը երգեցէք . . . 13
Փառք Աստուծոյ՝ ժամն . . . 190
Փառք Աստուծոյ ահա . . . 31
Փառք Աստուծոյ վայելուեց . . . 24
Փառք և պատիւ բարձրեալ . . . 8
Փառք և պատիւ ու զօրութիւն . . . 9
Փ[illegible] յայտնեց . . . 133
[illegible]արիւն և սրբութիւն . . . 128
[illegible]վէրաց մէջ . . . 178
[illegible], որ մենք . . . 79
[illegible]նք երգում . . . 44
[illegible]կամիմ . . . 89
[illegible]մօտ, Յիսուս . . . 81
[illegible] քեզ, Եհովա՛յ . . . 16
[illegible]իստոս է յարեալ . . . 68
[illegible]իստոս ինքն է . . . 174
[illegible]իստոս համբարձաւ . . . 80
[illegible]ոսոս մահուամբ էր կապուած . . . 70
[illegible]իր ինձ քոնը լինել . . . 4
[illegible]հնիր Տիրոջը . . . 11
[illegible]հնիր և պահպանիր . . . 5

0
4
4
3
3
3

3174
00012307
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0012307